

Գ. Բ. ՂԱՐԻԲԶԱՆՑԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ
ԵՎ
ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. Б. ГАРИБДЖАНЯН

В. И. ЛЕНИН
и
АРМЯНСКИЕ ДЕЯТЕЛИ

ВСТРЕЧИ О ПЕРЕПИСКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊՈՍՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Բ. ՂԱՐԻԲՁԱՆՑԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ

ԵՎ

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ Օ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ Գ. Ա. ՀՐԱՄԱՆ ՊՐԵՄԻԵՐԱ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

Պատասխանատու խմբագիր
Գ. Ն. ՀՈՎՆԱՆ

Ղարիբջանյան, Գ. Բ.

լ.35դ Վ. Ի. Լենինը և Հայ գործիշները. Հանդիպումներ. Նամակագրություն /Պատ. խմբ. Գ. Ն. Հովնան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1980.—224 էջ, 28 նկ.

Գրքում լուսաբանված են Վ. Ի. Լենինի նամակագրությունը և անձնական կապերը Հայ հեղափոխական, կռապակցական, սովետական և ռազմական գործիշների, մշակույթի աշխատողների հետ 1893—1923 թթ.: Գիտական շրջանառության մեջ են դրվել նոր փաստեր, նամակներ և այլ նյութեր, որոնք ընդլայնում են Վ. Ի. Լենինի և նրա Հայ բարեկամների կենսագրական ժամանակագրությունը: Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

1. $\frac{0902030000}{703 \text{ (02)} - 80}$ 88—80

3 K 22
ԳՄԴ 11.51

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980



Գ. Ի. Անդրեասի Մուկվայում «Ազատագրված աշխատանք»
հուշաթանի նիմնագրման ժամանակ: Չախից՝ Հ. Գյուրջյանը:
1920 թ. մայիսի 1: Կինոլար



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Երկար տարիներ հավաքել, ուսումնասիրել, ի մի ենք բերել հարուստ նյութեր համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի և հայ գործիչների համակազմության ու փոխադարձ կապերի «մասին»: Հիշյալ հարցերի վերաբերյալ հրատարակել ենք մի շարք աշխատություններ: 1973 թ. լուս է տեսել մեր «Անմոռանալի հանդիպումներ» գրքովկը, որը անդրադարձել ենք Ի. Բ. Լալայանցի, Բ. Մ Կնուսյանցի, Ս. Գ. Շահումյանի, Ս. Ս. Սպանուարյանի, Կամոյի, Վ. Մ. Կասպարովի, Ա. Ֆ. Մյասնիկյանի, Ա. Ս. Բեկզադյանի և հայ այլ գործիչների՝ Լենինի հետ ունեցած նամակագրության ու հանդիպումներին:

«Անմոռանալի հանդիպումներ» գրքովկի արձագանքները խթանեցին մեզ շարունակելու մեր աշխատանքները հիշյալ թեմայի ուղղությամբ: Սովետական Միության և արտասահմանյան արխիվներում ու գրադարաններում, ինչպես նաև նաևնավոր անձանց միջոցով հաջողվեց ձեռք բերել բազմաթիվ նոր, ուշագրավ նյութեր մի

շարք այլ հայ գործիչների մասին, որոնք առանձնական ու համակագրական կապեր են ունեցել Լենինի հետ:

Վերջին տարիներս հրատարակվեցին «Ա. Ի. Լենին—Կենսագրական ժամանակագրություն» գրքի 4-10 հատորները, ինչպես նաև այլ արժեքավոր գործեր, որոնք հարստացրին լենինապատման հասկ մեզ զբաղեցնող հարցերը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունը ոչ միայն լրացված է նոր նյութերով, այլև վերահսկված ու խմբագրված է:

Ինչ խոսք, մենք հեռու ենք այն մտքից, որ յենմային վերաբերող բոլոր հարցերը սպառված են, ուստի խորապես շնորհակալ կլինինք բոլոր այն ընթերցողներից, որոնք իրենց դիտողություններով և լրացումներով կօգնեն մեզ:

Վ. Ի. Լենինը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՍ.ՄԻՆ

Կոմունիստական կուսակցության և սովետական պետության հիմնադիր ու ղեկավար, համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդ հուսուցիչ Վլադիմիր Իլյիչ Լենինի անունը թանկ է ու նվիրական ողջ առաջավոր մարդկության համար:

Վ. Ի. Լենինը բոլոր ճնշված ու շահագործվող ժողովուրդներին և ազգերին, այդ թվում նաև Անդրբակովկասի աշխատավորներին, ցույց տվեց ազատազրման ձիշտ ուղի, բազմակողմանիորեն հիմնավորեց ու ղեկավարեց նրանց ազգային ու սոցիալական պայքարն ու վերածնունդը:

Վ. Ի. Լենինի բազմաթիվ աշխատություններում, լենինյան «Խսկրա», «Վակերյող», «Պրոլետարի», «Նովայա Ժիզն», «Սոցիալ-դեմոկրատ», «Պրավդա» և այլ թերթերում լայնորեն լուսաբանվում էր նաև անդրբակովկասյան, մասնավորապես հայ իրականությունը: Վ. Ի. Լենինի Երկերի լիակատար ժողովածուում ղետեղված են մոտ 400

փաստաթուղթ Անդրկովկասի իրադարձությունների վերաբերյալ, որոնցից ավելի քան 150-ում վ. ի. Լենինը խոսում է հայ ժողովրդի և նրա գործիշների մասին:

Վ. ի. Լենինն իր երկերում հայերի մասին առաջին անգամ հիշատակում է 1896 թ. «Ռաբոտնիկ» ժողովածում տպագրված «Ֆրիդրիխ Էնգելս» հոդվածում, նշելով, որ միմիայն ազատ Ռուսաստանը կարիք չի ունենա ճնշելու լիքերին, ֆիններին, գերմանացիներին, հայերին և մյուս ժողովուրդներին։

Դեռևս իր վաղ շրջանի ստեղծագործություններում Լենինը նշել է ցարիզմի դեմ Ռուսաստանում ապրող ժողովուրդների պայքարի և տեղական սոցիալ-դեմոկրատական շարժման ուժեղացման մասին։ «Տեղական սոցիալ-դեմոկրատական աշխատանքը մեզանում արդեն բավական բարձր զարգացման է հասել,—զրում է Վ. ի. Լենինը 1899 թ.,—սոցիալ-դեմոկրատական դադաիփառների սերմերը Ռուսաստանում արդեն նետված են ամենուրեք. բանվորական թերթիկները՝ սոցիալ-դեմոկրատական զրականության այդ առաջին ձեր, արդեն ծանոթ են բոլոր ոռուս բանվորներին՝ սկսած Պետերբուրգից մինչև Կրասնոյարսկ և Կովկասից մինչև Ուրալ»²:

1 Վ. ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետեւ Վ. ի. Լենին, Ելժ), Հատ. 2, էջ 16:

2 Վ. ի. Լենին, Ելժ, Հատ. 4, էջ 236—237:

Զարգացնելով Մարքսի և Էնգելսի գաղափարները, Վ. Ի. Լենինը ստեղծեց ամբողջական և կոռուսմունք ազգային և ազգային-դաշտային հարցերի վերաբերյալ, որը վճռական դեր կատարեց բոլոր ժողովուրդների, այդ թվում և Հայ ժողովրդի պատմական ճակատագրում:

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիքնատի մասին» հոդվածում, որը հրապարակվեց 1903 թ. վետրվարի 1-ին «Խոկրացում», Լենինը չերմորեն ողջունեց 1902 թ. կովկասյան խոկրացականներ Ստեփան Շահումյանի, Բողդան Կնունյանցի, Արշակ Զուրաբովի (Զուրաբյան) նախաձեռնությամբ և կուսակցության Թիֆլիսի ու Բաքվի կոմիտեների օգնությամբ ստեղծված «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» և նրա տպագիր օրգանի՝ լենինյան խոկրացական ուղղության առաջին հայկական թերթի՝ «Պրոլետարիատի» էջերում միության մանիքնատի հրապարակումը, մասնավորապես ազգային հարցը ճիշտ դնելու նրա հիանալի փորձը: «Կովկասում,— զրում էր Լենինը,— երեան է եկել մի նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»: Այդ միությունը, ինչպիս մեզ հայտնի է, ավելի քան կես տարի է, ինչ սկսել է իր պրակտիկ գործունեությունը և արդեն ունի իր օրգանը հայերեն լեզվով: Մենք ստացել ենք № 1-ը այդ օրգանի, որը կոչվում է «Պրոլետարիատ» և որի վերնագրում նշված է «Ռուսական

տանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն»։ Լրագրի այդ համարը պարունակում է մի շարք հոդվածներ, հաղորդումներ ու թղթակցություններ, որոնք պարզում են «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» գոյության կոչած հասարակական ու քաղաքական պայմանները և ընդհանուր գծերով նշում են նրա գործունեության ծրագիրը³։

Վ. Ի. Լենինն առանձնապես հետաքրքրական է համարում միության վերաբերմունքը դեպի աղղային հարցը և ամբողջ հոգով ողջունում է մանիֆեստում այդ հարցի ճիշտ դրվածք տալու նրա հիանալի փորձը։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստի մասին» և նրա հետ սերտորին կապված «Աղղային հարցը մեր ծրագրում»⁴ (1903, Հուլիս) հոդվածները Լենինի առաջին երկերն են բոլշևիկների աղղային ծրագրի մասին։

Հսկայական նշանակություն տալով աղղային լեզուներով մարքսիստական դրականության հրատարակման ու տարածման գործին, կուսակցության II համագումարից անմիջապես հետո՝ 1903 թ. Հոկտեմբերին, Լենինը Գ. Վ. Պլեխանովի հետ միասին ժնկից գրում են Կովկասյան միութենական կոմիտեին, «Մենք այժմ եռանդուն մտածում ենք այստեղ վրացական և հայկական դրա-

3 Վ. Ի. Լենին, Ելժ, Հատ. 7, էջ 129։

4 Կույն տեղում, էջ 294—305։

կանության Հրատարակության կազմակերպման մասին։ Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնահաս ընկերներ, փող Հույս ունենք ճարել։ Հարկավոր է օգնություն և՛ գրականությամբ, և՛ միջոցներով»⁵:

Վ. Ի. Անինի նախաձեռնությամբ 1904 թ. փետրվարին ժնկում ստեղծվեց Հայերեն և վրացերեն լեզուներով կուսակցական սոցիալ-դեմոկրատական գրականության Հրատարակման Հանձնաժողով։ Անինի Հանձնարարությամբ Հանձնաժողովի աշխատանքն անմիջականորեն ղեկավարում էր Ստեփան Շահումյանը:

1905 թ. ապրիլին կուսակցության III համադումարն ընդունեց Անինի գրած «Կովկասի իրադարձությունների առթիվ» բանաձեռ, որում բարձր դնածատական է տրվում ուսական առաջին հեղափոխությանը՝ Անդրկովկասի Հերոսական պրոլետարիատի և գյուղացիության մասնակցությանը:

1905 թ. մայիսմեկյան պրոկլամացիայում, որն արտատպվել էր ՌՍԴԲԿ մի շարք, այդ թվում նաև Բաքվի կոմիտեի կողմից, Անինը գոհունակությամբ նշում էր, որ «Հրեան ու քրիստոնյան, հայն ու թաթարը, լեհն ու ուսար, ֆինլանդացին ու շվեյց, լատիշն ու գերմանացին—բոլորը, բոլորը գնում են միասին՝ սոցիալիզմի մեկ ընդհանուր դրոշի ներքո»⁶։ Նույն տեղում Անինը զայրութով դատապարտում է ցարական կառավարու-

5 Վ. Ի. Անին, Երկեր, Հատ. 34, էջ 199:

6 Վ. Ի. Անին, Ելք, Հատ. 10, էջ 100:

թյան բազարականությունը, որը մի ժողովուրդ գրգռել է մյուսի դեմ, «կոտորած է սարքել Բարձրում» հայերին զրապարտելով թաթարների առաջ»⁷:

Վ. Ի. Լենինը, 1905 թ. սեպտեմբերին կայանալիք Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կոնֆերանսի կազմակցությամբ, ՌՍԴԲԿ Կենտրոնական կոմիտեին նույն թվականի սեպտեմբերի 7-ի նամակում խիստ նախազգուշացնում էր «Հայկական սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիայի» վերաբերյալ⁸:


Մեկ ամիս անց, այսպիս կոչված Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության մասին լենինը գրում էր, որ այն Ռուսաստանի հետ լուրջ կապեր չունեցող զուտ արտասահմանյան կազմակերպություն է և «...Կովկասում Հայ բանվորների մեջ սոցիալ-դեմոկրատական շարժմանը բոլոր իրոք օգնել ցանկացողները պետք է գործ ունենան միայն ՌՍԴԲԿ Կովկասյան կազմակերպությունների հետ...»⁹:

«Ռում. ընտրել պետական դումայում» լենինյան թուցիկում, որը տպագրված է 1906 թ. նոյեմբերի 23-ին, նշված է, որ Պետերբուրգի ընտրություններում պայքարող գլխավոր կուսակցություն-


7 Նույն տեղում, էջ 103:


8 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 34, էջ 383:

9 Վ. Ի. Լենին, Ելք, Հատ. 11, էջ 423:



Խամիկ Լալայանց





Բողդան Կնունյանց

ներից միայն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ-ներն են հանդիսանում Ռուսաստանի բոլոր ազգությունների՝ այդ թվում նաև հայերի զիտակից բանվորների կուսակցությունը¹⁰:

Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ առանց Ռուսաստանի բոլոր ազգությունների սոցիալ-դեմոկրատների սերտ ու մշտական շփման, մեր կուսակցությունը չի կարող դառնալ իսկապես Համառուսաստանյան։ Այդ նպատակով «Բունդի օրգանում տպագրված մի հոգվածի առթիվ» երկում (1906) Վ. Ի. Լենինը դիմում էր տեղական լեզուներ, այդ թվում նաև հայերեն, իմացող ընկերներին՝ օգնել կուսակցության Կենտկոմին սոցիալ-դեմոկրատական շարժման վիճակի և ոչ ոռուսական սոցիալ-դեմոկրատական տակտիկական հայացքների մասին ուսւ ընթերցողներին տեղյակ դարձընելու գործում¹¹։

Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ինտերնացիոնալիստական հիանալի տրադիցիաների մասին։ 1913 թ. Փետրվարին, Մաքսիմ Գորկուն ուղղված նամակում նա գրում էր. «Մեզ մոտ և Կովկասում ո. դ. վրացիները + հայերը + թաթարները + ոռուները աշխատում էին միասին, տասը տարուց ավելի միասնական ո. դ. կազմակերպու-

10 Վ. Ի. Լենին, Ելժ, Հատ. 14, էջ 165։

11 Նույն տեղում, էջ 234։

թյան մեջ, այդ ֆրազ չէ, այլ տղղային հարցի պրոլետարական լուծում: Միակ լուծումը...»¹²:

Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ ինչպես կապիտալիզմի ժամանակաշրջանում, այնպես էլ նրա իմպերիալիստական էտապում հայ ժողովրդի ազատագրական պայքարն առաջադիմական է և պետք է պաշտպանություն գտնի բոլշևիկների կողմից, որոնք կանգնած են ինտերնացիոնալիստական դրոշի տակ: «Մեզ համար օրինակ պետք է ծառայի Կովկասի սոցիալ-դեմոկրատիան, որը պրոլագանդա էր մզում միաժամանակ վրացիրեն, հայերեն, թաթարերեն և ռուսերեն լեզուներով», — գրում էր Լենինը 1913 թ. ապրիլի 22-ին՝ «Արդի Ռուսաստանը և բանվորական շարժումը» Հոդվածում¹³: «Ազգային ծրագրի պատմության շուրջը Ավստրիայում և Ռուսաստանում» Հոդվածում (1914, փետրվար), Լենինը վճռականորեն դատապարտում է Ռուսաստանի ձախ նարոդնիկական ուղղության ազգային կուսակցությանը, որոնք կանգնած էին «Կուլտուր-ազգային ավտոնոմիայի» մանրբուրժուական, նացիոնալիստական գաղափարի վրա, որը չէր կարող ո՛չ ազգային, ո՛չ էլ սոցիալական ազատագրությունը բերել ճնշված ժողովուրդներին: Իմպերիալիստական պետությունների, այդ թվում ցարիզմի, իսկ առաջ նաև ժամա-

12 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 35, էջ 79:

13 Վ. Ի. Լենին, Ելք, Հատ. 23, էջ 68:

նակավոր կառավարության նվաճողական քաղաքականությունը Լենինը մերկացրել է 1913—1917 թթ. դրած իր մի շարք աշխատություններում:

«Յիմմերվալդի ինտերնացիոնալ սոցիալիստական կոնֆերանսի մասնիքաստում» (1915, սհամարեմբեր), որը բոլշևիկների կողմից ստորագրել էր Վ. Ի. Լենինը, Յիմմերվալդի II կամ Կինտալի կոնֆերանսում Լենինի մասնակցությամբ նշվում են Հատկապես Սերբիայի և Հայաստանի ողբերգական վիճակը, որոնք, ինչպես և այլ փոքր պետություններն ու Ճնշված ազգերը շախմատային ֆիգուրաներ էին մեծ տերությունների իմպերիալիստական խաղերում, որոնց աշխատավոր մասսաները, ինչպես նշվում էր մանիքաստում, պատերազմի ժամանակ «սովորական զենք են լինելու, իսկ պատերազմից հետո՝ զահաբերվելու են կապիտալիստական շահամոլության զոհասեղանի վրա»¹⁴:

Իմպերիալիստական պատերազմի նախօրյակին և պատերազմի ծանր տարիներին դրած աշխատություններում՝ «Հեղափոխական սլովացիատիատրության և ազգերի ինքնորոշման իրավունքը» (1915), «Ուրիշի դրոշի տակ» (1915), «II ինտերնացիոնալի կրախը» (1915), «Սոցիալիստական Հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրա-

¹⁴ Տե՛ս «Циммервальдская и Кинтальская конференции». Официальные документы, Л.—М., 1924, стр. 27. Die Zimmerwalder Bewegung, Bd. 1, s. 153—154.

վունքը», «Յունիուսի բրոցյուրի մասին», «Ինքնուրշման մասին դիսկուսիայի արդյունքները», «Մարքսիզմի ծաղրանկարի և իմպերիալիստական էկոնոմիզմի մասին» (1916) և այլն, Վ. Ի. Լենինը խորապես հիմնավորել է իմպերիալիզմի և սրբութեարական հեղափոխությունների դարաշրջանում աղքային-զաղութային հարցում կուսակցության տեսությունն ու տակտիկան, որոշել բանվոր դասակարգի և նրա կուսակցության խնդիրները:

Վ. Ի. Լենինը աղքային հարցը, ժողովուրդների աղքային-աղատագրական պայքարը դիտում էր որպես սոցիալիստական հեղափոխության հարցի բաղկացուցիչ մասը:

Իմպերիալիզմի և իմպերիալիստական պատերազմների դարաշրջանի համակողմանի գիտական վերլուծության հիման վրա Լենինը եկավ այն եղբակացության, որ խաղաղության կարևորագույն պայմանը պետք է լինի բոլոր աղքանի ինքնորշման իրավունքի պահանջը՝ ընդհուպ մինչև անջատումը և ինքնուրույն պետություն կազմելը:

«Սոցիալական հեղափոխությունը,— նշել է Վ. Ի. Լենինը,— չի կարող այլ կերպ տեղի ունենալ, քան իբրև մի դարաշրջան, որ միացնում է պրոլետարիատի քաղաքացիական կոիվը բուժուադիայի դեմ առաջավոր երկրներում և մի ամբողջ շարք դեմոկրատական ու հեղափոխական շարժումներ՝

Հպարգացած, հետամնաց և ճնշված ազգերի մէջ»¹⁵: Սլնելով այդ սկզբունքից, կենինը հետևողականութեն մէրկացրել է իմպերիալիստական պետությունների, մասնավորապես թուրքական բարբարուների հայակործան քաղաքականությունը:

Թեուս 1908 թ. Միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստում, որպես ԽՍԴԲԿ-ից ներկայացուցիչ, կենինն իր համակրանքն է հայտնում այն բանաձեռին, որը ողջունում էր երկար ժամանակ իմպերիալիստական տերությունների օգնությամբ պահպանվող Արդուլ Համիդի գագրելի ռեժիմի անկումը:

«Ուրիշի գրոշի տակ» հոդվածում Վ. Ի. կենինը ընդգծում էր, որ XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած հայկական շարժումները պրոգրեսիվ են եղել իրենց էությամբ, սոցիալ-տնտեսական բովանդակությամբ, դրանք ուղղված են եղել ֆեոդալիզմի դեմ, հայ ժողովրդի ազգային-ազատագրության համար¹⁶:

Խորապես հիմնավորելով իմպերիալիզմի դարշաշանում ազգային-ազատագրական պատերազմի հնարավորությունը, նրա առաջադիմական ու հեղափոխական բնույթը, կենինն ընդգծում էր, որ այդպիսի պատերազմում մարքսիստները կողմնակից են հայրենիքի պաշտպանությանը, որովհետ այն մղվում է լիակատար ազգային-ազատագրու-

15 Վ. Ի. կենին, Երկեր, Հատ. 23, էջ 67:

16 Տե՛ս Վ. Ի. կենին, Երկեր, Հատ. 21, էջ 175:

թյան համար, անեքսիաների դեմ: Այս կատակցությամբ այլ երկրների թվում էնինը հիշատակում է նաև Հայաստանի օրինակը: «...Հաղիվ թե մեկը վարսնե ժխտել այն,— զրում է Վ. Ի. Լենինը 1916 թ. Հոկտեմբերին,— որ անեքսիայի ննթարկված Բելգիան, Սերբիան, Գալիցիան, Հայաստանը իրենց «ապստամբությունը» անեքսիա կատարողի դեմ կանվանեն «Հայրենիքի պաշտպանություն» և նիշտ էլ կանվանեն»¹⁷:

Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է, որ Հրաժարվել անեքսիայի ննթարկված մարզերի ապրատամբությունը պաշտպանելուց, նշանակում է օբյեկտիվորեն դառնալ անեքսիոնիստներ: Դրանք թուլացնում են խմբերիալիստական պետությունների բուրժուազիային և հեշտացնում դասակարգային պայքարը նրա դեմ:

«Նամակներ Հեռվից» աշխատության մեջ, նշանավոր Ապրիլյան թեզիսներում, ՌՍԴԲԿ (Բ) Համառուսաստանյան VII (Ապրիլյան) կոնֆերանսում տված զեկուցման մեջ և 1917 թ. այլ աշխատություններում Լենինը, շարունակելով մեծ ուշադրություն դարձնել ազգային հարցին, հետեւ վողականորեն պաշտպանում է Ռուսաստանի ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ընդհույժմինց անչափավելին ու ինքնորույն պետություն կազմելը: Բազմիցս ընդգծելով, որ սուս ժողովուրդը չի ուզում և չի ճնշի ոչ մի ժողովրդի, թույլ

17 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 22, էջ 447:

չի տա ոչ մի բռնություն այլ ազգի նկատմամբ, Վ. Ի. Լենինը առաջարկում էր ժողովուրդների եղբայրական միություն՝ կամավոր հիմունքներով:

1917 թ. ԽՍԴԲ(բ)Կ Համառուսաստանյան VII (Ապրիլյան) կոնֆերանսում հանդես դալով ազգերի ինքնորշման իրավունքի պաշտպանությամբ, Վ. Ի. Լենինը ասում էր. «Այ եթե վազը Սովհետն իշխանությունն իր ձեռքը վերցնի... այն ժամանակ մենք կասենք՝ Գերմանիա՝, զորքերդ դուրս Լեհաստանից, Ռուսաստան՝, զորքերդ դուրս Հայաստանից,— այլազես այդ խարեւիլյուն կլինի»¹⁸:

Գործարաններից և գնդերից բանվորների և զինվորների դեպուտատների սովետում ընտրվող դեպուտատներին տրվող նակադում Վ. Ի. Լենինը զրել է, որ վելիկուուաները բռնությամբ չեն պահի ոչ Լեհաստանին, ոչ Կուսանդիային, ոչ Ռւէրախնային, ոչ Ֆինլանդիային, ոչ Հայաստանին, ընդհանրապես ոչ մի ժողովրդի: «Ազատություն բոլոր ժողովուրդներին, բոլոր ազգությունների բանվորների և գյուղացիների եղբայրական միություն», — ասում էր Վ. Ի. Լենինը: Նա գտնում էր, որ պետք է թողնել, որ ժողովուրդներն իրենք միանդամայն ազատորեն որոշեն՝ ցանկանում են արդյոք ազգեր առանձին պետության մեջ, թե՞ միութենական պետության մեջ՝ ում հետ ուղենան:

18 Վ. Ի. Լենին. Երկեր, Համ. 24, էջ 367:

19 Նույն տեղում, էջ 440:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինի ստորագրած մի շարք փաստաթղթերում՝ «Մուսասատանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», «Մուրքահայաստանի մասին դեկրետը», «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի դեկլարացիան» և այլն, ազգարարվում էր նաև հայ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհանուր մինչև լիակատար անկախություն։ «Մուրքահայաստանի» մասին լենինյան դեկրետում (1917, դեկտեմբերի 29) ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայտարարում էր հայ ժողովրդին, որ Մուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է «Մուրքահայաստանի» ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհանուր մինչև կատարյալ անկախություն։ Հանձնարարվում էր Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանին՝ «Մուրքահայաստանի» բնակչությանը ցույց տալ ամեն տեսակի օգնություն՝ դեկրետում նշված միջոցառումները իրականացնելու գործում։

«Մուրքահայաստանի» մասին դեկրետը միշտագային հարաբերությունների պրակտիկայում առաջին պատմական փաստաթուղթն էր, որ ոչ միայն ճանաշում էր հայ ժողովրդի ինքնորոշման և պետականության ստեղծման իրավունքը, այլև մի շարք նախնական երաշխիքներ էր տալիս հայերի ազատ հանրաքվեի համար։

Վ. Ի. Լենինը չերմորին ողջունեց Ստեփան Շահումյանի գլխավորած Բաքվի Հերոսական կոմունան: «Մենք հրճվանքի մեջ ենք Զեր հաստատակամ և վճռական բաղաքականությունից», — պրում էր Լենինը կոմունայի ղեկավար Ս. Գ. Շահումյանին, 1918 թ. մայիսի 14-ին:

Հանձին Բաքվի կոմունայի, Լենինը տեսնում էր սովորական իշխանության ամուր հենարանին կովկասում, որին վիճակված էր երկրամասի բազմազդ ժողովուրդների հեղափոխական ու ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիրը լինելու:

Վ. Ի. Լենինն առանձնապես մտահոգված էր թուրքական զավթվիչներին Բաքու շիողնելու հարցով:

Բազմաթիվ թշնամիների դեմ մղված անհավասար պայքարում Բաքվի կոմունայի հաղթանակն ապահովելու համար Վ. Ի. Լենինը Շահումյանին ուղարկած 1918 թ. մայիսի 14-ի հեռադրում առաջարկում էր իրենց հաստատակամ ու վճռական բաղաքականությունը միացնել ամենազդուց դիվանագիտությանը, օգտագործել իմպերիալիստական խմբավորումների միջև եղած հակասությունները, կոնֆլիկտներն ու պայքարը, միավորել Կովկասի բոլոր հայրենասեր ուժերին: Լենինյան այդ ցուցմունքի կենսագործման տեսակետից պետք է մեկնաբանել Ստ. Շահումյանի 1918 թ. հունիսի 20-ի պատասխան ուադիոհեռագիրը ժողովրդական հերոս Անդրանիկին: Հունիսի

14-ին գեներալ-մայոր Անդրանիկը հեռագրով
Հայտնել էր Կովկասի գործերի կոմիսար Ստ. Շա-
հումյանին, որ ինքն իր ջոկատը դնում է Ռուսաս-
տանի կենտրոնական կառավարության, այսինքն՝
Լենինի կառավարության, տրամադրության տակ և
ենթարկվում է նրան²⁰:

Վ. Ի. Լենինը հետեւղականորեն մերկացրել է
թուրքական զավթիչների նվաճողական պլանները
Կովկասի նկատմամբ նաև հետագա տարիներին.
Երբ Թուրքիայում իշխանության գլուխ էին անցել
քեմալականները: 1920 թ. Հոկտեմբերի 9-ին
ՌԿ(Բ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի
խորհրդակցությունում տված զեկուցման մեջ վեր-
լուծելով Սովհետական Ռուսաստանի ներքին ու
արտաքին դրությունը, Լենինը նշում է, որ «Թուր-
քիստանում և Կովկասում դրությունն ավելի բարդ
է: Վերջերս թուրքերն սկսել են հարձակվել Հայա-
տանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաթու-
մը, իսկ հետո, թերեւ, նաև Բաքուն»²¹:

1920 թ. Հոկտեմբերի կեսերին Վ. Ի. Լենինը
առաջարկում է ՌԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին
Հաստատել Զիշերինի հետեւյալ երեք առաջարկու-
թյունները. 1. Համաձայնել Հայաստանում սովհ-
տական իշխանություն Հաստատելու համար վճռա-
կան գործողությունների դիմելու անհրաժեշտության

20 Տե՛ս Ս. Գ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովա-
ծու (այսուհետև՝ Ս. Գ. Շահումյան, Ելֆ), Հատ. 5, էջ 199,
372:

21 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 42, էջ 234:

մասին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կարծիքի հետ: 2. Նրան քաղաքական օգնություն ցուց տալ՝ թուրքացի հետադա առաջինադաշտումը կասեցնելու համար և 3. Պաշտպանել նոր, սովետական կառավարությունը²²:

1920 թ. նոյեմբերի 21-ին ՌԿ(Բ)Կ Մոսկվայի նահանգական՝ կոնֆերանսում արտասահմած՝ «Մեր արտարին ու ներքին դրությունը և կուսակցության ինդիքները» ճառում էենինը ասում էր. «...Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ, որ վերին աստիճանի դժվար է ըմբռնել. ըստ որում, մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել նույնիսկ օրավոր: Սակայն այդ պատերազմը, էեհաստանի հետ զրեթե ապահովված հաշտության և Վրանգելի լիակատար լիկվիդացիայի պայմաններում, չի կարող շատ սարսափելի լինել, իսկ եթե մեր վզին պատերազմ փաթաթեն, ապա դա մեզ խոստանում է էլ ավելի ուժեղացում և մեր դրության ամրացում, քան առաջ: Թիրթերի հաղորդագրություններն այն մասին, թե ի՞նչ է կատարվում Հայաստանում, Թուրքիայում, որոշ պատկերացում են տալիս մեզ այդ մասին»²³: Այնուհետև էենինը լիակատար վստահություն է հայտնում, որ սովետական հանրապետությունն այդ շափաղանց խճճված դրությունից դուրս կգա ավելի քան ուժեղացած:

22 Վ. Ե. Անդին, Երկեր, Հատ. 44, էջ 486, 634—635:

23 Վ. Ե. Անդին, Երկեր, Հատ. 31, էջ 520:

Թուրքական առաջխաղացումը կանխելու հայ ժողովրդին նոր կոտորածներից փրկելու միակ սպիտակագույն տիրապետության տապալումն ու Հայաստանում սովետական իշխանության հաստատումն էր, որն իրականացվեց Վ. Ի. Լենինի հոգատարությամբ, կուսակցական կազմակերպությունների գլխավորած Համաժողովրդական պալստամբության միջոցով:

Պաշտպանելով Թուրքիայում ծավալվող ազգային-ազատագրական պայքարը, որն իր սուր ծայրով ուղղված էր Անտանտի իմպերիալիստների դեմ, Լենինը բոլորովին չէր անտեսում քեմայականների ազրեսիան Հայաստանում:

«Թուրքական Հարձակումը մեր դեմ էր ուղղված,— ասում է Լենինը 1920 թ. դեկտեմբերի 21-ին,— Անտանտը մեզ համար էր փոս փորում և ինքն բնկավ այնտեղ, որովհետև մենք ձեռք բերեցինք Սովետական Հայաստանը ... Թուրքիան դեկավարում են կազմակերը, օկտյաբրիստները, ազգայնականները, որոնք պատրաստ են մեզ վաճառելու Անտանտին»²⁴:

Դեկտեմբերի վերջին Հանդես զալով Սովետների Համառուսաստանյան VIII Համադումարում ժողովրդական կոմիսարների սովետի հաշվետուղեկուցումով, Լենինն ընդգծում էր, որ Բուխարայի, Ադրբեյջանի և Հայաստանի սովետական Հանրապետությունների ստեղծումը կոմունիստական

24 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 42, էջ 271—272:

կուսակցության քաղաքականության հաղթանակն է: «Մենք պետք է ողջունենք, — ասում է Լենինը, — Բուխարայի, Ադրբեյջանի և Հայաստանի սովհետական հանրապետությունների կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ոչ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունը վերցրին բանվորների ու գյուղացիների ձեռքը»^{25:}

1921 թ. ապրիլի 14-ին գրած «Ադրբեյջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կռմունիստ ընկերներին» ծրագրային նամակում Լենինը շերմորեն ողջունեց Կովկասի սովհետական հանրապետություններին, վստահություն հայտնեց, որ «նրանց սերողաշխինքը կստեղծի ազգային խաղաղության միայնպիսի օրինակ, որը շի տեսնված բորժուակիայի ժամանակ և անհնարին է բուրժուական Հասարակարգում»^{26:}

«Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակում՝ թելադրված 1922 թ. գեկտեմբերի 30-ին և 31-ին, Լենինը պահանջում էր խստորեն պահպանել պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքը, ապահովել ազգերի լիակատար, իսկական իրավահավասարություն մեծագույն զգուշությամբ վերաբերվել տարբեր ազգությունների շահերին, առանձնահատկություն-

25 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 31, էջ 619:

26 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 32, էջ 402:

ներին, ամբաղնդել սովհատական երկրի մեծ ընտանիքում յարաբանը Հանրապետության ինքնուրույնությունը:

1921 թ. ապրիլին Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղարկած Հեռագրում Վ. Ի. Լենինը Հազորդում էր. «Ստացանք ձեր ծածկադիրը Անդրկովկասի պարենային Հուսահատական դրության մասին։ Մենք ձեռք առանք մի շարք միջոցներ։ Հայաստանին մի բիշ ուկի տվինք, Հաստատեցինք Պարենկոմին տրված ամեն տեսակի Հանձնարարությունները»²⁷:

Վ. Ի. Լենինը անձամբ ճանաչում և բարձր էր պնահատում բազմաթիվ Հայ Հեղափոխականների, զեկավարում ու ուղղություն էր տալիս նրանց պայքարին։ Հավատարիմ լենինյաններ Ի. Էլայանցը, Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ա. Զուրաբովը, Կամոն, Ս. Սպանդարյանը, Ա. Բեկադյանը, Վ. Կասպարյանցը, Վ. Ավանեսովը, Ա. Մյանիկյանը, Վ. Տերյանը, Ա. Խալաթովը, Ս. Տեր-Գարբիկյանը և ուրիշներ իրենց գործունեությամբ Հայ ժողովրդի աղքային, ինտերնացիոնալ շահերի զուգորդման, նրանց Հեղափոխական ու աղքային-ազատագրական պայքարի միահյուսման հիանալի օրինակ էին ցույց տալիս։

Այս ամենն ակնրախորեն վկայումն է Լենինի մեծ դիրի Հայ ժողովրդի ազատագրական պայքարում, Հայաստանում սովհատական իշխանություն Հաստատելու և ամբաղնդելու գործում։

Հայ ժողովուրդը սրբությամբ կատարելով
կ. ի. Անինի պատգամները, համակված է անսահ-
ման սիրով և երախտազիտությամբ մեծ տռաջ-
նորդի նկատմամբ, որի հանճարով ՍՍՀՄ ժողո-
վուրդների անխախտ ընտանիքում լուսավորված է
նաև Սովետական Հայաստանի, հայ ժողովրդի վե-
րածնման, զարգացման և բարգավաճման ուղին:

«ՀԱՅԱՐ ՈՂՋՈՒՅՆՆԵՐ ՀԻՆ ԲԱՐԵԿԱՄԻՍ»

Վ. Ի. Լենինը հոգ էր տանում, որպեսզի բանվոր դասակարգի ազատազրական պայքարի մեջ բնդզրկվեն բոլոր աղքերի ու ժողովուրդների լավագույն զավակները։ Հեղափոխության բովում կոփված այդպիսի զործիչներ էին Ի. Վ. Բաբուշկինը, Ն. Է. Բառմանը, Մ. Մ. Լիտվինովը, Մ. Ի. Կալինինը, Վ. Զ. Կեցիսովելին, Ն. Կ. Կրուպսկայան, Մ. Գ. Ցիահայան, Գ. Ի. Պետրովսկին, Ն. Ա. Սկրիպնիկը, Յա. Մ. Սվերդլովը, Ի. Վ. Ստալինը, Պ. Ա. Զափարիձեն, Յ. Է. Զերժինսկին, Է. Դ. Ստանովան, Մ. Ա. Ազիզբեկովը, Պ. Ի. Ստուչկան, Գ. Կ. Օբջոնիկիձեն, Մ. Վ. Ֆրունզեն և շատ ուրիշներ։

Լենինյան կուսակցության շարքերում աճած բոլշևիկյան գվարդիայի փառաջեղ սերնդի մեջ իրենց պատվավոր տեղն ունեն հայ լենինյանները։ Նրանցից շատերին լենինն անձամբ դիտեր ցարիզմի և բուրժուազիայի դեմ մղված պայքարից։ Նրանք աշխատել են լենինի անմիջական դեկավարությամբ, նամակազրություն են ունեցել

Լենինի հետ հեղափոխության ու կուսակցության կյանքի շատ կարևոր հարցերի մասին, կատարել են Լենինի հանձնարարականները և արժանացել նրա բարձր գնահատականներին։ Նրանցից շատերն այն ժամանակ երիտասարդներ էին, 20—30 տարեկան, իսկ Ստեփան Շահումյանի տղան՝ Սուրեն Շահումյանը, վ. ի. Լենինի հետ առնչվել է, երբ դեռ նոր էր բոլորել նրա 16 տարին։

Վ. ի. Լենինը անձամբ ճանաչել և հանդիպուածներ ու նամակագրություն է ունեցել նաև մի շարք Հայ զրողների, արվեստագետների ու գիտնականների հետ, չերմ Հոգատարություն է ցուցաբերել նրանց նկատմամբ։

Հայ հեղափոխականներից վ. ի. Լենինի առաջին բարեկամն ու զինակիցը եղել է Իսահակ Քրիստովի Լալայանցը։

Լալայանցը ծնվել է 1870 թ. օգոստոսին, Թիֆլիսի մարզի Ղղլար քաղաքում։ Սկզբնական կըրթությունը ստանալով մայրենի լեզվով, Լալայանցը տեղափոխվում է Թիֆլիս, ուր մեկ տարի սովորում է ուսական ուսումնարանում, ապա տնդափոխվում Կազանի ուսական ուսումնարանը, որն ավարտում է 1889 թ.։ Կազանում Լալայանցը ծանոթանում է ուսականավոր մարքսիստ Նիկոլայ Ֆեղոսենի հետ, մտնում նրա խմբակը և ուսումնասիրում մարքսիստական գրականություն։ Հեղափոխական գործունեության համար արտովելով Կազանից, Լալայանցը տեղափոխվում է Սամարա, որտեղ 1893 թ. մարտի սկզբին նարոգ-

նիկ Ն. Ս. Դոլգովի ընակարանում հանդիպում և ծանոթանում է Վ. Ի. Լենինի հետ։ Այդ մասին նա հետագայում գրել է. «Այդ 23-ամյա մարդու մեջ ամենազարմանալի կերպով զուգակցվում էին մի կողմից՝ պարզությունը, նրբազգացությունը, կենսուրախությունն ու կրքությունը, և մյուս կողմից՝ մեծալրջությունը, զիտելիքների խորությունը, տրամաբանական անողոք հետեւզականությունը, դատողությունների և սահմանումների պարզորշությունն ու հսկակությունը»¹։

Սամարայում կալայանցը Հին Հեղափոխական Ա. Պ. Սկլյարենկոյի հետ մտնում է Լենինի կազմակերպած մարքսիստական խմբակի մեջ, որին անվանում էին Լենին-Սկլյարենկո-կալայանց «եռյակ»։ Հեղափոխական եռանդուն զործունեության համար կալայանցը Հինդ անգամ ձերբակալվում և աքսորվում է, տաս ամիս կրում է ձեռքի շղթաներ, տասնմեկ տարի անցկացնում է բանտերում և աքսորներում։

1895 թ. սեպտեմբերին կալայանցն իր Հեղափոխական ընկերութու, հետադայում կնոջ՝ Պրասկովիա Իվանովնա կալայանցի (Կուլյարկո) հետ միասին Մոսկվայում կրկին հանդիպում է Լենինին և պատասխանատու հանձնարարություններ ստանալով, մեկնում եկատերինոսլավ։ Այստեղ նա ի. Վ. Բարուշկինի և Մ. Գ. Ցիսակայացի հետ ստեղ-

¹ «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին», զիրք առաջին, Երևան, 1957, էջ 135։

ծում և զեկավարում է «Բանվոր դասակարգի աշ-
պատագրության պայքարի միության» աշխա-
տանքները, մասնակցում ՌՄԴԲԿ Ի Համագումարի
նախապատրաստմանը:

1900 թ. մարտին Մոսկվայում հանդիպելով
Լենինին, Լալայանցը հաղորդում է նրան կուսակ-
ցական գործերի մասին Եկատերինոսլավում և
Կովկասում: Ծանոթանալով «Իսկրա» թերթի ըս-
տեղծման և կուսակցության համագումար հրավի-
րելու մասին լենինյան պլանին, նա չերմորեն
պաշտպանում է այն, նվիրվում նրա կենսագործ-
մանը: Այդ տարիներին Վ. Ի. Լենինը մշտապես
հետաքրքրվում է Լալայանցով, օգնություն կազ-
մակերպում:

1895 թ. իմանալով, որ Լալայանցը բանտարկ-
ված է Պետերբուրգի մենախուց բանտում, Լենինը
նրա հետ կապ է հաստատում բարձրագույն իդա-
կան դասընթացների ուսանողութի Օլգա Իվանովնա
Չաշինայի միջոցով: 1895 թ. ապրիլին ազատվե-
լով բանտից, Լալայանցն անմիջապես հանդիպում
է Լենինին, նրանք մեկնում են Մոսկվա, որտեղ
կանգ են առնում Ռուսական բնակչության իրում: «Ամ-
բողջ երեկոն և հաջորդ օրվա մի մասը մենք ան-
բաժան միասին էինք,— հիշում է Լալայանցը,—
Վլադիմիր Իլյիշի պատմածներից ես այն ժա-
մանակ ինձ համար արտակարգ հետաքրքիր շատ
բան խմացա Պետերբուրգան խմբակների կյանքի
ու աշխատանքի մասին»:

1900 թ. ապրիլին Լալայանցը կրկին ձերբակալվում է և աքսորվում Արևելյան Սիբիր, սակայն Լենինի կազմակերպած օգնությամբ փախչում է կես ճանապարհից և անցնում արտասահման՝ Բեռլին, ապա Ֆյուրիիս:

Վ. Ի. Լենինը 1902 թ. օգոստոսի 19-ին կողոնից Ֆյուրիիս Պ. Արսելրոդին ուղղած նամակում գրում էր. «Հենց նոր հեռագիր ստացա, որ Կոլումբը ձեզ մոտ է: Հաղար ողջուններ հին բարեկամիս: Կից նրան ուղարկում եմ նամակ: Նա, հավանաբար, կհանգստանա և ձեզ մոտ գործերին բիշ ծանոթանալուց հետո կզա մեզ մոտ...»²:

Անլեզական կուսակցական աշխատանքում Լալայանցը հայտնի էր Կոլումբ, Ինսարով, ZZ և այլ ծածկանուններով, որոնք հաճախակի հիշատակվում են Վ. Ի. Լենինի երկերում:

Կուսակցության և անձամբ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Լալայանցը շարունակում է իր հեղափոխական գործունեությունը ժնկում: Կուլյաբկոյի հետ միասին նրանք ընդունվում են Ռուսական հեղափոխական սոցիալ-դեմոկրատիակայի արտասահմանյան լիգայի կազմում, մտնում «Խոկրային» աջակցող լենինյան խմբի մեջ:

Լենինի հանձնարարությամբ Լալայանցը դեկավառում է ժնկում համառուսաստանյան քաղաքական «Խոկրա» թերթի հրատարակությունը:

2 В. И. Ленин, Полное собрание сочинений т. 46, стр. 219 (издание Н. В. Ильиной В. И. Ленин, ПСС).

1903 թ. վերջին, կուսակցության II համագումարից հետո, որպես կայուն լինինյան, կալայանցը ակտիվ դեր է կատարում բոլշևիկյան III համագումարի նախապատրաստման գործում, կազմակերպում է ՌՍԴԲԿ Հարավացին գումարութերի բյուրոն: 1906 թ. նա զնկավար մասնակցություն է ունենում կուսակցության մարտական կազմակերպությունների Տամիրֆորսի կոնֆերանսին: Այդ ժամանակ նա կուսակցության Կենտկոմի և Պետերբուրգի Լոմիտեի անդամ էր, խմբագրում էր «Կազարմա» բոլշևիկյան անլեգալ թերթը: 1906 թ. վերջին կալայանցը ձերբակալվում է, բանտարկվում Շլիսելբուրդի բանտում և ապա աքսորվում Արևելյան Միրի:

Լենինը միշտ հիշում էր ու բարձր գնահատում կալայանցին: 1921 թ. նա դրել է. «Ես կալայանցին ճանաչում էի 1890-ական թվականներից, իբրև մարքսիստի և հետո՝ բոլշևիկի: Անկասկած, նվիրված հեղափոխական է...»³:

Իմանալով, որ հեղափոխական պայքարի իր հին բարեկամ հսահակ կալայանցը երկար տարիներ բանտերում ու սիբիրյան ծանր աքսորավայրում գտնվելու հետևանքով կուսակցությունից դուրս է մնացել և բնակվում է իրկուտսկում, լենինը հանձնաբարում է տեղափոխել նրան Մոսկվա և տեղավորել սովետական աշխատանքի, հո-

3 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 45, էջ 353:

գատարություն ցուցաբերել նրա նկատմամբ։ Այդպիս էլ արվում է։ Լալայանցը հրավիրվում է Մոսկվա, Հանդիպում լինինին, նրանք երկար գյուցում մն, չիշպում իրենց հեղափոխական ընկերներին։

1922 թ. Հունվարի 13-ին Վ. Ի. Լինինը ենու-
իիձեին զրում է Լալայանցի ընտանիքին օգնելու,
նրան նպաստ ուղարկելու մասին, Հանձնարարում
է լուծել Լալայանցին աշխատանքի տեղավորելու
հարցը⁴։ Մեկ ամիս հետո Վ. Ի. Լինինը ենուկի-
ձեին կրկին հիշեցնում է Լալայանցի մասին. «Լա-
լայանցը, — զրում է Լինինը, — ինչպես է նա:
եթե մեկնի Սիրիր, ապա ես նրան նամակ պետք է
տամ և Սկլանսկու ու Ֆոմինի միջոցով տեղավո-
րեմ նրան վաղոնում»⁵։

Վ. Ի. Լինինի միջնորդությամբ Լալայանցը տե-
ղափոխվում է Մոսկվա և 1922—1933 թթ. աշխա-
տում ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի գլխավոր քաղլուս-
վարչությունում։

Ի. Լալայանցի մահվան կապակցությամբ
«Պրավդա» թերթի 1933 թ. Հունիսի 19-ի Համա-
րում մահախոսական է տպագրվում, որտեղ աս-
ված է. «90-ական թվականներից սկսած երկար
տարիների ընթացքում Լալայանցը եղել է Լինինի
պինակիցներից և բարեկամներից մեկը։

...Լալայանցի անունը կապված է նարոդնիկ-

4 Նույն տեղում, էջ 454։

5 Նույն տեղում, էջ 498։

ների, մենշևիկների դեմ, Հանուն լենինյան գծի բոլշևիկների նախահեղափոխական պայքարի հետ: Նրա մեծ հմտությունը, տեսական պատկառելի պաշարը, հեղափոխական ջերմ խառնվածքը առաջ էին մղել կալայանցին հեղափոխական սոցիալ-դեմոկրատների դիրքերը»:

ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ Ա.ԲՏԱ.ՍՍՀՄԱՆՈՒՄ

Յարական իշխանությունների ծանր հալածանքներից խույս տալով, Լենինը ստիպված էր երկար տարիներ՝ XIX դարի վերջերից մինչև 1917 թ. ապրիլի սկիզբը անցկացնել վտարանդիության մեջ, արտասահմանյան տարբեր երկրներում՝ Գերմանիայում, Շվեյցարիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Բելգիայում, Լեհաստանում, Ֆինլանդիայում և այլուր: «Անիծյալ հեռվից», ինչպես ինքն էր անվանում էմիգրացիան, Վ. Ի. Լենինը զեկավարել է Ռուսաստանում ծագալվող հեղափոխական աշխատանքը:

Արտասահմանում լենինը լայն կապեր ուներ նաև շատ հայ գործիչների հետ, որոնք ասլրում էին Եվրոպայում որպես քաղաքական վուարանդիներ, ուսանողներ կամ Ռուսաստանից գնում էին մասնակցելու կուսակցական համագումարներին, կոնֆերանսներին, խորհրդակցություններին:

XX դարի սկզբին Փարիզում Վ. Ի. Լենինի հետ անձնական ծանոթություն է հաստատում հայ

ազատագրական շարժման հերոսուհի Մարտ Նազարելյանը (Մարիամ Վարդանյան): «Մոտիկ լինելով Լենինի խմբակին, — զրել է Մ. Նազարբեկյանը, — ևս մշտապես ներկա էի լինում նրա ելույթ։ Ներին ու զեկուցումներին՝ Ավենյու Շուազիում։ Ի հուս այն ժամանակ ես հիանում էի նրա երկաթյա տրամաքանությամբ, արտակարգ տոկունությամբ, ուղղամտությամբ և նրա նորարարական ու վառ ճառերի հանդարաւ վստահությամբ։ Հետազյում Մարտ Նազարբեկյանը բազմիցս հանդիպում է Լենինին և լենինյան գաղափարների աղդեցությամբ, հեղափոխական պայքարի հարուստ փորձով գալիս այն համոզման, որ հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրությունը հնարավոր է միայն Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության միջոցով։ Այս համոզումն էլ առաջին հայ կին հեղափոխական Մարտ Նազարբեկյանին ազատագրական պայքարի բարդ քառուղիների միջով բերում է դեպի լենինյան կուսակցությունը, որի անդամն էր նա 1924 թ. մինչև իր մահը՝ 1941 թ.։

Վ. Ի. Լենինի մահվան առթիվ «Զարյա Վոստոկայում» հրապարակած իր հուշերում Մ. Նազարբեկը գրում է. «Վախճանվեց մեր ժամանակաշրջանի մեծագույն մարդը՝ բանվոր դասակարգի առաջնորդը, բարեկամը, ուսուցիչը, Վլադիմիր Իլյիշ Լենինը։

Պատմության մեջ նրա դերի, նրա հանձարեկ

խորաթափանցության, մտածողի և հեղափոխության պրակտիկի նրա վիթխարի հատկությունների մասին խոսում և գրում է ողջ աշխարհը»¹:

Վ. Ի. Լենինի համեստ բնակարանը ժնկի ծայրամասում, Սեղերոն բանվորական արվարձանում, ուր ապրում էր նա 1903—1904 թթ. իր կնոջ և մարտական ընկերուհու՝ Ն. Կ. Կրուսկայայի հետ, սիրով ընդունել և հյուրասիրել է շատ հայ հեղափոխականների՝ իսահակ Լալայանցին, Բոգդան Կնունյանցին, Ստեփան Շահումյանին, Արշակ Զուրաբյանին և ուրիշների:

Բոգդան Կնունյանցը և Արշակ Զուրաբյանը 1903 թ. ամռանը Բրյուսելում և Լոնդոնում Լենինի հետ միասին մասնակցել են Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության II համագումարին, որտեղ նրանք պաշտպանել են Լենինի դիրքորոշումները: Լենինը բարձր գնահատական է տվել Բ. Կնունյանցի ելույթներին այդ համագումարում:

«Մենք խորհուրդ կտայինք բոլորին,— զբել է Վ. Ի. Լենինը 1904 թ. «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» գրքում,— ովքեր ուզում են ինքնուրույնաբար վերլուծել կուսակցական պառակտման պատճառները և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի ճառը...»²:

1 «Զարյա Վոստոկա», 1 փետրվարի, 1924:

2 Վ. Ի. Լենին, Ելֆ, Հատ. 8, էջ 376:

Ռուսովը Բոգդան Կնունյանցի կուսակցական ծածկաննուներից էր:

«Պատգամավորների բնութագիրը ըստ արձանագրությունների» գրառումներում հավաքելով և խմբավորելով II համագումարի արձանագրություններում եղած տեղեկությունները՝ նրա հիմնական հարցերի քննարկման ու քվեարկության ընթացքում առանձին պատգամավորների գրաված գիրքի մասին, Վ. Ի. Լենինը նշում է Բ. Կնունյանցի և Ա. Զուրաբովի (Բեկով)³, որպես իսկրա-

Յ. Ա. Գուրաբովը (1873—1920) 1896 թ. մտել էր «Պետքարուրգի բանվոր դասակարգի ազատազրության պայքարի միության» մեջ, 1899 թ. ակտիվ աշխատանք էր կատարում ՌՍԴԲԿ թիֆլոսի կոմիտեում, 1902 թ. «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» և նրա օրգան «Պրոլետարիատ» լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն թիրթի կազմակերպիչներից էր: 1903 թ. մտնում է ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի կազմում, ՌՍԴԲԿ II համագումարում՝ Բաթումի կոմիտեի պատգամավորն էր, մեծամասնության իսկրայական: Համագումարից հետո բոլշևիկ էր, 1906 թ. հարում է մենշևիկներին, աշխատում բնդհատակում, բանտարկվել է Պետրոպավլովյան բանտում, աքսորվել Սիրիո, որտեղից փախչում է արտասահման: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո լենինի հետ վերագառնում է Ռուսաստան, մտնում Պետրոգրադի կոմիտեի կազմի մեջ: Լենինը նշել է Զուրաբովի ծառայությունները բուրժուական զրպարտություններից բոլշևիկների պաշտպանության գործում: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխատում է Անդրկովկասում, մերձենում բոլշևիկներին, ակտիվ պայքարում մենշևիկների ու դաշնակների դեմ՝ հանուն սովետական իշխանության, հանդես է գալիս Սովետական Ռուսաստանի հետ սերտ կապեր հաստատելու օգտին:

յական մեծամասնության պատգամավորների, դորձնական ելույթները բունդի գեմ, լեզուների իրավահավասարության և այլ հարցերում:


Իր խմբագրած «Խսկրա» թերթում Լենինը տպագրել է Կնունյանցի բազմաթիվ հոդվածները՝ կուսակցության կազմակերպչական, տակտիկական հարցերի, հայկական իրականության և հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին. բարձր գնահատական տվել դրանց:

1903 թ. Հոկտեմբերի 7-ին Վ. Ի. Լենինը և Գ. Վ. Պլեխանովը Ժնևից Թիֆլիս՝ ՌՍԴԲԿ Կովկասյան Կոմիտեի հասցեով գրում էին. «Թանկագին ընկերներ: Մենք ձեր դործերի մասին տեղեկություն ստացանք թե՛ Ռուբենից անձնապես և թե՛ Ռաշիդ-Բեկից գրավոր...»⁴:

Ռուբենը Բողդան Կնունյանցի ծածկանուններից էր, իսկ Ռաշիդ-Բեկը՝ Արշակ Զուրաբյանի: Նրանք սերտ կապերի մեջ էին և նամակագրություն ունեին Լենինի հետ, կատարում էին նրա պատասխանառու հանձնարարությունները:

1904 թ. հայ մարքսիստները Լենինի օգնությամբ Ժնևում ստեղծեցին հայերեն և վրացերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականություն հրատարակելու հանձնաժողով, որը թարգմանում և տպագրում է Մարքսի, Էնգելսի, Լենինի մի շարք աշխատությունները և կուսակցական փաստաթղթեր: Լենինի հանձնարարությամբ այդ

⁴ Վ. Ի. Լենին, Երկեր, Համ., 34, էջ 198:



Սահման Շահումյան



Ն. Կ. Կրոպսկայա

Հանձնաժողովը գլխավորում էր Ստեփան Շահումյանը: Հանձնաժողովի կազմում էին Արամացիս Երզնկյանը (Գուգարիա) և Միքայել Մանուշարյանը (Կարյան):

Վ. Ի. Լենինը ժնկում հանդիպում էր հանձնաժողովի անդամներին, ոեփերատներ էր կարդում հանձնաժողովի օգտին:

1904 թ. նոյեմբերին Ս. Շահումյանը մի խումբ հայ ուսանողների անունից նամակով դիմում է Լենինին՝ խնդրելով աշխատակցել հայերեն պատրաստվող մարքսիստական ժողովածուին, որը պետք է հրատարակեին հայ բոլշևիկները: «Խընդրում եմ Ձեզ, — զրում է Շահումյանը, — Եթե ժամանակներդ կների կամ եթե որեէ պատրաստ բան ունեք, չմերժել: Այդ հրատարակությունից գանձված միջոցներն անտարակույս կդնան կուսակցության օգտին...»⁵:

1905 թ. Հունվարին մի այլ նամակով Շահումյանը Լենինին տեղյակ է պահում «Հնչակ» կուսակցության մեջ տեղի ունեցած պառակտման և նրա ղեկավարներից մեկի՝ Ա. Նազարենի խըմբագրությամբ Բոլղարիայում (Բուշչուկ) լույս տեսնող «Ապագա» թիրթի մասին և խնդրում է Լենինին պատասխանել դաշնակցության օրդան «Թրոշակ» թիրթում տպագրված «Աղանդավորությունը հեղափոխական շարժման մեջ» հոդվածին, որի թարգմանությունը խոստանում էր ուղարկել:

5 Ա. Գ. Շահումյան, Ելք, հատ. 1, էջ 56:

Նամակի հետ միասին Շահումյանը կենինին է ուղարկում «Ապագայի» մասին իր հոդվածը, որը տպագրվում է բոլշևիկյան «Կալերցող» թիրթի փետրվարի 8-ի համարում։ Շահումյանը չերմորեն ողջունում է «Ապագայի» երեան գալը, որովհետեւ այն իր № 1-ի առաջնորդողում հավաստիացնում էր, որ սոցիալ-դեմոկրատական պրոպագանդա է մղելու Կովկասի հայ բանվորների մեջ, ամռն կերպ ձգտելու է հայկական սոցիալ-դեմոկրատական բոլոր ուժերը համախմբելու Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորների միասնական դրոշի ներքո⁶։

Այդ տարիներին Ռուսաստանում բուռն վերելք էր ապրում ժողովրդական հեղափոխությունը, և բոլշևիկները Վ. Ի. Լենինի զլխավորությամբ ամռն ինչ անում էին դեմոկրատական բոլոր ուժերին համախմբելու ցարիզմի դեմ մղվող պայքարում։ Լենինի հանձնարարությամբ Շահումյանը աշքի ընկնող աշխատանք է տանում դաշնակցականների ազգեցության տակ գտնվող «Եվրոպայի հայ ուսանողների միության» մեջ, որն իր խմբերն ուներ մի շարք քաղաքներում։ 1905 թ. մարտի 18-ին Բեռլինից Ս. Շահումյանը և Մ. Մանուչարյանը ժնկյան հանձնաժողովի անունից նամակ են գրում Ռ.ՍԴ.Բ.Կ Կենտրումին, հայտնելով, որ ապրիլի 1-ին Բեռլինում տեղի է ունենալու «Եվրոպայի հայ ուսանողների միության» կոնգրեսը, թույլտվու-

թյուն ու օդնություն են խնդրում նրան մասնակցելու՝ հայ ուսանողությանը սոցիալ-դեմոկրատիայի շուրջը համախմբելու համար⁷:

Շահումյանը և նրա կողմնակիցները մասնակցելով կոնգրեսին, որոշում են «Միությունը» ցրել և հեռանում են նրա նիստից: Ապրիլի 17-ին լենինյան «Վաղերյող» թերթը հրապարակում է Շահումյանի կազմած «Եվրոպայի հայ ուսանողների միության» 6-րդ կոնգրեսին մասնակից սոցիալ-դեմոկրատական պատգամավորների և անդամների մանիֆեստը՝ ուղղված «Եվրոպական բոլոր հայ սոցիալ-դեմոկրատ ուսանողներին»:

«Այսուհետեւ,—ասված էր մանիֆեստում,— հիշյալ «Միությունը» չի կարող համարվել մի կուլտափառ ամբողջություն, որն ընդգրկեր ամբողջ հայ ուսանողությունը, քանի որ ուսանողների բարականաշափ զգալի մասը անջատվում է նրանից: Ինքնին հասկանալի է, որ ինչպես ներկայիս, այնպես էլ ապագայի սովորող հայ սոց.-դեմ. ուսանողությունը պրոլետարական-դասակարգային շահերի տեսակետից չի կարող մի ամբողջության մեջ ձուլվել և համատեղ աշխատել ուսանողության մեջ եղած այն տարրերի հետ, որոնք իրենց հասարակական հայացքներով և գործնական ձգտումներով կանգնած են նացիոնալիստական շահերի տեսակետի վրա»⁸:

7 Նույն տեղում, էջ 62—63:

8 Նույն տեղում, էջ 65:

Այս ապացուցող կարենոր փաստաթղթեր են ՍՍՀՄ դիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Տիգրան Մելքոնովիչ Տուրպակի կողմից մեզ տրամադրած նամակները իր հոր՝ Մ. Տուրպակի վանովիչ Տուրպակի անձնական արխիվից⁹: Մ. Ի. Տուրպակը (1882—1939), ինչպես և նրա եղբայրը՝ Պետրոս Տուրպակը (Պետյա) Աստրախանի հայերից էին: 1905—1911 թթ. նրանք սովորում ու աշխատում են Շվեյցարիայում և կապեր հաստատում ժնկի և նեղատելի սոցիալ-դեմոկրատական շրջանների հետ: Այդ ժամանակ ժնկի էր ապրում նաև Տուրպակների հոր մոտիկ ընկեր, բոլշևիկ Հմայակ Ավետովը:

Մ. Տուրպակը իր եղբայր՝ Պ. Տուրպակին դրած 1905 թ. մարտի 3-ի նամակում հայտնում է, որ ինքը ժնկից գնալու է Բեռլին՝ մասնակցելու ռեվրոպայի հայ ուսանողների միության» համագումարին, որտեղ իրենց կողմնակիցները, մոտ 16 հոգի, կազմակերպված կերպով պայքարելու են նացիոնալիստների դեմ, նրանց շարքերում պառակտում մտցնելու և գրականության հրատարակման համար հավաքված միջոցները փոխանցելու սոցիալ-դեմոկրատական գրականության օգտին: Նույն տարվա մարտի 15-ին Մ. Տուրպակը եղբորը դրում էր հայ ուսանողների

⁹ Օգտվելով առթից, շնորհակալություն ենք հայտնում Տ. Մ. Տուրպակին՝ հիշյալ արժեքավոր փաստաթղթերը մեզ տրամադրելու համար:

սոցիալ-գնմոկրատական միություն առեղծելու իրենց մտապրության մասին:

Պետքոս Տուրպակը 1907 թ. մայիսի 23-ին կեժից եղբորը զրած համակում հայտնում էր, որ վերջնը իրենց մոտ է եղել Վ. Ի. Լենինը, հանդիս եկել ոեֆերատով։ Պ. Տուրպակը բոլշևիկների հանձնարարությամբ ակտիվ մասնակցություն է ունենում արտասահմանում զենք գնելու և Ռուսաստան ուղարկելու գործին։

1906 թ. ապրիլին և 1907 թ. մայիսին, որպես ՌՍԴԲԿ IV և V համագումարների պատգամավոր, Ս. Շահումյանը Ստոկհոլմում և Լոնդոնում աշխատում է Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, որն այդ համագումարներում ղեկավարում էր բոլշևիկների գործունեությունը։ Հիշյալ համագումարներում Շահումյանի մանդատները հաստատել էր Լենինը։

Որպես ՌՍԴԲԿ Լոնդոնի համագումարի պատգամավոր՝ Բորչալուի կուսակցական կազմակերպությունից, այնտեղ Լենինի հետ հանդիպումներ է ունենում բանվոր-հեղափոխական Ասատուր Կախոյանը, որն այդ մասին հրատարակել է իր Հիշողությունները¹⁰։

1907 թ. աշնանը Շահումյանի հանձնարարությամբ Ֆինլանդիայում Վ. Ի. Լենինի մոտ է լինում Արկադի (Արշակ) Նազարի Աթաբեկյանը,

10 Տե՛ս Ա. Կախոյան, Հոդվածներ և հուշեր, Երևան, 1963, էջ 222—233։

որը կուսակցության առաջնորդին է հանձնում կովկասյան բոլշևիկների հաշվետվությունը:

1907 թ. աշնանը Ֆինլանդիայում կենինն ընդունում է կովկասյան մարքսիստների մի խումբ (Ա. Լուկաշին, Դ. Շահվերդյան, Ա. Կարինյան, Տ. Տեր-Ղեոնդյան, Գ. Մելիք-Բաղդասարյան և ուրիշներ), նրանց հետ զրոյց է ունենում ուստիան հեղափոխության զարգացման հեռանկարների մասին, հետաքրքրվում է կովկասյան գործերով:

«Մոտ երեք ժամ խոսեց կենինը, կամ ավելի ճիշտ զրուցում էր,—ճիշտում է Ա. Կարինյանը,—նա շարունակ հարցեր էր տալիս և ինքն էր պատասխանում, պատասխաններ, տրոնք հիմնված էին փաստերի, թվերի, արտադրողական ուժերի դիալեկտիկական զարգացման տրամաբանության վրա.

Մենք լսում էինք առանց հոգնելու, լսում և համոզվում էինք...»¹¹:

1910—1911 թթ. Փարիզում կենինի հետ հանդիպում են ունենում Հայ Հայտնի քանդակագործ Հակոբ Գյուրջյանը և երգիչ Տիգրան Նալբանդյանը: Նալբանդյանը կենինին և «Պրոլետարի» թերթի խմբագրության անդամներին հրավիրում է իր համերգին:

Հին հեղափոխական երվանդ Զավադի Պողոսյանը հպարտությամբ է ճիշտում, որ 1910 թ. մասնակցելով կոպենհագենի II ինտերնացիոնալի

11 «Գրական թերթ», 27 հունվարի 1934 թ.:

VIII կոնգրեսի աշխատանքներին, տեսել ու լսել է վ. ի. Անդրեասյանը: 1913 թ. աշնանը վ. ի. Անդրեասյանը ներկա է լինում այն ժամանակ Լայպցիգի համալսարանի ուսանող, հետազայտմականավոր մանկավարժ պրոֆեսոր Արշավիր Շավարշյանը: «Վլադիմիր Իլյիչը լայպցիգյան իր պատմական դասախոսությամբ անջնջելի տպավորություն թողեց իրեն ունկնդրող ուսանողների վրա»¹², — հիշում է հետազայտմ Ա. Շավարշյանը:

Ուշագրավ է, որ հայ առաջավոր գործիչները արտասահմանից Հայաստանի հեղափոխության թանգարանին նվեր են ուղարկել այն շախմատը, որով խաղացել է Անդրեասյանի Փարիզում, 1908—1910 թթ.:

Արտասահմանյան գործունեության ծանր պայմաններում ամրապնդվում ու սեբտ են դառնում Անդրեասյանի կապերը Վլադիսլավ Կասպարյանցի (Սլավա Կասպարով), Ալեքսանդր Բեկզադյանի, Կամոյի (Ախմոն Տեր-Պետրոսյան), Սուրեն Սպանդարյանի, Սարգիս Բաղդատյանի և շատ ուրիշների հետ:

12 «Անդրեասյանի հետ: Վավերագրեր և հուշեր», Երևան 1969, էջ 341:

«ԵՍ ԼԻՌՎԻՆ ՎԱՏԱՀՈՒՄ ԵՄ ՇԱՀՈՒՄՑԱՆԻՆ»

Այսպես է զրել Հեղափոխության առաջնորդ վ. ի. Լինինը Բաքվի կոմունայի ղեկավար Ստևան Շահումյանի մասին։ Այս վստահությունը ամբապնդվել էր ոռոսական երեք Հեղափոխությունների բովում։

1908 թ. ռեակցիայի դաժան ժամանակաշրջանում իր բարեկամ, կուսակցության ականավոր գործիչ Միխա Յիսակայային զրած նամակներում Շահումյանը Անդրկովկասի բոլշևիկների անունից հայտնում էր. «Մինք հաստատ համոզված ենք իլլիչի դիրքորոշման ճշտության մեջ», «մինք ամբողջովին իլլիչի կողմն ենք»։

Լինինի և Շահումյանի նամակագրությունն առանձնապես ուժեղացավ 1913—1914 թթ.: Իր նամակներում Շահումյանը կարծիքներ էր փոխանակում Լինինի Հետ, նյութեր էր ուղարկում նրան՝ Կովկասում աղքային Հարցի վերաբերյալ։

1913 թ. օգոստոսի 24-ին Պորոնինոյից Աստ-

1 Տե՛ս վ. ի. Լինին, Երկեր, Հատ. 35, էջ 380.

Amorphosphaera

Good evening Doctor!

Самый интересный аспект погребения, очевидно, не монументальное изображение, а надгробие, изображающее коня на боевом снаряде. Тот же конь приводит к погребению коня на боевом снаряде в Азии. За исключением азиатских находок она обращается к русскому погребению и просит заставить:
Бородова - на речу „Иконопочтение
члене К. Багаца“. Азиатский
национальный бородок сформи-
рован гипсом. настежи на голове.
Однако - о погребении коня
за камнем в сбруи с пасхой из
последнего. - Тот же погребальный
мантий просит Вас в Николо-

Վ. Ե. Ավելինին Ս. Գ. Շահումյանի գրած 1904 թ.

Հոյեամբերի 28-ի նամակի առաջին էջը:

բախտան Ա. Շահումյանին ուղարկած նամակում
վ. ի. կենինը զբում էր. «Թանկապին ընկեր: Վե-
րադառնալով տուն, ևս գտա ձեր նամակը: Ան-
4-70

պայմանուրեն ավելի շատ նյութեր ուղարկեցիք աղջային հարցի մասին Կովկասում (քանի որ Դուք, դժբախտաբար, ինքներդ գրել չեք կարող). Ա՛ Կոստրովի Հողվածը, և՛ նրա զրբուշկները, պատգամավորների զեկուցումները սուսերեն թարգմանությամբ (Հուսով ևմ, կգտնեք որեէ մեկին, որին կարելի է հանձնարարել), և՛ Կովկասի ազգությունների վիճակագրությունը, և՛ նյութեր Կովկասում, Պարսկաստանում, Թուրքիայում և՛ Ռուսաստանում աղջությունների հարաբերությունների մասին, մի խոսքով՝ այն բոլորը, ինչ կա ու ինչ հավաքել կարող եք, ուղարկեցեք: Մի մոռացեք նույնպես փնտրել այնպիսի կովկասցի-ընկերներ, որոնք կարողանային Կովկասում աղջային հարցի մասին Հողվածներ գրել»^{2:}

Չնայած աշխատանքի ծանր պայմաններին, Շահումյանին հաջողվում է հանրամատչելի բրոշյուր գրել աղջային հարցի վերաբերյալ՝ «Աղջային կուլտուրական ավտոնոմիայի մասին» վերնագրով և 1914 թ. Հրապարակել հայերեն:

Իմանալով այդ մասին, Վ. Ի. Լենինը 1914 թ. մայիսին Ս. Շահումյանին գրած նամակում առաջարկում է դրա վերաբերյալ անպայման հաղորդում տալ հեղինակի կողմից կամ շարադրանքը՝ «Պրոսվեցենիէ» բոլշևիկյան հանդեսի համար^{3:} Շահումյանի բրոշյուրը կարևոր դեր խաղաց նա-

2 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 35, էջ 104:

3 Նույն տեղում, էջ 140:

յիոնալիստների մերկացման և հայ աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության գործում:

Լենինն առաջարկում էր Շահումյանին «կուտառուր-ազգային ավտոնոմիստների հիմարության դեմ պայքարելու» իր պլանը, շարադրում ազգերի իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասսին օրենքի նախադիի հիմնական հարցերը բոլցիկիյան ֆրակցիայի կողմից Պետական դումա մըտցընելու համար⁴: «Եկեք զրենք այդպիսի նախադի,— նշում էր Լենինը:— Ինձ թվում է, որ այս ճանապարհով կարելի կլինի հանրամատչելիորեն պարզաբանել կուտառուր-ազգային ավտոնոմիայի հիմարությունը և վերջնականապես սպանել այդ հիմարության կողմնակիցներին»⁵:

1915 թ. Հոկտեմբերի 1-ին Վ. Ի. Լենինին և Ն. Կ. Կրուպսկայային զրած ծածկագիր նամակում հետեւղականորեն պաշտպանելով պատերազմի վերաբերյալ լենինյան հայացքները, Ստ. Շահումյանը հայտնում էր կուսակցության առաջնորդին Կովկասում բոլշևիկյան կառմակերպությունների գործունեության մասին, նշում էր Լենինի նամակ-

⁴ Շահումյանին զրած նամակում շարադրված պլանը զըրմեց Լենինի «Ազգերի իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության օրենքի նախադի» հիմքում:

⁵ Վ. Ի. Լենին, Երկեր, Հայտ, 35, էջ 141:

ների, խորհուրդների, ցուցումների խոշոր նշանակությունն իրենց համար: «Չեր նամակները, խորհուրդները և ցուցումները,—գրում է Շահումյանը,—ինձ համար միշտ ամեն բանից թանկ են եղել... ընդհանրապես ասած՝ թույլ եմ տալիս կարծելու, որ ես և մեր բոլոր ազգականները [բոլշևիկները] բարձր ենք պահում մեր ընտանեկան [բոլշևիկյան կուսակցության] դրոշակը և որ Դուք կարող եք մեր ոեպուտացիայի համար հանսպիստ լինել»⁶:

1917 թ. Հունիսին Պետրոգրադում Շահումյանը կրկին հանդիպում է Լենինի հետ և ապա վերադառնում Կովկաս՝ հանուն սովետական իշխանության պայքարը ղեկավարելու համար: 1918 թ. մայիսի 14-ին Շահումյանին ուղարկած նամակում Լենինը գրում էր. «Մենք հրճվանքի մեջ ենք Չեր Հաստատակամ և վճռական քաղաքականությունից»⁷:

Օգոստոսի 9-ին վ. ի. Լենինը հարցում անելով Աստրախանի Սովդեպին՝ Բարվի դրության և անձամբ Ս. Շահումյանի մասին, նշում էր. «Ես լիովին վստահում եմ Շահումյանին» և առաջարկում էր օդնություն կազմակերպել կոմունարներին⁸:

Ս. Շահումյանը և նրա գլխավորած Բարվի կոմի-

6 Ստ. Շահումյան, Ելժ, Հատ. 3, էջ 14, 15:

7 Վ. ի. Լենին, Երկեր, Հատ. 35, էջ 359:

8 Նույն տեղում, էջ 380:

սարները, որոնք գաղանաբար դնդակահարվեցին անգլիական իմպերիալիստների և նրանց էսէսական վարձկանների կողմից 1918 թ. սեպտեմբերի 20-ին, Լինինի հուսալի հենարաններն էին լովկասում:

«ԱՆՁԱՄԲ ՃԱՆԱՋՈՒՄ ԵՄ»

Լենինը բազմիցս նշել է, որ ինքը Կամոյին ճանաշում է անձամբ և շատ բարձր է գնահատում, դիտե նրան Հիմնավոր կերպով «որպես միանգամայն բացառիկ նվիրվածության, խիզախուրյան և հոանդի տեր մարդու»¹:

Անկետայի այն հարցերին, թե ինքը ենթարկվել է Հալածանքների կուսակցական աշխատանքների համար և ի՞նչ հեղափոխական գործունեություն է ունեցել, Կամոն Հակիրճ պատասխանել է. «Զերբարկալվել եմ 6 անգամ, փախել եմ 3 անգամ, 4 անգամ դատապարտվել եմ մահապաժճի, որը փոխարինվել է 20 տարվա տաժանակիր աշխատանքի... 1) Անլեզար գրականություն Բաթում տեղափոխելու համար 1903 և 1905 թթ. բանտարկվել եմ 10 ամիս (փախել եմ), 2) 1905 թ. դինված ապստամբությանը մասնակցելու համար 5 անգամ վիրավորվել եմ և ձերբարկալվել 2 և կհս ամիս (փախել եմ), 3) 1907—1908—

¹ В. И. Ленин, ПСС, т. 51, стр. 42.

1909 թթ. զենքի և պայթուցիկ նյութերի տեղափոխումը կազմակերպելու համար Գերմանիայում ձերբակալվել էմ. Բեռլինի բանտում և հոգեբուժարանում շարի, լստ որում հանձնվել էմ Ռուսաստանին որպես հիվանդ: Ռուսաստանում—Թիֆլիսում՝ կրկին բանտում և հոգեբուժարանում 1909—1911 թթ. (փախել էմ), 4) 1912 թ. բռնվել էմ Սոֆիայում (Բուլղարիա), 5) Թուրքիայում—Կոստանդնուպոլսում՝ դինամիտ փոխադրելու համար, 6) Թիֆլիսում 1913 թ. 4-րդ անգամ դատապարտվել էմ մահապատճի, որը մանիֆեստով փոխարինվել է 20-ամյա տաժանակրության, իսկ ապա ներվել էմ 6/3—1917 թ.: Վրաստանում 1920 թ. հունվարի 15-ին բանտարկվել էմ 2 և կես ամսով և ազատվել էմ»²:

1906—1912 թթ. Լենինի հանձնարարությամբ Կամոն մեծ գործունեություն է ծավալում արտասահմանում: Լինում է Եվրոպայի 19 պետություններում:

1907 թ. հունիսին Կամոն իր ընկերների հետ Թիֆլիսում, Երևանյան Հրապարակում կազմակերպում է 250 հազար ոռուլի գումարի էքսպրոպրիացիա՝ կուսակցության կարիքների համար. Հետագայում Կամոն այդ մասին գրել է. «...Կուսակցության գինանսական դրությունը ծայրահեղ դժվար էր: Դրամ չկար, անհրաժեշտ էր ուժեղ և

² ԱՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 31:

համարձակ հարված հասցնել ցարիզմին, ապացուցելու համար, որ կուսակցությունը կհնդանի է, հեղափոխական ուժերը քնած չեն, այլ պատրաստվում են նոր մարտերի: Անհրաժեշտ էր օգնել կուսակցությանը ֆինանսական հարցերում՝ հեղափոխական գրականության հրատարակությունը ուժեղացնելու համար»: Այդ արտակարգ խիզախ ու անձնվեր գործի կազմակերպումից հետո Կամոյին հաջողվում է անցնել Պետերբուրգ, ապա Ֆինլանդիա, ուր Հուլիս-օգոստոսին ապրում է Լենինի մոտ: Կամոյի այդ շրջանի գործունեության մասին Ն. Կ. Կրուպսկայան պատմում է. «Նա ջերմորեն կապված էր Իլլիշին... Լինում էր մեզ մոտ Կուոկալայում: Մտերմացավ մորս հետ, ովատմում էր նրան իր մորաքրոջ, իր քույրերի մասին: Կամոն հաճախ գնում էր Ֆինլանդիայից Պիտեր, միշտ իր հետ զենք էր վերցնում, և մայրս ամեն անգամ հատուկ խնամքով ատրճանակնար էր կապում նրա մեջքին»³:

Անսահման նվիրվածությունն ու մահրմաւթյունը կուսակցության առաջնորդի հետ խոշոր նշանակություն են ունենում Կամոյի հեղափոխական գործունեության համար, դարձնում են նրան էլ ավելի համարձակ ու անհողողդ լենինյան:

Վ. Ի. Լենինի խորհրդով Կամոն գնում է Գերմանիա, աշխատում այնտեղի սոցիալ-դեմոկրա-

3 Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, Երևան, 1977, էջ 162:



Սուրեն Սպանդարյան



կամն

տական կազմակերպություններում, կատարուծ կուսակցական հանձնարարություններ:

1907 թ. նոյեմբերին ցարական պրովոկատոր Ժիտոմիրսկու մատնությամբ Կամոն Բեռլինում ձերբակալվում է: Հետապնդելով էքսպրոպրիացիայի մասնակիցներին, ձերբակալություններ են կատարվում Բեռլինում, Մյունխենում, Փարիզում, Կուպենհագենում, Ստոկհոլմում, Ժնևում: Այս մասին ն. Կ. Կրուսկայան «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին» գրքում գրել է. «Հեղափոխության թեժ պահին, երբ ծավալուն պայքար էր տեղի ունենում ինքնակալության դեմ, բոլշևիկները թույլատրելի էին համարում ցարական գանձարանի գրավումը, թույլատրելի էին համարում էքսպրոպրիացիան: Թիֆլիսի էքսպրոպրիացիայի դրամները հանձնված էին բոլշևիկյան ֆրակցիային... Մի խումբ ընկերներ փորձեր արեցին մանրելու հինգհարյուրանոցները արտասահմանում միաժամանակ, մի շարք քաղաքներում: Հենց մեր արտասահման զալուց ուղիղ մի քանի օր հետո նրանք փորձել էին մանրել այդ փողերը: Այդ մասին գիտեր և մանրելուն մասնակցում էր պրովոկատոր Ժիտոմիրսկին: Այն ժամանակ ոչ ոք չգիտեր, որ Ժիտոմիրսկին պրովոկատոր է, և ամենքըն էլ վերաբերվում էին նրան կատարյալ վստահությամբ: Իսկ նա այդ ժամանակ արդեն Բեռլինում մատնել էր ընկ. Կամոյին, որից խլել էին դինամիտով լի համարուկը և որը ստիպված էր եր-

կար ժամանակ նստել գերմանական բանտում»⁴:

Զերբակալվածների թվում էին նաև Տիգրան Բաղդասարյանն ու Միհրան Խոջամիրյանը: Տ. Բաղդասարյանը ուսանող էր, եկել էր Թավրիզից, ժնեում նա մտել էր տեղի բոլշևիկյան սեկցիայի մեջ: Մ. Խոջամիրյանը 1902 թ. Բարվում բնդունվել էր ՌՍԴԲԿ շարքերը, կուսակցության II համագումարից հետո հարել բոլշևիկներին⁵:

Յարական կառավարությունը պահանջում էր իրեն հանձնել ձերբակալվածներին որպես քրիստոնեան հանցագործների:

Վ. Ի. Լենինը մեծ ջանքեր է դորձագրում՝ ձեռքափոխականներին դաժան դատարանից փրկելու համար:

1908 թ. մայիսին Վ. Ի. Լենինը պաշտոնապես դիմում է զերմանական սոցիալիստ փաստաբան Բերնհեյմին, Հաստատելով, որ 1907 թ. հունիսի 13-ին Թիֆլիսում կամոյի ղեկավարությամբ էքսպրուրիացիայի ենթարկված դրամը մանրելու կապակցությամբ Մյունիսենում ձերբակալված

⁴ Նույն տեղում, էջ 182—183:

⁵ 1905—1914 թթ. Մ. Խոջամիրյանը ապրում էր վարանգության մեջ, մասնակցում ժնեում լուս տեսնող զրականակիտական ու քաղաքական «Ժաղուզա» բոլշևիկյան ուղղության հանդեսի հրատարակմանը, որի խմբագրական կոլեգիայում էին Մ. Ցիսակյան, Ն. Անմաշկոն և ուրիշներ: Հանդեսին աշխատակցում էր Բ. Կուտնյանցը: 1914 թ. Խոջամիրյանը վերադառնում է Կովկաս: Հայաստանում սովորական կարգերի հաստատումից հետո աշխատում է ֆինանսական օրգաններում:

Ա. Ն. Ռավիչը, Մ. Խ. Խոջամիրյանը և Տ. Բաղդասարյանը ՌՍԴԲԿ անդամներ են: Մեկ այլ նամակում՝ ուղարկված Լոնդոնից Բրյուսել՝ Միջազգային սոցիալիստական բյուրոյի քարտուղար Կ. Հյուկիսմանսին կենինը հայտնելով Ռավիչի, Խոջամիրյանի և Բաղդասարյանի ձերբակալման մասին, խնդրում է ՄՍԲ-ի անունից հաստատել նրանց պատկանելիությունը ՌՍԴԲԿ-ին: Հյուկիսմանսն անմիջապես պատասխանում է կենինի նամակին, հաղորդելով, որ ուղարկված են ձերբակալված սոցիալ-դեմոկրատների բնութագրերը:

Վ. Ի. կենինի ջանքերի շնորհիվ հաջողվում է Խոջամիրյանին և Բաղդասարյանին տասնհինգտասնությունից հետո ազատել:

1909 թ. հուլիսի 17-ին կենինը հատուկ նամակով խնդրում է Հյուկիսմանսին՝ երաշխավորությով բանտից ազատված բոլշևիկ Տ. Բաղդասարյանին տեղափորել աշխատանքի:

Առանձնապես մեծ ջանքեր գործադրեց կենինը՝ կամոյին սպառնացող մահապատժից փրկելու համար:

Զերբակալումից հետո Կամոն բանտարկվում է Բեռլինի Մոարիտի բանտում, որտեղ խիստ վտանգավոր, բայց հերոսական որոշում է ընդունում՝ խելագար ձևանալ՝ ազատվելու համար ուտիկանական հետապնդումներից և ցարական կառավարության դատաստանին հանձնվելուց:

Վ. Ի. կենինն ուշադիր հետեւում էր այս բոլորին: Նա հանձնարարում է Մ. Մ. Լիտվինովին դի-

մելու Կարլ Լիբկնեխտին՝ Կամոյի պաշտպանությունը Բեռլինում կազմակերպելու համար։ Կ. Լիբկնեխտը գերմանական սոցիալ-դեմոկրատիացի ականավոր գործիչներից մեկի՝ իրավաբան Օսկար Կոնի հետ միասին մի քանի անգամ Կամոյին այցելում է բանտում։ Երբ մի անգամ Կ. Լիբկնեխտի հետ միասին Կոնը եկավ ինձ մոտ, հիշում է Կամոն, — «Հս գաղտնի նրան հասկացնել տվի, որ իրականում ես լրիվ առողջ եմ։ Նրանք շատ ուրախացան»⁶։ Կամոյի հետ հանդիպումներ են ունենում նաև մյուս սոցիալ-դեմոկրատական գործիչները։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ բանտում մի քանի անգամ Կամոյին այցելում է բոլշևիկյան կուսակցության հնագույն գործիչ Լ. Բ. Կրասինը։ Լիբկնեխտի առաջարկով Օսկար Կոնը, սրպես հմուտ դատապաշտպան, իր վրա է վերցընում Կամոյի պաշտպանությունը։ 1909 թ. սեպտեմբերին Կ. Լիբկնեխտը գերմանական պառամեմուստում (Ռայխստագ) հարցապնդում է անում, պահանջելով ազատել Կամոյին բանտից և շհանձնել նրան ցարական կառավարությանը։ Սակայն գերմանական ուսակցությունը կառավարությունը, որպես արտակարգ վտանգավոր «հանցագործի», Կամոյին շղթայված ուղարկում է Թիֆլիս։ Սկզբունքավոր է Մետեխի բանտում, ապա Միքայելյան հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում։

6 ԱՄԿՊ ԿԱՆՏԿՈՄԻՆ կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 31, գ. 6, թ. 3։

վ. ի. լենինի առաջարկով Կամոյին փրկելու համար աշխատանքը շարունակվում է: Գերմանական սոցիալ-դեմոկրատները Օ. Կոնի միջոցով Ռուսաստան են ուղարկում Կամոյի հիվանդության մասին բոլոր նյութերը:

Կամոյի պաշտպանությամբ վճռականորեն հանդես են գալիս ֆրանսիական սոցիալիստական «Յումանիտե» թերթը, գերմանական «Ֆրանկֆուրտեր ցայտունգը»: Կամոյի բույրը՝ ճին բոլշևիկ ջավաճիր Տեր-Պետրոսյանն իր հուշերում պատմում է, որ Օ. Կոնն անմիջապես կապեր է հաստատում իր հետ, փոխադրում նրան 200 ռուբլի և հաղորդում մանրամասն տեղեկություններ Կամոյի մասին⁷:

Մինչ Կամոյի փրկության կամպանիան դրսում շարունակվում էր, ընկերները նախապատրաստում էին նրա փախուստը Թիֆլիսի Միքայելյան հիվանդանոցից, որը հաջողությամբ իրականացվում է 1911 թ. օգոստոսի 15-ին: Թիֆլիսի սատիկանապետի տան նկուղային հարկում մի քանի օր մնալուց հետո Կամոն Բաթումից նավով անցնում է արտասահման: Նախապես պլանավորելով թաքնվել սատիկանապետի տանը, Կամոն հույս ուներ, որ ոչ ոք չի կարող կասկածել: Այդպիս էլ եղավ: Արտասահմանից Կամոն նամակ է գրում դատախազին և սատիկանապետին, հեգնանքի ողջույններ է

7 Նույն տեղում:

ուղարկում նրանց, ավելացնելով «իզուր ևն ձեր չարշարանքները, իզուր՝ ձեր որոնումները»:

Կամոն անմիջապես զնում է Փարիզ՝ Վ. Ի. Լենինի մոտ: 1909—1912 թթ. Վ. Ի. Լենինը, Ն. Կ. Կրուպսկայան և կուսակցության մի շարք այլ ականավոր գործիչներ ապրում էին Փարիզում: Այնտեղ էր տեղափոխված կուսակցության կենտրոնական օրգան «Պրոլետարի» հրատարակչությունը: Այդ տարիներին Փարիզ, կուսակցության առաջնորդի մոտ էին զնում կովկասյան շատ էմիգրանտ բոլշևիկներ, որոնք Վ. Ի. Լենինի անմիջական զեկավարությամբ ակտիվ մասնակցություն էին ունենում Փարիզի բոլշևիկյան խմբի աշխատանքներին: Իր հիշողություններում պատմելով Կամոյի մասին, Ն. Կ. Կրուպսկայան նշում է, որ նա «եկել էր Փարիզ՝ իլլիշի հետ խոսելու... իլլիշը պատմեց նրան գործերի դրության մասին»⁸: Կամոն Փարիզում Վ. Ի. Լենինի հետ մնում է երկու ամիս, անցնելով հեղափոխական հաստիության մեծ դպրոց: Այդ ժամանակամիջոցում նրանք բազմիցս զրոյցներ են ունենում: Կամոն պատմում է Կովկասում հեղափոխական շարժումների և բոլշևիկյան կազմակերպությունների վիճակի, իր հետագա պլանների մասին: Վ. Ի. Լենինն ուշադիր լսում է նրան, ուղղություն տալիս Կամոյի գործունեությանը: Ն. Կ. Կրուպսկայան, պատմելով Վ. Ի. Լենինի մեծագույն հոգատարության մա-

⁸ Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, Էջ 224:

ւին Կամոյի նկատմամբ, դրում է, որ Լենինը «զգուշությամբ աշխատում էր իրական ուղղութանքնել Կամոյին, խոսում էր տրանսպորտ կազմակերպելու մասին և այլն։ Վերջիվերջու վճռվեց, որ Կամոն կզնա Բելգիա, այնտեղ աշքերը վիրահատության կենթարկի (նա շիլ էր և լրտեսները միանգամից ճանաչում էին նրան այդ նշանից), իսկ ճետու ծովով կանցնի Հարավ, և այնտեղից՝ եռվկաս»⁹։

Վ. Ի. Լենինը հոգ է տանում Կամոյի բուժման դրամական ծախսերի մասին, նշում է այն մասնագետներին, որոնց հետ նա պետք է կապվի, տալիս է նրան իր մոր ամենասիրելի նվերը՝ վերարկուն։ «Տեսնելով Կամոյի վերարկուն,—հիշում է Ն. Կ. Կրուպսկայան,— իլլիցը հարցրեց. «Ունե՞ք արդյոք տաք վերարկու, չե՞՞ որ ցուրտ կլինի ձեզ համար նավի տախտակամածի վրա ման զալիս»... Եվ երբ պարզվեց, որ Կամոն ոչ մի ուրիշ վերարկու չունի, իլլիցը տվեց նրան իր փափուկ, գորշ թիկունցը, որը մայրն էր ընծայել նրան Ստոկհոլմում, և որն առանձնապես դուր էր զալիս իլլիցին...»¹⁰։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ 1911—1912 թթ. Կամոն լինում է Բելգիայում, Շվեյցարիայում, Հունաստանում, Թուրքիայում, Բուլղարիայում։ Զնայած Ռուսաստանի և եվրոպական պետությունների կառավարական օրգանների հե-

9 Նույն տեղում, էջ 225։

10 Նույն տեղում։

ուապնդումներին, Կամոն, շնորհիվ իր արտակարգ հնարամտության, համարձակության ու երկաթյա կամքի, կարողանում է կազմակերպել զենքի, զինամթերքի, ինչպես և մարքսիստական զրականության առարումը Ռուսաստան։ Անձամբ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ արտասահմանում կատարած իր շրջադաշտությունների ընթացքում Կամոն ծանոթանում է Հեղափոխական շատ ականավոր զործիշների հետ, զարմանք ու հիացմոնք պատճառելով նրանց։

Կամոն Բուլղարիայից վերադառնում է Ռուսաստան։ Վ. Ի. Լենինի հանձնարարությունը կատարելու նպատակով շրջադաշտելով Պետերբուրգում, Թղեսայում և Ռուսաստանի այլ քաղաքներում նա զալիս է Թիֆլիս, որտեղ 1913 թ. սկզբին ձերբակալվում է, բանտարկվում և զատապարտվում մահապատճի։ Այս անդամ Կամոյի մահապատճիք, Ռումանովների տան թագավորության 300-ամյակի կապակցությամբ, փոխարինվում է 20 տարվա տաժանակրության։ Իմանալով այդ մասին նա տառւմ է. «Չէի ցանկանա մահապատճից ազատվել մանիթեստի շնորհիվ։ Լավ կլիներ ազատվեի սեփական միջոցներով։ Բայց միենույն է, ես երկար չեմ նստի, ես վրեժխնդիր կլինեմ»։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ու իրականացման ժամանակաշրջանում Կամոն բազմիցս լինում է Վ. Ի. Լենինի մոտ, կատարում նրա կարևոր

Հանձնարարությունները: 1917 թ. վերջերին Պետրոգրադից գալով Կովկաս, Կամոն Ստեփան Շահումյանին է հանձնում ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ Վ. Ի. Լենինի ստորագրած մանդատը՝ Ս. Շահումյանին Կովկասի գործերի արտակարգ կոմիսար նշանակելու մասին և 500 ռուբլի՝ ոսկով, Բարվի Սովետի կարիքների համար:

Օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի ծանր ժամանակաշրջանում Վ. Ի. Լենինը մշտական հոգատարություն է ցուցաբերում Կամոյի ուսման ու աշխատանքի նկատմամբ: 1919 թ. ամռանը զինվորական իշխանություններին ուղղած գրություններից մեկում նշելով, որ ինքը Կամոյին գիտե հիմնավոր կերպով, որպես բացառիկ նվիրվածության և եղանգի տեր մարդու, Վ. Ի. Լենինն առաջարկում էր արագ կազմակերպել Կամոյի ուսուցման գործը և հանձնարարել նրան՝ ստեղծել հատուկ ջոկատ՝ թշնամու թիկունքում գործելու համար: 1919 թ. սեպտեմբերին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ Կամոյին տրված վկայագրում ասված էր. «Սույնը ներկայացնող ընկ. Կ. Պետրովին, որի ունի № 483 տոմսը (մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը) ԿԳԿ շենք մտնելու համար և որը աշխատում է ԿԳԿ բաժիններից մեկում, ճանաշում եմ անձամբ»: Այնուհետև Վ. Ի. Լենինը առաջարկում էր սովետական հիմնարկներին, զինվորական և այլ իշխանություններին՝ Կամոյին ցուց տալ

լիակատար վստահություն և ամեն տհսակ աջակցություն:

Վ. Ի. Լենինի խորհրդավ Կամոն 1920 թ. պատրաստվում է ընդունվելու դինվորական ակադեմիա: Պատմելով Կամոյի մասին, Մաքսիմ Գորկին գրում է, որ այդ ժամանակ, լինելով իր մոռ, Կամոն մեծ կրքով խոսում է արտասահման գնալու, այնտեղ աշխատելու մասին, բայց Լենինն արդելել էր և առաջարկել սովորել: «Խնդրեցի իլլիչին, — պատմում է Կամոն, — բաց թող, ևս արտասահմանում օգտակար մարդ կլինեմ: — «Ու, — ասում է, — սովորիր»: Է՞զ, ինչ արած: Նա դիտի: Խնձորի մարդ է: Ծիծաղում է, երեխայի պես: Դու լսե՞լ ես ինձպես է ծիծաղում իլլիչը»¹¹:

1921 թ. մայիսի վերջին Կամոն Լենինին գրում է. Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կոնֆերանսի ժամանակ «Ես Զեղ Հաղորդեցի իմ նոր, ցնցող պլանների վերաբերյալ Զեղ Հետ խոսելու իմ ցանկության մասին: Այդ խոսակցությունը կարող է տեղի ունենալ Զեր զբոսանքի կամ Հանգստի ժամանակ և Զեղ բոլորովին շինուազնի: Դուցե, Դուք կգտնեք, որ իմ նկատառումները դուրս կգան շատ արժեքավոր և դրանց իրազործումը շափականց կարենոր ներկա մոմենտի համար, կամ թե Դուք դրանք կհամարեք խիստ

¹¹ М. Горький, Собрание сочинений, т. 17, стр. 341.

զվարճալի և սրտանց, ինչպես այդ կարող եք Դուք, կծիծաղեք»¹²:

Դիմումի վրա Լենինը մակադրում է. «Կամոյին: Ինձ հիշեցնել»:

1921 թ. Կամոն գործուղվում է Իրան, ուր մնում է մինչև 1922 թ. սկիզբը: Նույն թվականի դարնանը, երբ բժիշկների խորհրդով Վ. Ի. Լենինը սպատրաստվում էր գալ Վրաստան՝ Հանգստանալու և բուժվելու, Կամոն դիմում է նրան՝ ցանկություն Հայտնելով ուղեկցել և օգնել Լենինին այդ գործում:

«Մեծարգո և թանկապին վլագիմիր իլլիչ, — գրում էր Կամոն, — Ես և. Բ. Կրասինից և Մարիա Լյուինիշնայից իմացել եմ, որ բժիշկները Զեղ Համառորեն խորհուրդ են տվել երկար ժամանակով Հանգստանալ լեռնային օղում: Կրասինի կարծիքով այդ նպատակի համար Կովկասից ավելի լավ տեղ գտվար է գտնել:

...Եթե ինձ էլ վերցնեք Զեր Հետ, ապա ես ոչ միայն ուրախ, այլևս Հանգիստ կլինիմ ձեր անվըտանգության համար, և Համողված եմ, որ այդ ուղերորդության ժամանակ ձեղ ոչ ոք այնքան պետք չի գա, որքան ես»:

Կամոյի այս սրտառուչ առաջարկության մասին Լենինը 1922 թ. ապրիլին Հայտնում է Օբջունիկիձեին. «Բնկ. Սերդո: ...Կամոն խնդրում է

12 «Աշխատավորների նամակները Վ. Ի. Լենինին», Երևան, 1961, էջ 284—285:

իրեն վերցնել ինձ հետ։ Ես չէի առարկի։ Բայց ուզում եմ Ձեր կարծիքն իմանալ։ Եթե Դուք դև շեք, ապա իմ անունից ասեցեք նրան, որ ես համաձայն եմ (և որ ամեն ինչ գաղտնի կմնա)»¹³։

Լենինի առողջական վիճակի վատթարացման պատճառով նա չկարողացավ գտն Կովկաս։

Իր կյանքի վերջին տարիներին Կամոն աշխատում էր Թիֆլիսում՝ Անդրկովկասի մաքսային օկրուզի պետ։ 1922 թ. Հուլիսի 14-ին Կամոն զոհվում է։ Նրա թաղմանը ելույթներ են ունենում Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ա. Ֆ. Մյասնիկյանը, Ն. Նաբիմանովը և ուրիշներ, որոնք բոլորն էլ խոսում են Կամոյի նվիրվածության մասին հեղափոխության գործին, նշում, թե ինչպես զերմորեն էր սիրում նրան Վ. Ի. Լենինը։ «Թանկարդին Կամո, — ասում է իր ճառում Սերգո Օրջոնիկիձեն, — Հանդիպեցի քեզ 18 տարի առաջ։ Ես երիտասարդ էի։ Դու քո պարտըն էիր համարում բացատրելու ինձ՝ ինչպես դառնալ բոլցիկ, ինչպես պայքարել պրոլետարիատի շահերի համար։ Այսօր վիճակված է բաժանվել քեզանից... Այդ 18 տարվա ընթացքում մենք շատ անդամ ենք հանդիպել... Եվ շատ անդամ դու շարադրել ես քո պլանները կապիտալիզմի դեմ պայքարելու մասին... Հիշում եմ, թե ինչպես այդ պլանների մասին դու խոսում էիր հեղափոխության առաջնորդ ընկեր Լենինի հետ, որը զերմորեն սիրում էր քեզ... Երբ ես հանդիպեմ

13 В. И. Ленин. Полн. собр. соч., т. 54, с. 230—231.

լենինին, շգիտեմ, թե ի՞նչ պիտի ասեմ նրան: Մոսկվայից ժամանած ընկերները մեզ ասում են. «Ինչպես դուք չկարողացաք պահպանել Կամոյին»¹⁴: Կամոն թաղվում է Թիֆլիսում, Պուշկինյան պարկում: Նրա գերեզմանի վրա դրված բազմաթիվ պսակներից մեկն ունի հետևյալ մակագրությունը. «Անմռուանալի Կամոյին Լենինից և Կրուպսկայայից»:

¹⁴ Գ. Կ. Օրջոնիկիջիձե, Բնափառ Հոգվածներ և ճառեր, Երևան, 1960, էջ 97:

ԼԵՆԻՆՑԱՆ ՀՈԳԱԾԱՐՈՒԹՅՈՒՆ

Իր գործունեության բոլոր տարիներին՝ և իշխանության նվաճման համար մղված պայքարի ժամանակաշրջանում, և աշխարհում առաջին սոցիալիստական պետության ղեկավարի բարձր պոստում կենինը ջերմ հոգատարություն էր ցույց տալիս հեղափոխական պայքարի իր ընկերներին և նրանց ընտանիքներին:

Այդ մասին բազմաթիվ փաստաթղթեր և հիշողություններ են պահպանվել: Հայտնի է կենինի մտերմությունը Սուրեն Սպանդարյանի («Տիմոֆեյ») հետ, որն սկսվել էր 1908—1909 թթ.: Ս. Սպանդարյանը կենինի ղեկավարությամբ մասնակցում էր բոլշևիկների Պրագայի VI կոնֆերանսին, որտեղ 1912 թ. հունվարին կենինի առաջարկով ընտրվում է կուսակցության Կենտկոմի անդամ:

«Թունդ լենինյան», — այսպես է բնութագրել ցարական ոստիկանությունը Ս. Ս. Սպանդարյանին:

Վ. Ի. կենինը մեծ ցավով իմացավ Ս. Սպանդարյանի ձերբակալման լուրը, որը տեղի էր ունեցել

1912 թ. մայիսին Բաքվում: Ն. Կ. Կրուպսկայացի հետ միասին նա այցելում է Սուրեն Սպանդարյանի՝ այն ժամանակ Փարիզում գտնվող ծեր և Հիվանդ Հորը, նամակ է գրում Բեռլին՝ Սպանդարյանների ընտանիքին մտերիմ Ռուկի Տեր-Հովհաննիսյանին (Հայ ականավոր զբող Մուրացանի կինը), խնդրելով նրան նյութական օգնություն ցույց տալ. «Հուսով եմ, որ Դուք, ինչ կարող եք, կանեք երկու Սպանդարյանների համար էլ և այդ մասին մի երկու խոսքով կզրեք ինձ»¹, — զրում էր Լենինը նամակում:

1913 թ. Հունիսին Ն. Կ. Կրուպսկայան Բեռլինում զտնվող ականավոր բոլշևիկ Սլավա Կասպարովին զրում է Սպանդարյանին նյութական օժանդակություն ցույց տալու անհրաժեշտության մասին. «Գուցե մի որևէ բան դիտե՞ք Տիմոֆեյի և ընկ.-յան մասին, — Հայտնում էր նա: Զե՞ք մատնանշի արդյոք այդ ընկերներին (ավելի ճիշտ նրանց Հարազատներին), որոնք նստած են բանտում կամ զտնվում են արսորներում և օգնության կարիք ունեն»:

1914—1916 թթ. զտնվելով Սիբիրի հեռավոր աքսորավայրում, Սպանդարյանը ջերմ նամակներ է զրում Լենինին, ողջունում նրան ու Կրուպսկայացին, Հայտնում իր խոր հավատը Հեղափոխության Հաղթանակի նկատմամբ:


¹ Վ. Ի. Աբելին, Երկեր, Հատ. 43, էջ 322:

1916 թ. սեպտեմբերին, մնոնելուց առաջ Ս. Սպանդարյանի վերջին խոսքերն էին. «Հեղափոխությունը կանգնած է 1917 թ. շեմբին։ Կանգնեցներ Լենինի դրոշի տակ»։

Վ. Ի. Լենինի խմբագրությամբ արտասահմանում լույս տևանող «Սոցիալ-դեմոկրատ» թերթի 1916 թ. հոկտեմբերի 19-ի համարում հատուկ մահախոռական տպագրվեց Սպանդարյանի հիշատակին, ուր համառոտակի ցուցը տալով նրա կուսակցական բեղմնավոր զործունեությունը կովկասում և ամբողջ Ռուսաստանում, ընդդժում էր Սպանդարյանի հավատարմությունը բոլշևիկյան կուսակցությանը, ինտերնացիոնալիզմի դիրքերին։

1921 թ. Սովետական Ռուսաստանի Ժողկոմ-խորհի նախագահ Լենինը Սպանդարյանից նամակ է ստանում, որով խնդրում էր նյութական օգնություն ցուց տալ իրեն, և աջակցել Փարիզից Հայրենիք վերադառնալու համար։ Այդ կապակցությամբ Լենինը կուսակցության Կենտկոմի քարտուղարությանը գրում է. «Ես և կուսակցության կենտրոնի բոլոր աշխատողները Սուրեն Սպանդարյանին ճանաչում էինք 1908—1909 թվականներին։ Շատ գնահատելի ու աշքի ընկնող աշխատող էր... Սուրենի Հայրը Փարիզում, 1910—1911 թվականներին մեղանից օգնություն էր ստանում Սուրենի խնդրանքով²։ Այնուհետև Լենինը հանձնարարում է կապվել Սուրենի հոր հետ և օգ-

2 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 45, էջ 159։



Վլադիսլավ Կասպարով



Ալեքսանդր Բեկպաղյան



Բագրատ Բորյան

նել նրան փողով, որպես նշանավոր հեղափոխականի հոր:

Պահպանվել է Սպանդարյանի հայերեն լեզվով գրված նամակի թարգմանությունը, որի վրա կա 1921 թ. Հուլիսի 26-ի նշումը. «200 ոսկի ռուբլի ուղարկված է»:

Հուղիչ է եղել կենինի հոգատարությունը Վլադիմիրավ Կասպարովի քրոջ՝ Կասպարովա-Պոպովայի նկատմամբ:

Վլադիմիրավ Կասպարովը եռանդուն հեղափոխական գործունեություն էր ծավալել Կովկասում և Դոնի Ռոստովում: Այնուհետև նա անցել էր արտասահման և դարձել կենինի ու Կրուպսկայի մոտ բարեկամը: Կենինի հանձնարարությամբ Կասպարովը զբաղվում էր ազգային հարցի մշակմամբ: 1917 թ. սկզբին Շվեյցարիայից վերադառնալով Ռուսաստան, կենինը հրաժեշտի հուղիչ նամակ է դրում Կասպարովին, որը բուժվում էր Շվեյցարիայի Դավոս քաղաքում: Նամակում ասված էր. «Թանկագին Կասպարով: Ամուր, ամուր սեղմում եմ Զեր և Կարլի ձեռքերը, ցանկանում եմ առույգություն: Հարկավոր է համբերել: Հուսով եմ կհանդիպենք Պիտերում և այն էլ շուտով:

Մեկ անգամ ևս լավագույն ողջույններ նրկուսիդք³:

1917 թ. սհալտեմբերին Կասպարովը ծանր հի-

³ В. И. Ленин, ПСС, т. 49, стр. 432.

վանդությունից Հետո վախճանվեց Շվեյցարիայում:

1921 թ. Կասպարովա-Պոպովան դիմում է լենինին՝ հաղթահարելու իր հետ պատահած անհաջողությունները: Ստանալով այդ նամակը, լենինը դրում է, որ Կասպարովին ինքը շատ լավ ձանաշում է արտասահմանից, «որտեղ նա 1905 թվականի հեղափոխությունից հետո եղել է վտարանդիության մեջ, մտել էր բոլշևիկյան կազմակերպության մեջ, վայելում էր բոլոր այն բոլշևիկների արժանի հարգանքը, որոնց հետ ինձ վիճակված էր հանդիպել և որոնք դիտում էին Կասպարովի աշխատանքը»⁴: Լենինը անձամբ դրազվում և անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս Կասպարովի բրոջը:

Իր նկատմամբ Վ. Ի. Լենինի և Ն. Կ. Կրուպսկայայի ջերմ հոգատարության մասին Զավահիր Խուտուլաշվիլին (*Տեր-Պետրոսյան*) գրել է. «Ես հիացած եի իրենց տանը ինձ այնպես սիրալիր ընդունելու համար և Վլադիմիր Իլյիչի արտակարգ պարզությունից»:

1920 թ. օգոստոսի 27-ին Լենինը օրացույցի թերթիկի վրա դրառում է Ռուկի Տեր-Հովհաննիսյանին ընդունելու մասին և նույն օրը երեկոյան ընդունում ու դրուցում է նրա հետ:


4 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 45, էջ 435:

ԹԱՆԿԱԾԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի ժամանակ Լինինը նամակագրական և անձնական սերտ կապեր ուներ ականավոր բոլշևիկ Ալեքսանդր Բեկվադյանի հետ: Բեկվադյանը (1879—1939), որի կուսակցական ծածկանունը «Յուրի» էր, Բարվի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից էր: Խուսափելով ցարական հալածանքներից, 1906 թ. նա զնում է արտասահման, որտեղ ծանոթանում է Վ. Ի. Լինինի հետ և կատարում նրա մի շարք պատասխանառու հանձնարարությունները:

Բեկվադյանը կրթված մարքսիստ էր: Յյուրիխում նա 1913 թ. պաշտպանել և հրատարակել էր իր դոկտորական դիսերտացիան՝ իրավագիտության դուվ: Լինինը գիտեր այդ մասին: Յյուրիխում նա որոշ ժամանակ ապրել էր Բեկվադյանի հետ նույն բնակարանում: Լինինի հանձնարարությամբ նա մասնակցել է II ինտերնացիոնալի Բաղելի կոնգրեսին, գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության Վիեննայի համագումար-

րին, մի շաբթ միջազգային խորհրդակցությունների, եղել է ՌՍԴԲԿ արտաքահմանյան կազմակերպությունների կոմիտեի կազմում։ Լենինը բազմաթիվ նամակներ է դրել Յուրի Բեկվադյանին, որոնցում բննարկվում են բոլշևիկյան կուսակցության գործունեության կարենրագույն հարցերը։



Ա. Ա. Բեկվադյանի նամակը Վ. Ի. Լենինին

1912—1914 թթ. Լենինին գրած իր նամակները Բեկվադյանն սկսում էր «Թանկագին իլլիչ» խոսքերով և ավարտում «Զեր Յուրի» ստորագրությամբ։

1912 թ. նոյեմբերին Վիեննա՝ Ա. Ա. Տրոյանովսկուն գրած նամակում նշելով ՌՍԴԲԿ պատվիրակության խնդիրների մասին Բաղեկի կոնդրեսում, Լենինը խնդրում է այդ նամակն ուղարկել Յուրիին պատվիրակության անդամ Ա. Ա. Բեկ-

զագյանին: Նույն տարվա օգոստոսին Լենինը հեռազբով հայտնում է Բեկզագյանին Ա. Բերելի մահվան մասին: Օգոստոսին Լենինը Դրեզդենից ստանում է Բեկզագյանի նամակը: 1913 թ. օգոստոսին Լենինը Յա. Ա. Գանեցկուն գրած նամակում խորհուրդ է տալիս Վեհեննայում՝ զերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարում հանդիպել ՌՍԴԲԿ ներկայացուցիչ Բեկզագյանին և նրան ծանոթացնել Ա. Պաննեկուկի և Ֆ. Մերինգի հետ: Սեպտեմբերին Բեկզագյանը իհնալից մի քանի նամակ է գրում Լենինին, հայտնելով իհնալի համագումարում ՌՍԴԲԿ ներկայացուցչության աշխատանքների ժամանակին, խորհուրդներ է հարցնում կուսակցության առաջնորդից: 1914 թ. մարտին Լենինը ջուրիս՝ Բեկզագյանին գրած նամակում խնդրում է օգոստում իր հասցեից՝ Միջազգային սոցիալիստական բյուրոյի հետ կապվելու համար:

1914 թ. հուլիսին Լենինը առաջարկում է Բեկզագյանին բոլշևիկյան պատվիրակության թվում մեկնել Բրյուսել՝ մասնակցելու II ինտերնացիոնալի Միջազգային սոցիալիստական բյուրոյի գործադիր կոմիտեի «միավորիչ խորհրդակցությանը», որտեղ քննարկվելու էր «ոռուսական հարցը»: Այդ օրերին Բեկզագյանը գրում էր Լենինին: «Թանկագին Խլիչ: Հենց նոր վերադարձա Բեռնից և գտա Զեր երկու նամակները: Շտապում եմ պատասխանել»¹:

¹ «Լենինի հետ. Վավերագրեր և հուշեր», էջ 20:

Բեկադյանը հայտնում է Լենինին՝ Ռուսաստան մեկնելու համար իր նախապատրաստվելու մասին։ Օգոստոսի 23-ին Լենինն իր ընտանիքով դնում է Յցուրիխ, կանգ առնում Բեկադյանի մոտ։

Ոգեշնչված Լենինի ցուցումներով և «Պատերազմն ու Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» լենինյան մանիֆեստով, 1914 թ. աշնանը Բեկադյանը վերադառնում է Ռուսաստան։ Գալով էովկաս, նա այստեղից շարունակում է նամակներ գրել Լենինին։

Թանկագին իլլիշին Բեկադյանը հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջը՝ եռանդուն պայքար մղելով լենինյան դործի հաղթանակի համար։

* * *

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վ. Ի. Լենինի նամակագրությունը «Գրանատ» ընկերության հանրագիտական բառարանի ղեկավարներից մեկի՝ Ա. Կ. Զիվելեզովի հետ (1875—1952)։ 1914—1915 թթ. փայլուն ավարտելով Մոսկվայի համալսարանի պատմաբանության ֆակուլտետը, Զիվելեզովը իր գիտական կարողությունների համար պետք է մնար համալսարանում և պատրաստվիր պրոֆեսորական դործունեության, բայց ժողովրդական լուսավորության ցարական մինիստրը մերժել էր նրա ցանկությունը։ Լինելով բազմակողմանի զարգացած մարդ, իտալական Վերածնության և եվրոպական մշակույթի պատմության հիմանալի գիտակ, Զիվելեզովը ավելի

բան 40 տարի (1898—1939) աշխատակցում է «Գրանտի» Հանրագիտական բառարանին, որտեղ Հրատարակում է բազմաթիվ հոդվածներ: 1914 թ. Հանրագիտարանում աշխատելու ժամանակ Զիվելեգովը պատվիրում է Լենինին Հոդված պրել Կարլ Մարքսի մասին: Այս կապակցությամբ նրանք նամակներ են փոխանակում: Նամակներից մեկում, 1914 թ. նոյեմբերի 17-ին, Լենինն իր մեծարգու կուկային հայտնում է, որ բառարանի համար Բեռնից Մոսկվա է ուղարկել իր Հոդվածը՝ Մարքսի և մարքսիզմի մասին: Նամակում Լենինը նշում է, որ պատերազմի հետևանքով իր դրագարանը մնացել է Գալիցիայում և ինքը Հնարավորություն չի ունեցել ստուգելու հոդվածում բերված առանձին մեջբերումներ Մարքսի երկերի ոռուական թարգմանություններից: Նախնդրում է Զիվելեգովին, անհրաժեշտության վեպում այդ անել Մոսկվայում: Բարձր գնահատելով Հանրագիտարանում տպված Լենինի Հոդվածը Կարլ Մարքսի մասին, Զիվելեգովը հետապայում գրում է. «Վլադիմիր Իլյիչի աշխատությունը մեղ վրա Հսկայական ազգեցություն գործեց: Մենք առաջին ընթերցողներից էինք, որ Հիացանք Վլադիմիր Իլյիչի Հոդվածներով: Մեր ձեռքով անցել էին բազմաթիվ այլ Հոդվածներ: Բայց այս անգամ մենք ամբողջովին առանձնահատուկ բան գոացինք: Մեր առջև մի իսկական պլուխուղործոց էր»:

Քաջատեղյակ լինելով Հայերի վիճակին իմ-

պերիալիստական պատերազմի տարիներին, Զիվելեգովը մեծ դեր կատարեց զենոցիդի թուրքական քաղաքականության մերկացման, արևմտահայերի պաշտպանության գործում։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո նա այս հայ ականավոր մտավորականների թվում էր, որոնք կանգնեցին լենինյան դրոշի ներքո և պայքարեցին սովետական մշակույթի զարգացման համար։ Ականավոր դիտնական, պրոֆեսոր Զիվելեգովը Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր։

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

1917 թ. ապրիլի 3-ին, Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո, Վ. Ի. Լենինը էմիգրացիայից վերադառնում է Ռուսաստան։ Պետրոգրադի Ֆինլանդական կայարանում նրան գիմավորում են կուսակցության Կենտկոմի, Պետրոգրադի կոմիտեի անդամները, բոլշևիկների շըրջանային կազմակերպությունների ղեկավարները, գործարանների, ֆաբրիկաների, գնդերի և նավատորմային անձնակազմի ներկայացուցիչները։ Դիմելով նրանց՝ Լենինը ճառ է արտասանում, ապա անցնում է կայարանամերձ հրապարակ և բարձրանալով զրահապատ մեքենայի վրա ողջունում է Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատին ու վիճվորական մասսաներին, կոչ է անում նրանց շարունակել պայքարը սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար։

Վ. Ի. Լենինը Ֆինլանդական կայարանից ժողովրդի շերմ ուղեկցությամբ զրահապատով մեկ-

նում է Կշեսինսկայա պալատը, որտեղ այդ ժամանակ տեղավորված էին բոլշևիկների Կենտրոնական ու Պետրոգրադի կոմիտեները։ Այստեղ և տեղի է ունենում միտինգ, ուր Լենինը դարձար ելույթ է ունենում։

Վ. Ի. Լենինին դիմավորողների և միտինցների մասնակիցների թվում էին նաև հայ ժողովրդի լավագույն զավակներ Սարգիս Բաղդատյանը (Բողդատե), Մահակ Տեր-Գարբիելյանը, Նինա Աղաջանյանը (Աղաջանովա), Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան), Հմայակ (Գալուստ) Բեգլուկը, Արտաշես Կարինյանը, Երևմիա Բակունցը, Հարություն Բաղդասարյանը (Բաղդասարով), Աղասի Վարդանյանը, Վարդանուշ Բահաթրյանը (Եվգենիա Բաղդատուրյան), Շուշանիկ Քամալյանը, Արփինիկ Նազարեհելյանը (Նազարեհելովա), Միհրան Օհանյանը (Օգանով), Ա. Օհանյանը և ուրիշներ։

Նրանցից ոմանք տարիներ առաջ դինվորագրավել էին լենինյան կուսակցությանը, հանդիպել և աշխատել էին Լենինի հետ, իսկ մյուսները լենինին լավ գիտեին, որպես բանվոր դասեարդի սիրված առաջնորդի։

Սարգիս Բալդատյանը (1887—1949) ծնվել է Շուշի քաղաքում, երկաթուղային բանվորի ընտանիքում։ Բոլշևիկյան կուսակցության շարքերն է մտել նրա ստեղծման առաջին օրերից՝ 1903 թ. 16 տարեկան հասակում։ Հեղափոխական աշխատանք է տարեկան Բարձում, Թիֆլիսում, Երևանում,

Ալեքսանդրապոլսում: 1909 թ. նա ՌՍԴԲԿ Պետարագի կոմիտեի անդամ էր, նրան լավ զիտեին նաև Մոսկվայի բոլշևիկները: Հեղափոխական բուն զործունեության համար Բաղդատյանը մի քանի անգամ ձերբակալվել և արսորվել է, իսկ 1913 թ. անցնելով արտասահման, անձամբ ծանոթացել է Լենինի հետ: Լենինի ցուցումներով զինված, նա համաշխարհային պատերազմի սարիներին վերադառնում է Ռուսաստան և որպես Պետրոգրադի բոլշևիկների ղեկավարներից բանվորների մեջ պրոպագանդում է լենինյան դիրքուղղումը պատերազմի, խաղաղության և Հեղափոխության հարցերում, որի համար էլ կրկին աքսորվում է:

Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո, պատվելով սիրիրյան աքսորավայրից, Բաղդատյանը վերադառնում է Պետրոգրադ և շուտով ընտրվում բոլշևիկների Պետրոգրադի կազմակերպության քաղաքային կոմիտեի քարտուղար:

Սահակ Տեր-Գաբրիելյանը (1886—1937) 1902 թ. լենինյան կուսակցության անդամ էր, պրոֆեսիոնալ հեղափոխական: 1917 թ. նա ՌՍԴԲ(բ)Կ Բաքվի կոմիտեի անդամ էր: Բաքվից նա Պետրոգրադ էր զնացել մասնակցելու Սովետների համառուսաստանյան խորհրդակցությանը: «Գալով Պետրոգրադ,— հիշում է Ս. Տեր-Գաբրիելյանը, — բախտ ունեցա զիմավորել իլլիշին Ֆինլանդական կայարանում: Ֆինլանդական կայարանից մենք

դնացինք Կշեսինսկայա պալատը։ Այստեղ ես լսեցի վ. ի. Լենինի ճառերը զբահապատի վրայից և Կշեսինսկայա սրալատի պատշգամբից»¹։ Տերդաբրիելյանը ներկա է լինում նաև այն պատմական ժողովին, որտեղ Լենինը հոչտկում է իր Ապրիլյան թեղիսները։

Կովկասից Մոսկվա ու Պետրովգրադ, Լենինյան գործի անձնվեր զինվորը լինելու համար բանտու աքսոր — այսպիսի ուղի էր անցել նաև նինա Աղաջանյանը։ Նա Ֆինլանդական կայարան էր Եկել Վիբորգյան բոլշևիկյան շրջանային կոմիտեի այն պատվիրակության կազմում, որը Պետրովգրադի բոլշևիկյան կազմակերպության որոշմամբ վ. ի. Լենինին պետք է հանձներ № 600 կուսակցական տոմսը։ Հայ ժողովրդի արժանավոր դուտրը այդ ժամանակ կուսակցության Վիբորգյան շրջանային կոմիտեի ղեկավարներից և Պետրովգրադի կոմիտեի անդամներից էր, ճանաչված ու սիրված կուսակցական շրջաններում։

Ֆինլանդական կայարանում վ. ի. Լենինին դիմավորելու մասին հետաքրքիր հուշեր է թողել 1904 թ. կուսակցության անդամ Հ. Բեգլուկը։ Նա գրել է.

«Կայարանի մուտքը, որտեղից սպասվում էր Լենինի երեալը, լուսավորված էր լուսարձակնե-

¹ «Воспоминания коммунистов Закавказья о В. И. Ленине», Ереван, 1970, стр. 232.

բով, իսկ Հրապարակը՝ հարյուրավոր ջահերով։ Հնչեց կայարանի զանգը, որն աղղարարում էր գնացքի մոտենալը։ Բազմահազար ամբոխը սեղմբավում էր դեպի կայարանի մուտքը։ Քիչ անց երեաց Լենինը՝ շրջապատված իր զինակիցներով։ Հրապարակում թնդաց ճպոր «ուռան», երկար ժամանակ շէին լուսմ որոտալի ծափահարությունները։ Պետրոգրադի պրոլետարիատը ցնծագին ընդունեց իր իմաստուն առաջնորդին։

Վլադիմիր Իլյիչը բարձրացավ զրահապատ մերենայի վրա։ Հրապարակում նորից թնդաց պրոլետարական «ուռան», երկար ժամանակ շէր լուսմ ծափահարությունների որոտը։ Վերջապես Իլյիչը ոկսեց իր հանրահայտ ու հոշակավոր ճառը, որից հետո ավտոմեքենայով մեկնեց Կշեսինսկայա պալատը²։

Ֆինլանդական կայարանից դեպի Պետրոգրադի Կշեսինսկայա պալատը վ. ի. Լենինին տանող զրահապատ ավտոմեքենայի վարորդը՝ Միհրան Օհանյանն էր։ 1913 թ. Օհանյանը ընդունվել էր Պետրոգրադի տեխնոլոգիական ինստիտուտը, ապա մորիլիզացվել բանակ, մարտերում վիրավորվել։ Փետրվարյան հեղափոխության օրերին նա ծառայում էր Պետրոգրադի զրահապատների դիվիզիոնում որպես մեխանիկ վարպետ։ Այստեղ էլ նա ընտրվում է դիվիզիոնի զինվորական դեպու-

² «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք Երկրորդ, երեսն, 1961, էջ 36։

տատների կոմիտեի նախագահ, իսկ ապա՝ Պետրովը ազգի սովետի կազմում։ Ճանաչված Հեղափոխական զինվորը արժանանում է պատմական պրահապատի վարորդ լինելու պատվին և արդարացնում կուսակցության վստահությունը։ Հիշելով այս անմոռանալի դեպքերը, Օհանյանը զբարձր է. «Ես նստել եի զեկի մոտ։ Կողքիս նստել եր Վլադիմիր Իլյիշ Լենինը։ Նրանից ետե նստած էին զինվորներ և Կենտկոմի անդամներից մի ընկեր...»։ Ճանապարհին Լենինը հարցուփորձ է անում Օհանյանին. իսկ տեղ հասնելով՝ շնորհակալություն հայտնում նրան։

ԱՅԻՉՔԻ ՀԵՏ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈԹՈՐԻԿՆԵՐՈՒՄ

1917—1920 թթ., երբ նախկին ցարական կայսրության անձայրածիր տարածքում ազատատեսնչ ժողովուրդները բոլշևիկների կուսակցության զեկավարությամբ հերոսական պայքար էին ճշում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար, նրանց հետ միասին Լենինի դրոշի տակ էին կանգնած հարյուր հազարավոր հայեր՝ Պետրոգրադում և Մոսկվայում, Ռուսականացում և Բելոռուսիայում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում, Մերձվոլգյան շրջաններում և Միջին Ասիայում, Հայաստանում, Վրաստանում և Աղրքեցանում։ Նրանցից շատերին վ. ի. Լենինն անձամբ դիտեր։ Ծուսաստան վերադառնալուց անմիջապես հետո Լենինի հետ հանդիպում և զրոցում է հին բոլշևիկ Բագրատ Բորյանը, որը մինչ այդ հեղափոխական աշխատանք էր տարել Կովկասում, իսկ Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկների Պետրոգրադի կոմիտեի անդամ էր։ Զրուցելով Բորյանի հետ, Լենինը առաջարկում է նրան մեկնել Կովկաս՝ բոլշևիկյան կազմակեր-

պությունները համախմբելու համար։ Նա խոշոր աշխատանք է կատարում հատկապես ՌՍԴԲ(բ)՝ VI համագումարի նախապատրաստման գործում։

Հոկտեմբերյան օրերին Բ. Բորյանը կենինի առաջարկությամբ շրջազայռում է Կովկասի մի շարք քաղաքներում՝ Բաքու, Թիֆլիս, Երևան, Ելիզավետպոլ, Ալեքսանդրապոլ, Կարս, Սարիղամիշ և այլն, օգնում է տեղական կազմակերպություններին և այդ վայրերից զեկուցազրեր է ուղարկում կենինին՝ գործերի վիճակի մասին։

1917 թ. նոյեմբերի 6-ին Ալեքսանդրապոլից Պետրոգրադ Վ. Ի. կենինին ուղարկած նամակում Բորյանը գրում էր.

«Ընկեր կենին

Ողջունելով Ձեզ, ես չեմ կարող նկարագրել իմ հրձվանքը։ Կովկասի ընկերները հաստատ կանգնած են իրենց գիրքում և պետք է հուսալ, որ մենք էկարողանանք լրիվ անցկացնել բոլշևիզմի գիծը։

Ես հղա Կովկասի շատ քաղաքներում և հարկավոր է ասել, որ զինվորական մասսան ամենուրեք մեր կողմն է։

Մանրամասնորեն կգրեմ Բարվից։

Ընկեր։ Բանն այն է, որ մեր ընկերներից մեկը՝ Ղարիբջանյանը, որն Ալեքսանդրապոլի քաղաքացին դումայի անդամ է, Ալեքսանդրապոլ քաղաքի ղին, և բան, ղեպ, սովետի գործկոմի անդամ և այլն, և այլն, ցանկանում է նամակագրություն ունենալ Ձեզ հետ Կովկասի կյանքի մի քանի չարցերի վերաբերյալ, և ինչպես ես գիտեմ Ձեզ։



Արշակ Գուրաբյան



Խարզիս Բաղդատյան



Ալեքսանդր Մյասնիկյան

Դուք, ի՞չարկե, չեք պլանա Զեր օգնությունը ցուցը
տալ մեր ընկերոջը»¹:

Այս նամակին կից ուղարկվում է Ղարիբջան-
յանի նամակը՝ Վ. Ի. Լենինին²:

1918 թ. Լենինի հանձնարարականով Բորյանը
մեծ դեր է կատարում Բարվի Հերոսական կոմու-
նային օգնություն կազմակերպելու գործում: Հու-
լիսի 18-ին Մոսկվայում Լենինը զրուցում է Բարվի
սովետի պարենավորման հանձնաժողովի նախա-
դուհ Բորյանի հետ, որը Ս. Շահումյանի հանձնա-
րարությամբ մեկնել էր Մոսկվա՝ Կոմունայի հա-
մար օգնություն խնդրելու: Նա խորհուրդ է տա-
լիս տեղում մորթիլիգացնել մարդկանց, զենք ձեռք
բերել, որովհետև կենտրոնը հնարավորություն
չուներ մեծ օգնություն ցուցը տալ տեղերին՝ ուղ-
մական ինտերվենցիայի և ներքին հակահեղափո-
խության դեմ պայքարելու պատճառով. Լենինը
դրում է երկտող ժողանտխորհին և Պարենժողկո-
մատին. «Մույնը ներկայացնող ընկ. Բորյանը,
Պետրոգրադի կոմիտեի նախկին անդամ (1917 թ.),
բոլշևիկ 1904 թվականից, եկիլ է Բարվից, կարևոր
հաղորդումներ ունի: Խնդրում եմ նրան ընդունել»³:

Նույն օրը Լենինը զրուցում է Տեր-Հովհան-
յի հետ՝ Բարվին ուղամական օգնություն ցուցը

1 «Լենինի հետ. Վավերագրեր և հուշեր», էջ 73:

2 նույն տեղում, էջ 74:

3 «Владимир Ильич Ленин. Биографическая хро-
ника», т. 5, М., 1974, стр. 647.

տալու մասին, նրա միջոցով ստանում է Ա. Շահումյանի և Ս. Տեր-Գալբրիելյանի նամակները⁴:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի առաջին իսկ օրերից Լենինի անմիջական դեկափարությամբ Պետրոգրադում աշխատում էին հայ ռականավոր գործիչներ Վառլամ Ավանեսովը (Մուրին Մարտիրոսյան), Վահան Տերյանը, Լևոն Կարախանը, Միքայել Տեր-Հարությունյանցը, Պոռշ Պողյանը, Սարգիս Լուկաշինը և ուրիշներ, որոնց նկատմամբ Լենինը մեծ հոգատարություն էր ցուցաբերում:

Վառլամ Ավանեսովը Վահան Տերյանի հետ միասին անմիջականորեն զլխավորում էին Լենինի կառավարության կազմում ստեղծված Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի աշխատանքները: Լենինը հաճախակի ընդունում էր նրանց և զրուցում Հայաստանի ազատազրության հարցերի մասին: Ազգությունների գործերի կոմիսարիատը, որտեղ պաշտոնավարում էր Տերյանը, տեղավորված էր Մմոլնիում, Լենինի կաբինետի կողքին: Լենինի Հանձնարարականով Վ. Տերյանը զեկուցագիր և դեկրետի նախադիմ է կազմում Արևմբայան Հայաստանի մասին, որը զրուցում է «Թուրքա-Հայաստանի մասին» լենինյան դեկրետի հիմքում:

Վ. Ի. Լենինի հետ զրուցի անմիջական տպավորության տակ իր ընկերոջը զրած նամակներից

⁴ Նույն տեղում, էջ 648:

ЗКД 6

S-47

X
m

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԱՑԻԱՆ ՊՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տա 7:

№ 20

Պրոլետարիական բարեկամության ժամանակակից պահանջությունները.

ՎՈՐԱՆ ՑԵՐԵԱՆ

Ի՞նչ է ասում Լենինը

ԳիշՂԱ. 8 ին ԵՐԻՆ

ԿՐՈՅ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բ. ՏԵՐԻԱՆ.— „Что говорит Ленин крестьянам”

ԳիշՂԱ 1 թ. 28 կող.

Տերյանի «Ի՞նչ է ասում Լենինը զյուլացիներին» գրքույիի անվանաբերը:

մեկում Տերյանը հիացած էենինի հոգատար վերաբերմունքից հայ ժողովրդի նկատմամբ, նշում է, որ էենինը «Մհեմապայծառ ու վեհափառ է». «պարզ ու պայծառափայլ»... կուսավոր ու զրավիչ է, և խոսելիս այնքան քափանցող է, որ ակամա վախենում ես՝ թե քո իսկ դրած հարցում նա ավելի շատ զիտե, բան դու ինձդ... իմացիր և հավատա, որ էենինը շատ լավ հասկանում է մեր վիճակը...»⁵:

1917 թ. նոյեմբերի 29-ին էենինն ստորագրում է Տերյանի լիազորագիրը՝ ժամանակավոր կառավարության ստեղծած «Անդրկովկասի հատուկ կոմիտեների» դորձն ընդունելու մասին, իսկ 1918 թ. Հունվարի 11-ին՝ Հայկական գործերի կոմիսարիատի կոլեգիայի անդամ Վ. Տերյանի վկայականը՝ մի կողմից Ռուսաստանի հանրապետության և մյուս կողմից՝ քառյակ գաշինքի տերությունների միջև հաշտություն կնքելու համար Բրեստ-Լիտովսկում բանակցություններ վարող պատվիրակության կազմում որպես խորհրդատու մտնելու մասին:

Տերյանը լենինյան գաղափարների շերմ ոլրոպագանդիստ էր: Նա հաստատուն կանգնած է եղել լենինյան դիրքերում՝ կուսակցության ու սովետական համագումարներում, կոնֆերանսներում, խորհրդակցություններում, որոնք տեղի են ունեցել էենինի անմիջական ղեկավարությամբ:

5 Վահան Տերյան, Երկերի լիակատար ժողովածու, 1963, Հատ. 3, էջ 481—482:

СОВЕТЪ НАРОДНЫХЪ

Комиссаровъ

УДОСТОИЛЪ ЕНІЕ.

Секретарь

II. Академ. № 38

585. 4.

Засіданні, що проходили вчора, удасто-
вилось, що предсмітник сего, членъ Котлярік
Коміссаріата по архангельському вісоку Тер'якінъ
успішно очоливъ Состовъ Народныхъ Коміссаріевъ від-
точ, за качествъ консультанта, якъ составъ делега-
ції, ведучій відъ Північно-Літовської переговорів о
заключенії міжъ Російською Республікою, ізъ
одної стороною, и дерев'яні Матвеєвого Сокола, -
зъ другої.

Предсмітникъ Состовъ Народныхъ Коміссаріевъ

Секретарь

На засіданні утворено з'єднані
зъ предсмітникомъ відъ
Літовської Урядової ради та
Генеральнаго суду.

Ч. В. Ієлібінъ атторяգրած վկայականը Վ. Ա. Տերյանինъ
Բільш-Імп. п. 1919 р. 10 листопада відъ
պատվірваний կազմомъ працьою խորհրդանու-
պատվірваний մասինъ:

Տերյանի գրչին է պատկանում «Ի՞նչ էր ասում լինինը զյուղացիներին» հանրամատշելի դրույկը, որը մերկացնելով բոլշևիկների և նրանց առաջնորդի գրաբարտիչներին, ցույց է տալիս, որ լինինը ժողովրդի շահերի խսկական պաշտպան է, խսկ լինյան կուսակցությունը այն ուժը, որի առաջնորդությամբ բանվորներն ու զյուղացիները կըստանան Հող և աղատություն։ Տերյանի հիանալի թարգմանությամբ 1920 թ. Մոսկվայում հայերեն լույս է տեսնում Վ. Ի. Լինինի «Պետություն և հեղափոխություն» գիրքը, որի վերջաբանում Ա. Մյասնիկյանը նշում է. «Տերյանի թարգմանությունը խսկապես նրա հեղափոխական պատգամն է հայ պրոլետարիատին»⁶։

6 Ա. Ֆ. Մյասնիկյան, Բնտիր երկեր, Երևան, 1957, էջ 272։

Վ. Ե. ԱԵՆԻՆԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵԿԱՎԱՐ ՕՐԴԱՆՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո կուսակցության և բանվոր դասակարգի առաջնահերթ խնդիրը համարելով հին, բուրժուական, կալվածատիրական պետական մերենացի խորտակումը և նոր, սովետական պետական ապարատի ստեղծումը, և նինին անմիջականորեն զեկավարում էր կառավարման կենտրոնական օրգանների, ժողովրդական կոմիսարիատների կազմակերպումը, նշում էր նրանց գործունեության ծրագիրը, ընտրում դեկանավար աշխատողների կազմնը՝ կուսակցությանն ու ժողովրդին նվիրված, գործիմաց ու եռանդուն ժարդիկ, տարբեր ազգերի ներկայացուցիչներից: Այդպիսի հմուտ, ընդհատակյա աշխատանքի, հեղափոխությունների բովով անցած կադրեր էին Յ. Մ. Սվերդլովը, Մ. Ի. Կալինինը, Ի. Վ. Ստալինը, Ա. Վ. Լունաշարսկին, Գ. Ի. Պետրովսկին, Պ. Ի. Ստուշկան, Մ. Տ. Ելիզարովը և ուրիշներ: Էնինը պետական ապարատում պատասխանա-

առև աշխատանքների առաջ քաշեց նաև հայ ժողովրդի լավագույն զավակներ Վ. Ա. Ավանեսովին, Լ. Մ. Կարախանին, Ա. Ա. Յակովովին, Ա. Բ. Խալաթովին, Ա. Մ. Տեր-Գաբրիելյանին, Ա. Յա. Բոգդատինին, Մ. Ա. Բոգդատյանին և ուրիշների, որոնց անձամբ ճանաչում էր:

Սովետների Համառուսաստանյան II համագումարում, Վ. Ի. Լենինը ի լուր ամբողջ աշխարհի ազգարարեց սովետական իշխանության հաղթանակը և նրա զեկավարությամբ կազմվեց աշխարհում առաջին բանվորազգուղացիական կառավարությունը: Վ. Ավանեսովն ընտրվեց Համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահության անդամ և նրա քարտողար: Լենինը նրան վստահել է ամենապատասխանատու պաշտոններ Ժողովրդական կոմիսարների, Բանվորազգուղացիական սլաշտպանության, Աշխատանքի ու պաշտպանության, Ժողովրդական տնտեսության գերագույն խորհուրդներում, Զեկայում, ազգությունների գործերի, պետական վերահսկողության, բանվորապատուղացիական տեսչության, արտաքին առկարգ ժողկոմատներում և այլ հիմնարկներում¹:

Վ. Ի. Լենինին՝ Ավանեսովին ուղղված բազմաթիվ նամակներն ու գրությունները վկայում են, թե ինչքան բարձր էր գնահատում Լենինն իր հաղատարիմ օգնականին՝ սովետական պետական

¹ՏԵ՛՛ Ս. Ալիխանյան, Վասլամ Ավանեսով, Երևան, 1970:

ապարատի ստեղծման ու զեկավարման բնագավառում: 1922 թ., երբ կոմունիստական կուսակցությունը բացառիկ նշանակություն էր տալիս սովորական երկրի արտաքին առևտրի մենաշնորհի խախտումների դեմ մղվող պայքարքն, պ. Ի. Լենինը վ. Ա. Ավանեսովի գլխավորած Հանձնաժողովին հանձնարարում է ստուգել ՌՍՖՍՀ արտասահմանում առևտրական ներկայացուցիչների գործունեությունը, բազմիցս զբոցում է նրա հետ, ծանոթանում հանձնաժողովի եզրակացություններին: «Ընկ. Ավանեսով, — գրում էր Լենինը 1922 թ. դեկտեմբերի 14-ին, — ուղարկում եմ նամակու: Վերադարձեք մինչև ժամը 7-ը:

Մի լավ կշռադատեցեք, թե ի՞նչ է հարկավոր ավելացնել, ինչը՝ պակասեցնել: Ինչպես տանել պայքարը»²:

Ավանեսովը նամակով հանգամանորեն պատասխանում է Լենինին, հետեւղականորեն պաշտպանում արտաքին առևտրի մենաշնորհի լենինյան դիրքորոշումը նրա հակառակորդներից:

Իմանալով Ավանեսովի առողջական վատ վիճակի մասին, վ. Ի. Լենինը 1918 թ. աշնանը ՌՍՖՍՀ առողջապահության ժողկում Ն. Ա. Սեմաշկոյին առաջարկում է նշանակել միանգամայն վատահելի պրոֆեսոր և հանձնարարել նրան՝ հայտնել իր կարծիքը Ավանեսովի առողջական վիճակի և բուժման մասին: 1922 թ. մարտի 29-ին վ. Ի.

2 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 45, էջ 665:

РОССИЙСКАЯ
СОВЕТСКАЯ ФЕДЕРАТИВНАЯ
РЕСПУБЛИКА.

СОВЕТ
НАРОДНЫХ КОМИССАРОВ.

УДОСТОВЕРЕНИЕ.

№ 11101

Май 1918 г.

Председатель этого тез. АВАКУМОВ Варух
Александрович, постановлением Совета Народных Комиссаров
от 29/VI - 20 года утвержден Членом Коллегии
Всероссийской Цивилизационной Комиссии по борьбе с контр-
революцией, спекуляцией, саботажем и преступлениями
по должности.

Председатель Совета
Народных Комиссаров:

Секретарь Совета
Народных Комиссаров: М. Глебов



Ա. Ի. Անդրեասյանի ստորագրած վկայականը՝
Ա. Ավամեսովին Համառուսաստանյան արտակարգ
հանձնաժողովի կողմանակալ անդամ հաստատելու մասին:

Լենինը դիմում է Գերմանիայում ՌՍՖՍՀ կիազոր
ներկայացուցությանը. «Գործի դրեք բույր չան-
քերը, որպեսզի անհաղաղ վիզա ստանաք Ավա-
մեսովի՝ բանգյուղաշենչության ժողկոմի տեղակա-
լի համար: Եկվոր գերմանացի բժիշկները նրան
համարում են վտանգավոր հիվանդ: Գարունը նրա
համար հատկապես վտանգավոր է: Նա պետք է
մեկնի անհաղաղ: Գործին ընթացք տվեք ամբողջ

ուժով։ Տալիս ենք բոլոր երաշխիքները։ Պատասխանեցեք անմիջապես»³։

Իմանալով, որ Ավանեսովը գործերով ծանրաբեռնված լինելու պատճառով չի ուզում մեկնել բուժվելու, Վ. Ի. Լենինը նույն թվականի տպրի-լին գրում է Ավանեսովին. «Իսկ դուք իսկապես մեկնելո՞ւ եք, ե՞րբ, թե՞ կրկին սաբուաժ եք անելու։ Բուժվել չե՞ք ցանկանում»⁴։

Սրանք հեղափոխության բովով անցած ու ժողովրդին իրենց նվիրաբերած կազրերի նկատմամբ լենինյան հոգատարության հիանալի փաստաթղթեր են։

Սովետական երկրի արտաքին քաղաքականության իրականացման բնագավառում Լենինը բարձր էր զնահատում Լեոն Մինայելի Կարախանի (1889—1937) գործունեությունը։ Կարախանը (Կարախանյան) ծնվել է Թիֆլիսում, հեղափոխական գործունեություն ծավալել Պետրոգրադում, Սիբիրում։ Մեծ հոկտեմբերի օրերին նա Պետրոգրադի ուղմանհեղափոխական խորհրդի անդամ էր, իսկ 1917 թ. նոյեմբերին և 1918 թ. սկզբին Լենինի հանձնարարությամբ վարում էր Բրեստ-Լիտովսկում Գերմանիայի հետ բանակցությունների սովետական պատվիրակության քարտուղարի պարտականությունները։ 1918 թ. մարտին Կարախանը առաջ է քաշվում արտաքին գործերի

³ Նույն տեղում, էջ 567։

⁴ՏԵՌ Հ. Յ. Լիլյան, Սովետական ականավոր դիվանագետը, Երևան, 1978։

ժողկոմի տեղակալ, սովետական կառավարության հանձնարարությամբ քանակցություններ է վարում և պայմանագրեր կնքում Պարսկաստանի, Աֆղանստանի, Բուխարայի, Խիվայի և այլ երկրների հետ: 1918 թ. Հոկտեմբերի 18-ին Կարախանը կենդինի հետ ստորագրում է ժողկոմիոր հի գեկրեալ՝ հյուպատոսություններ հիմնելու մասին, իսկ 1920 թ. Հունիսին՝ ՌՍՖՍՀ և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ու Սովետական Ռուսաստանից դիվանագիտական առաքելություն Հայաստան ուղարկելու վերաբերյալ փաստաթղթերը:

1919 թ. ապրիլին Կարախանին է հանձնարարվում ՌՍՖՍՀ արտգործողկոմատի արևելյան բաժնի ղեկավարությունը: «Սովետական կառավարության արևելյան քաղաքականությունը, — զրել է Գ. Վ. Զիշերինը, — հանդիսանում է միանգամայն ինքնուրուցն, ծայրաստիճան կարեոր, և, թերևս, նույնիսկ նրա միջազգային դործունեության կարևորագույն բնագավառը: Լ. Մ. Կարախանը, իրոք, արևելյան գործերի խոշորագույն էքսպերտն էր»:

1919 թ. Կարախանը մասնակցել է կոմունիստական ինտերնացիոնալի առաջին կոնգրեսի կաղմակերպմանը: Կոնգրեսում ընտրվում է նրա գործադիր կոմիտեի անդամ: 1921—1937 թթ. Կարախանն աշխատել է ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ կենացաստանում, Զինաստանում, ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ, ՍՍՀՄ դեսպան Թուր-

քիայում։ Վ. Ի. Լենինի Երկերում զետեղված են բազմաթիվ փաստաթղթեր՝ հասցեագրված Կարախանին, և նրան տրվող հանձնարարականներով։

Հեղափոխության հաղթանակից անմիջապես Հետո, սովետական կառավարության նախագահ՝ Վ. Ի. Լենինը հին բոլշևիկ Արշակ Յակոբովին (1882—1923) աշխատանքի է նշանակում Պարենավորման ժողովրդական կոմիսարիատում։ Նոցիմբերի 18-ին նա ընդունում է Յակոբովին, զրուցում նրա հետ՝ կոմիսարիատում գործերի վիճակի մասին։ Մեկ օր հետո Վ. Ի. Լենինը ստորագրում է Մ. Ի. Կալինինի, Դ. Զ. Մանուկյանի և Ա. Ս. Յակոբովի վկայականները՝ նրանց Պարենավորման ժողկոմատի կոլեգիայի անդամներ նշանակելու մասին։

Արշակ Յակոբովը 1900 թ. ՌՍԴԲԿ անդամ էր, կուսակցական աշխատանք էր տարել Թիֆլիսում, Մոսկվայում, Սիբիրում։ 1905—1906 թթ. Յակոբովը Լենինի առաջարանքով ղեկավարում է կուսակցության անլեգալ տալարանը Մոսկվայում, որն ստեղծվել էր Լ. Բ. Կրասինի, Գ. Ֆ. Ստուրուայի և այլ ականավոր բոլշևիկների ջանքերով։

Կոմունիստական կուսակցության հնագույն գործիչ Ի. Ա. Պյատնիցկին պատմում է, որ արտասահմանից Լենինի հանձնարարականով գալով Ռուսաստան, ինքը Մոսկվայում ծանոթանում է Արշակ Յակոբովի հետ, որը նշանակված էր տպարանի «տեր»։ «Ընկեր Արշակը, — զրում է Պյատնիցկին, — մանրազնին ստուգելով, թե արդյոք հար-

մար ևս ևս Մոսկվայի կազմակերպության բոլոր գաղտնի տեխնիկական գործերը վարելուն, հանդիպեցրեց ինձ ընկ. Սանդրոյի (Յաշվիլու) և ընկ. Գ. Ստուրուայի հետ, որոնք տպարանի ոգին էին և իրենք փաստորեն աշխատում էին այնտեղ և՛ որպես գրաշարներ, և՛ որպես տպագրիչներ։ Մենք արագ համաձայնության եկանք և մեր մեջ հաստատվեցին գործարար ընկերական հարաբերություններ»⁵։ 1919 թ. Պյատնիցկին կրկին հանդիպում է Յակուբովին՝ Զելյաբինսկում, որտեղ նա աշխատում էր Պարենավորման ժողովրդական կոմիսարիատի լիազոր։

Սովհատական իշխանության առաջին տարիներին Յակուբովը նաև ՌՍՖՍՀ Ռազմահեղափոխական սովետի անդամ էր, պաշտոնավարում էր Ռւկրաինական ՍՍՀ-ում որպես Բանդյուկանչության ժողկոմ։ Պահպանվել են Վ. Ի. Լենինի նամակները, գրությունները, վկայականները Յակուբովին՝ սովետական երկրի և բանակի պարենավորման հետ կապված պատասխանատու առաջադրանքներով։ 1918 թ. մարտի 16-ին Լենինն ստորագրում է Ժողկոմխորհի որոշումը, որը լիազորում էր Գ. Կ. Օրջոնիկիձեին և Ա. Ս. Յակուբովին՝ արտակարգ միջոցների դիմել դեպի Ռուսաստանի հանրապետության խորքերն առաքելու հաց և այլ պարենամթերքներ, առաջին անհրաժեշտության

5 О. Пятницкий, Записки большевика, М., 1956, стр. 106.

տռարկաներ այն վայրերից, որոնց սպառնում է իմպերիալիստական գորքերի ներխուժումը:

Այս փաստաթղթերը վկայում են, թե ինչքան բարձր էր զնա՞ցատում Լենինը Արշակ Յակոբովին, որպես պետական գործչի:

Լավ ճանաչելով Ս. Տեր-Գաբրիելյանին և նկատի ունենալով նրա հմտությունները նավթարդյունաբերության կազմակերպման բնագավառում, Վ. Ի. Լենինը 1918 թ. բազմիցս ընդունում է Տեր-Գաբրիելյանին, տալիս պատասխանատու Հանձնարարություններ, հսկում և օգնում նրանց կատարմանը:

1918 թ. մայիսի սկզբին Տեր-Գաբրիելյանը որպես Բարվի սովետի գործադիր կոմիտեի կոմիսար՝ նավթի հանուլիթի, բաշխման և վաճառքի պծով, մեկնում է Մոսկվա, Լենինին զեկուցելու Բարվում նավթարդյունաբերության վիճակի մասին: «Առաջին իսկ օրը այցելեցի Իլյիշին, — հիշում է Տեր-Գաբրիելյանը, — երեք ժամվա ընթացքում նրան պատմեցի այն ամենի մասին, ինչ որ տեղի էր ունենում մեզ մոտ»⁶: Մայիսի 22-ին Լենինը նախագահում է Ժողկոմխորհի նիստը, որտեղ քննարկվում են նաև Ս. Տեր-Գաբրիելյանին Բարու գործուղելու և Վոլգայով անհապաղ նավթ փոխադրելու համար բոլոր ուժերն ու միջոցները նրա տրամադրության տակ դնելու մասին տնտեսական

6 Սահմակ Տեր-Գաբրիելյան, Հոգվածներ, ճառեր, փաստաթղթեր, Երևան, 1979, էջ 183:



Աճաստած Միկոյան



Սահմակ Տեր-Գաբրիելյան

Հանձնաժողովի որոշումները: Մեկ օր հետո Վ. Ի. Լենինը ստորագրում է Տեր-Գարրիելյանի վկայականը:

Մայիսի 24-ին Լենինը բնդունում է Ա. Տեր-Գարրիելյանին ու Տ. Ա. Մանուչարովին, զրուցում նրանց հետ Բաքվի կոմունայի գրության և նավթարդյունաբերությունն աղգայնացնելու վերաբերյալ Բաքվի Ժողկոմխորհի մատրության մասին: Նույն օրը Լենինը զրություն է հղում ուղղմական Ժողկոմին՝ Ա. Տեր-Գարրիելյանին Հերթից գործ բնդունելու և բաքվեցիներին ուղղմական օգնություն ցույց տալու մասին:

Մոռկվայում եղած ժամանակ Տեր-Գարրիելյանը նշանակվում է ՌՍՖՍՀ ժողովադատիորհի վասելիքային բաժնին կից զլիսավոր նավթային կոմիտեի անդամ: Այդ շրջանին են վերաբերվում Վ. Ի. Լենինի բազմաթիվ երկտողները, զրություններն ու վկայականները՝ կապված Տեր-Գարրիելյանի գործունեության հետ: Լենինի հանձնարարականով նա գործում է ոչ միայն Բաքվում, այլ նաև Սովետական Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում, կատարելով կուսակցական ու տնտեսական պատասխանատու հանձնարարականներ:

Հունիսի 28-ին Տեր-Գարրիելյանը Բաքվի կուսակցական կազմակերպության կոնֆերանսին զեկուցելով Վ. Ի. Լենինի հետ իր հանդիպումների և Բաքվին՝ Սովետական Ռուսաստանի կողմից տրնտեսական օգնություն ցույց տալու մասին, ասում է, «Ընկ. Լենինը բանիցս արտահայտեց իր հիաց-



Ա. Ի. Խելքին ամերիկական և ֆորմանշտեր միացը: Հայոց
հրկորդ՝ Լ. Կուրսանց: 1918 թ. Խոկումը:

մունքը Բաքվի խորհրդի քաղաքականության և իր թանկագին ընկ. Շահումյանի նկատմամբ: Նա հայտնեց իր մշտական պատրաստակամությունը՝ բարոյապես և նյութապես աջակցելու Բաքվի պրոլետարիատին. «Ամեն ինչ Բաքվի համար»՝ այս խոսքերը ևս լսեցի ոչ միայն առաջնորդների շուրջերից, այլև առանձին գործարաններում նաև բանվորներից, որոնք երջանկություն էին համարում ողջունել Բաքվի աներեր պրոլետարիատին»⁷:

Օգոստոսի 22-ին Վ. Ի. Լենինը ստորագրում է շրջաբերական հետագիր, որով ցուցում է տրվում Վ. Պլայխի դեպուտատների բոլոր սովետներին անվերապահորն կատարել Ս. Տեր-Գաբրիելյանի բոլոր կարգադրությունները նավթի, բենզինի և նավթամթերքների առաքումը՝ կազմակերպելու համար:

Բաքվի կոմունայի անկումից հետո Ս. Տեր-Գաբրիելյանը աշխատանքի է անցնում Սովհատական Ծովասատանում որպես գլխավոր նավթային կոմիտեի կողեգիայի անդամ: 1918 թ. նոյեմբերի 18-ին Վ. Ի. Լենինն ստորագրում է նրա վկայականը՝ վառելիքի բոլոր տեսակների առաքման արշավախմբի կոմիսար նշանակելու մասին, իսկ դեկտեմբերի 19-ին՝ մանդատն այն մասին, որ Տեր-Գաբրիելյանը գործուղվում է Գրողնի՝ աղքայնացված նավթարդյունաբերության շրջանային վարչություն կազմակերպելու, նավթահանքերը

⁷ Նույն տեղում, էջ 41:

վերականգնելու, նավթի ու նավթամթերքների փոխադրումը կազմակերպելու և Գրողնուց նավթ ու նավթամթերք փոխադրելու համար։ 1919 թ. Տեր-Գարբիելյանը շարունակում է աշխատել Մոսկվայում։ Ապա կուսակցության հանձնարարականով նա դալիս է Հայաստան, խոշոր դեր կատարում սովետական իշխանության հաստատման ու ամրապնդման գործում։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ նավթային և վառելիքի արդյունաբերության, կարմիր բանակի մատակարարման բնագավառում խոշոր աշխատանք է կատարում Մ. Ս. Բոգդանյանը, որին արված լենինյան բազմաթիվ պատասխանատու հանձնարարությունների, նրա ներկայացրած զեկուցազրերի մասին մի շարք հիշատակություններ կան Վ. Ի. Լենինի երկերի լիակատար ժողովածուում ու կննսագրական ժամանակագրությունում⁸։

1919 թ. Բոգդանյանն աշխատում էր որպես Ռէկրախնայի արտակարգ կոմիսար՝ բանակի մատակարարման գծով, Ռէկրախնայի բանվորագյուղացիական պաշտպանության սովետի անդամ էր, 1921 թ. նա պաշտոնավարում էր նավթային արդյունաբերության մեջ, 1922 թ. վառելիքի արդյունաբերության Կենտրոնական վարչության պե-

⁸Տե՛ս Վ. Ի. Լենին, ՊСС, տ. 42, стр. 334, 424, տ. 50, стр. 385, տ. 51, стр. 29. «Владимир Ильин Ленин. Биографическая хроника», т. 8, М., 1977, стр. 404, т. 9, М., 1978, стр. 519 և այլն։

տրն էր, ապա՝ վասելիքի պետական վարչության կենտրոնական կառավարչության նախագահի տնօղակալը:

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից անմիջապես հետո Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ այստեղ դործուղված կուսակցական սովետական ու ռազմական կադրերի թվումն էր նաև Սարգիս Բաղդատյանը։ Հայաստանի Հեղկոմի որոշմամբ նա նշանակվում է մամուլի և ազիտացիայի կոմիսար, արդարադատության ժողկոմ։ 1921 թ. սեպտեմբերին նա նշանակվում է Մուղանի տափաստանի ոռոգման ու մելորացիայի աշխատանքի և պաշտպանության խորհրդի լիազոր և Լենինի ստորագրած մանդատով մեկնում է այդ սովորական տափաստանը՝ իրականացնելու Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի «Ազգբեշանի, Վրաստանի, Հայաստանի, Թաղթատանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղված պատմական նամակում շարադրված ծրագրային խորհուրդները։

Բաղդատյանի գեկուցագրի հիման վրա 1922 թ. հոկտեմբերին Վ. Ի. Լենինը Հանձնարարում է առանձնացնել Համապատասխան միջոցներ՝ մելորացիոն աշխատանքների համար, Հատուկ հանձնաժողով է ուղարկվում արտասահմանում տրակտորներ գնելու նպատակով։

1921—1926 թթ. գլխավորելով Անդրկովկասի ջրային տնտեսությունը, Բաղդատյանն իր ողջ ուժերը, փորձն ու գիտելիքները նվիրաբերում է

իրկրամասի տնտեսության վերականդնման լենինյան պլանի իրականացմանը:

Վ. Ի. Լենինը բարձր է գնահատել Ա. Բ. Խալարովի (1896—1938) գործունեությունը սովհատկան պետության տնտեսական շինարարության բնագավառում:

Արտաշե (Արտեմ) Բագրատի Խալաթովը (Խալաթյանց) ծնվել է Բարձրում, սովորել և ավարտել տեղի գիմնազիան: 16 տարեկան հասակում նա գնում է Մոսկվա, սովորում Առևտրական ինստիտուտում (այժմ՝ Գ. Վ. Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտ): 1917 թ. օգոստոսին Խալաթովը ընդունվում է բոլշևիկյան կուսակցության շարքերը, ընտրվում Զամոսկվառեցի շրջանի սովհատի և նրա նախագահության կազմում: Նա միաժամանակ Զամոսկվառեցի սաղմահեղափոխական կոմիտեի անդամ էր, զինուրը ձեռքին պայքարում էր Մոսկվայի բարիկադների վրա՝ հեղափոխության հաղթանակի համար:

1918 թ., Սովհատական կառավարության Մոսկվա տեղափոխվելուց հետո, «Նացիոնալ» հյուրանոցում, ուր ժամանակավորապես գտնվում էր Վ. Ի. Լենինը, Խալաթովը հրավիրվում է մեծ առաջնորդի մոտ՝ հաղորդելու նրան մայրաքարի մատակարարման վիճակի մասին: Լենինի նախաձեռնությամբ Խալաթովին հանձնարարվում է ՌՍՖՍՀ պարենային ժողովրդական կոմիսարիատի կողեդիայի անդամի, բաշխման վարչության պետի

և բանվորական մատակարարման հանձնաժողովի նախագահի պաշտոնները: Նա հաճախ հանդես էր դալիս կենինի ղեկավարած Ժողկոմխորհի, Աշխատանքի ու պաշտպանության խորհրդի նիստերում՝ զեկուցումներով ու նախագծերով, որոնք արժանանում են կենինի հավանությանը:

Խալաթովը բազմիցս նշել է, որ սովետական երկրի մատակարարման գործը կենինի ուշադրության կենտրոնում էր: «Արդյոք պե՞տք է կրկնել, — զրել է Խալաթովը «իլյիչի հոգատարությունը սննդի մատակարարմանը» հոգվածում, — որ կենինը եղել է ամբողջ պարենային քաղաքականության ստեղծողն ու կերտողը, որ այն ժամանակ երկրի առջև ծառացած պարենային սուր ու բարդ խնդիրները, երկրի ու մայրաքաղաքի մատակարարման պրոբլեմը հետագա լուծում չէին ստանում առանց նրա ակտիվ ու անմիջական մասնակցության»⁹:

Ժողկոմխորհի 1919 թ. նոյեմբերի 18-ի նիստում Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշվում է Խալաթովին նշանակել կարմիր բանակի ու նախատրոմի պարենամթերքով և առաջին անգամ հեշտության առարկաներով մատակարարման դիմումը պետ: Այդ մասին նրան տրվում է համապատասխան վկայական՝ Վ. Ի. Լենինի ստորագրությամբ:

⁹ «Իզվեստիա», 15 հունվարի, 1927:

20-ական թվականներին Խալաթովը գրեթե՝ միաժամանակ հանդիսանում էր երեք ժողկոմատների՝ պարենացին, ճանապարհների և հաղորդակցության ու կուսավորության կողեզիաների անդամ։ 1921 թ. Լենինի նախաձեռնությամբ Ժողկոմխորհին կից ստեղծվում է զիտնականների կենցաղը բարելավելու կենտրոնական հանձնաժողով, որի նախագահ է նշանակվում Խալաթովը։ Տասը տարի համատեղությամբ մնալով այդ պոստում, նա հսկայական դործ է կատարում մտավորականությանը սովորական իշխանության, լենինյան կուսակցության շուրջը համախմբելու համար։ Մաքսիմ Գորկին, որի հետ երկար տարիներ բարեկամական սերտ հարաբերությունների մեջ էր Խալաթովը, այսպես է բնութագրել նրա բեղմնավոր աշխատանքը՝ զիտնականների կենցաղը բարելավելու կենտրոնական հանձնաժողովում։ «Անձամբ Գուք, թանկաղին բարեկամ, այդ հերոսական տարիներին եղել եք զիտնականների անխոնջ խնամատարքն ու «կերակրողը»։ Գուք Զեր անունը առմիշտ կապել եք ԱԷԿՅԵ-ի հետ, և իս համոզված եմ, որ Ռուսաստանում ստեղծվող ուսուական նոր կուտարացի ակադեմիա պատմաբանը Զեր աշխատանքի մասին կապամի այն զգացումով, այն շնորհակալությամբ, որին դուք անժխտելիորեն արժանի եք»։

Վ. Ի. Լենինը, շնայած իր ծայրահեղ ծանրաբեռնվածությանը երկրի ու կուսակցության զեկավարման մեծ գործերով, միշտ էլ հոգատարու-

թյուն էր ցուցաբերում Խալաթովի կյանքի, աշխատանքի, հանգստի նկատմամբ, կարգադրում էր նրան ամեն ինչով օգնելու Սովետական Հայաստանին:

Սովետական Հայաստանի նկատմամբ լինինյան ջերմ հոգատարության մասին են վկայում Վ. Ի. Լենինի և Ա. Բ. Խալաթովի գրագրությունները: 1919 թ. դեկտեմբերի 19-ին Պարենավորման ժողկոմատի կողեզիայի անդամ Խալաթովին Լենինը պրում էր, «Զեզ պատվիրվում է մեկ ամիս մնալ առողջարանում՝ լիովին բուժվելու համար, որպեսզի այնուհետև ստանձնեք շատ դժվար աշխատանք, որը մինչ այդ կնախատեսվի Զեզ համար»¹⁰:

Այդ շատ դժվար աշխատանքը վերաբերվում էր աշխատանքային ու պարենային հարցի կարգավորմանը, որը պատվով է կատարում Խալաթովը: Պահպանվել են Խալաթովի գրությունները Լենինին և համապատասխան կազմակերպություններին՝ Հայաստանին հաց մատակարարելու համար բացառիկ շտապ միջոցներ ձեռնարկելու մասին:

1921 թ. նոյեմբերին Հայաստանի Պարենժողկոմատին ուղղված հատուկ հեռագրով հայտնելով 50 վագոն հաց ուղարկելու մասին, Խալաթովը գրում էր. «Խնդրում եմ երեքօրյա ժամեկետում համատեղ ստորագրություններով ուղիղ հաղորդաշարով պարենժողկոմատի հերթապահ ներկայացուցի անունով հայտնել, թե ինչ բանակու-

¹⁰ В. И. Ленин, ПСС, т. 51, стр. 96.

թյամբ հաց է ստացվել, առանձին-առանձին, սեպտեմբերին, հոկտեմբերին, նոյեմբերին։ Երնդրում եմ այսուհետեւ յուրաքանչյուր ամսվա մեկին, տասնմեկին, քսանմեկին կանոնավոր կերպով տեղեկություններ հաղորդել հացի ստացման մասին։ Մի քանի օր անց պարենի բաշխման կոմիսար Խալաթովը Ռւերախնայի պարենժողկոմ Խլոպյակինին առաջարկում էր Հայաստան ուղարկել հարյուր հազար փութ հաց։ Նշելով Հիշատակված առաքման հատուկ շտագողականությունը, նա խնդրում էր յուրաքանչյուր հինգ օրը մեկ տեղեկացնել կարգադրության կատարման մասին։

ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՑԸ ԿԱՏԱՐՈՒՄ է
Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Կազմակերպելով և ղեկավարելով սովհատական հայրենիքի պաշտպանության գործը, Լենինը դրան մասնակից էր դարձնում զինվորական գործին դիտակ կուսակցության գործիչների, որոնց թվում էր Միքայել Տեր-Հարությունյանցը (1894—1961)։ Տեր-Հարությունյանցը ավարտել էր Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, ապա սովորել Պետրոգրադի Վլադիմիրովյան զինվորական ուսումնարանում և ստացել պրոպրէցիդի աստիճան։ 1917 թ. մարտին նա մտնում է կոմունիստական կուսակցության շարքերը, ապրիլի 3-ին դիմավորում է վտարանդիտությունից Պետրոգրադ վերադարձած Լենինին և շուտով ծանոթանում նրա հետ։ Հոկտեմբերի 20-ին Պետրոգրադի սազմահեղափոխական կոմիտեն Տեր-Հարությունյանցին նշանակում է Պետրոպավլովյան ամրոցի զինանոցի կոմիսար։

Հոկտեմբերի 29-ին նա կանչվում է Սմոլնի՝ Լենինի մոտ, նշանակվում Պուլկովյան ջոկատի

պետ և ուզարկվում Կերենովու հակահեղափոխական յունկերական գորամասերի դեմ կռվելու: Շուտով նա նշանակվում է Լենինի անմիջական ցուցումով՝ ստեղծված Հակահեղափոխության դեմ պայքարի Հեղափոխական դաշտային շտարի պետ:

1918 թ. Հունվարին Տեր-Հարությունյանցը կրթին Լենինի մոտ է՝ Սմոլնիում: Նա զեկուցում է Լենինին Ռուբախնական կենտրոնական ուսդաշի դեմ պայքարն ուժեղացնելու մասին և ստանում համապատասխան օգնություն: 1918 թ. Հունվարի 15-ին Լենինը Ծովային Հեղափոխական կոմիտեին զբում էր. «Խնդրում եմ արտակարգ միջոցներ ձեռք տոնել՝ անհապաղ ընկ. Տեր-Հարությունյանցի տրամադրության տակ դնելու 2000 նավատի՝ բուրժուական Ռադայի դեմ ուղղմական գործողությունների համար»¹:

Լենինի կարգադրությամբ Տեր-Հարությունյանցին տրամադրվում է 1 000 000 սուրլի, 1000 մարդուց կազմված գվարդիականների ջոկատ՝ հարավում սպիտակների դեմ պայքարն ուժեղացնելու համար, Այդ օգնությունն ստանալով, Տեր-Հարությունյանցը պատվով կատարեց Լենինի առաջադրանքները, ակտիվորեն մասնակցեց Ռուբախնականի և Բելոռուսիայի ազատագրմանը:

1918 թ. ամռանը Լենինը Տեր-Հարությունյանցին հանձնարարում է ուժեղացնել օգնությունը Բաքվի Կոմունային: «Ղեկավարվելով լենինյան

¹ В. И. Ленин, ПСС, т. 50, стр. 31.

դիրեկտիվներով, — ճիշում է Տեր-Հարությունյանցը, — ես ձեռնարկեցի բոլոր միջոցները՝ Բարվի կոմունան բավարար քանակությամբ ճրանոթներով, գնդացիրներով, ճրացաններով, զրահապատներով, ուղմամթերքով և ճանդերձանքով՝ ապահովելու համար։ Բացի զրանից Կրոնշտադտից Մարինյան սիստեմով ու Վոլգայով Կասպից ծովն ուղարկվեցին մեկ ականակիր և մի քանի ոչ մեծ ոաղմանավեր»։

Քաղաքացիական պատերազմն ավարտվելուց հետո Տեր-Հարությունյանցը սովորական ու գիտամանկավարժական բեղմնավոր աշխատանք է ձավալում։

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԿԻԾ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

1918 թ. մայիսն էր, նորաստեղծ Ռուսաստանի մահու և կենաց պայքար էր մղում նորքին ու արտաքին թշնամիների դեմ: Իր ամենածանր օրերըն էր առլրում Ստեփանի Շահումյանի զլիավորած Բաքվի հերոսական կոմունան, որն այդ ժամանակ բաժանված էր կենտրոնից ուղղաճակատների կրակե օգակով: Անջրաժեշտ էր շատալ կապվել սովետական երկրի զեկավար Վ. Ի. Լենինի հետ և անհապաղ օգնություն խնդրել նրանից: Այսպիսի հանձնարարութականութ Ստեփան Շահումյանն իր տղային՝ Սուրենին, ուղարկում է Մոսկվա:

Սուրեն Շահումյանն այդ ժամանակ 16 տարեկան էր, բայց արդեն աշքի էր ընկել որպես անձնութեր հեղափոխական: Կուսակցության VI համագումարից հետո, որը կոչ արեց ուժեղացնել աշխատանքը երիտասարդության մեջ, Սուրեն Շահումյանը ակտիվ մասնակցություն էր ունեցել բոլշևիկների Բաքվի կոմիտեին կից ուսանող երիտասարդության միության կաղմակերպմանը և

կատարել մի շարք կուսակցական հանձնարարություններ:

Սուրենը Մոսկվա է գնում Աստրախանով և Յարիցինով՝ Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, վտանգի ենթարկելով իր կյանքը: Լենինը անմիջապես ընդունում է նրան Կրեմլի իր կարինետում, կարդում Հանձնարարական նամակը և կարեոր փաստաթղթերը: Մանրամասն Հետաքրքրվելով Բարվի վիճակի մասին, լենինը զինվորական հաստատություններին կարգադրում է Յարվի համար առանձնացնել զենք և զինամթերք:

Այս Հանդիպումն անջնջելի տպավորություն է թողնում Սուրենի վրա, որը շատ էր լսել լենինի մասին: Նու անսահմանորեն սիրում էր կուսակցության առաջնորդին: Դեռևս 1917 թ. Հունիսին Ս. Գ. Շահումյանի զավակներն իրենց հորը խընդրել էին Պետրոգրադում լենինին Հանձնել կարմիր կրծքանշաններ, որոնք, ինչպես հիշում է Ն. Կ. Կրուսպակալյան, ժպիտով էր ընդունել լենինը:

Սուրեն Շահումյանը հետազայում սիրով է պատմել, թե ինչպես լենինը պաշտոնական զրուցյից հետո հետաքրքրվել է իր տարիքով և իմանալով, որ 16 տարեկան է, դիմելով այդ զրուցի մասնակիցներից մեկին, ասել է. «Դուք ահսնում եք, ինչպիսի զավակ ունի այժմ մեր հեղափոխությունը: Մեզ մոտ շուտով կլինեն նաև այսպիսի թոռներ»:

Սուրեն Շահումյանը և նրան ուղեկցող ընկերները պատվով են կատարում պատասխանատու

Հանձնարարությունը: Նրանք Բարու և վերապառնում՝ բերելով զենք և զինամթերք:

Սուրեն Շահումյանն իր մարտական մկրտությունն ստացել էր պրոլետարական Բարգի ինտերնացիոնալ միջավայրում, տեսել ու զդացել Հեղափոխական պայքարի դժվարություններն ու Հերոսականությունը: Սուրենը դեռ նոր էր բոլորի 10 տարին, երբ Հոր Հետ միասին ամբողջ ընտանիքով Բարգից արսորվում էն Աստրախան: Փետրվարյան Հեղափոխության առաջին խոկ օրերին Սուրենը և նրա մայրը՝ Եկատերինա Սերգեևնան, մտնում են բոլշևիկյան կուսակցության շարքերը: Սուրենը զառնում է կարմիր գվարդիական, որպես զնդացրորդ մասնակցում 1918 թ. մարտին Բարգում տեղի ունեցած փողոցային կոիվներին՝ ընդդեմ մուսավաթական Հակահեղափոխական ուժերի: Բարգի Հերոսական կոմունայի օրերին նա կատարում է սովետական կառավարության բազմաթիվ մարտական Հանձնարարականները:

Ս. Գ. Շահումյանը բազմիցս մեծ երախտադիտությամբ է նշել տիյ անզնահատելի օգնության մասին, որ ցույց էր՝ տալիս Սովետական Ռուսաստանը, անձամբ Վ. Ի. Լենինը Բարգի կոմունային: 1918 թ. Հունիսի 23-ին Վ. Ի. Լենինին ուղարկած նամակում Ս. Շահումյանը գրում էր. «ԹԱՆԿԱԳԻՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԻԼՅԻԶ: Այսօր, վերջապես, եկավ Տեր-Գաբրիելյանը և մեզ համար բերեց 4 զրահամերենա, 13 օդանավ և ուրիշ շատ բարիքներ: Այս բոլորի համար շատ և շատ շնորհման».

կալություն ձեզ: Մենք ստացանք այն, ինչ մեզ
պակասում էր, և որը մեզ այժմ անգնահատելի
ծառայություն է մատուցելու»¹: Հովհանի 9-ին Ս.
Շահումյանը հեռագրով հաղորդում էր վ. ի.
Լենինին և ի. վ. Մտալինին, որ «Մոսկվայից հկած
զբանապատճերն ու օդանավերն ուղարկված են
բանակ, որտեղ արդին գործի են դրված մեծ հա-
ջողությամբ... նավթի արտահանումն ուժեղացված
է»²:

1 Առ. Շահումյան, Ելժ, Հատ. 5, էջ 146:

2 Նույն տեղում, էջ 172, 174:

«ԱՄԵՆԱԲՈՒԺԻՉ, ԱՄԵՆԱԼԱՅ, ՎԻՐԱԿԱՓՈՐ»

1918 թ. կեսերին սովետական Հանրապետության վիճակը խիստ ծանր էր: Ռուսաստանը գլուխվում էր կրակե օղակի մեջ՝ շրջապատված իմպերիալիստական զավթիչների և սպիտակզվարդիական միացյալ ուժերի մինչև առամները զինված զորքերով: Նրանք ոչ մի միջոցի առաջ կանգ չեին առնում տապալելու սովետական իշխանությունը:

1918 թ. օգոստոսի 30-ին, երբ լննինը նոր էր ավարտել իր ելույթը՝ Միխելսոնի զործարանի բանվորների միտինգում, էսէռ Կապլանը մի քանի անգամ կրակում է նրա վրա և թունավորված դնդակներով երկու ծանր վերք պատճառում: Զարանինգ մահափորձը մեծ զայրույթ է առաջացնում և է՛լ ավելի համախմբում սովետական ժողովրդին իր սիրելի առաջնորդի շուրջը:

Քաղաքացիական կոիվների հիանալի զորավարներն ու հերոսները՝ Մ. Վ. Ֆրունզին, Կ. Ե. Վորոշիլովը, Վ. Ի. Բլյուխերը, Ս. Մ. Բուդյոննին, Մ. Ն. Տուխաչևսկին, Գ. Ի. Կոտովսկին, Ս. Գ. Լա-



Մարտ Նազարբեղյան



Ասկի Տեր-Հովհաննիսյան



Շուշանիկա Մանուչարյանց



Վ. Ի. Անդրեասյանը և Յա. Մ. Սվերդլովը դիտում են Կ. Մարքսի
և Ֆ. Էնգելսի հուշարձանը: Զախից եւկոռողը՝
Մ. Տեր-Հարությունյանց: Մոսկվա, 7 նոյեմբերի 1918 թ.:

զոն, Վ. Ի. Չապաելը, Ա. Յա. Պարխոմենկոն, Ն. Ա. Շլորսը և ուրիշներ կենինի զլիւավորությամբ կազմակերպում էին թշնամու ջախջախումը տարբեր ռազմաճակատներում։ Նրանց թվում իրենց արժանավոր տեղն ունեն Հայ ժողովրդի պանծալի դափակները՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, Գասպար Ռոկանյանը, Գրիգոր Խախանյանը, Գրիգոր Կորդանյանը, Անաստաս Միկոյանը, Միսակ Բաբախանյանը, Ալեքսանդր Վերմիշելը, Հակոբ Մելքոնյանը, Գևորգ Աթարբեկյանը, Վլադիմիր Թափիրովը Շնիկ Սահակյանը և ուրիշներ։

Հյուսիսային Կովկասում Դենիկինի բանդաների գեմ խիզախորեն մարտնչում էին կենինի անվան Հայկական զնդի հերոս մարտիկները։

1918 թ. սեպտեմբերի 12-ին Արևելյան ռազմաճակատի մեջ մանող 24-րդ երկաթյա դիվիզիայի մարտիկները, լեզենդար Հայկ Բժշկյացի (Գայ) հրամանատարությամբ, սուրնթաց գրոհով սպիտակգվարդիականներից ազատազրում հն կենինի ծննդավայր Սիմբիրսկ (այժմ՝ Ուլյանովսկ) քաղաքը։ Հենց այնտեղից Գայը հեռազրում է կենինին։

«Թանկագին Վլադիմիր Իլյիչ։ Զեր Հայրենի քաղաքի գրավումը պատասխան է Զեր մեկ վերին, իսկ երկրորդի պատասխանը կլինի Սամառան»։

Կայտառացած ուրախալի լուրով, կենինը սեպտեմբերի 22-ին պատասխան հեռազիր է ուղարկում։ «Սիմբիրսկի՝ իմ Հայրենի քաղաքի գրավու-

մը ամենաբուժիչ, ամենալավ վիրակապն է իմ վերքերի վրա: Ես շտեսնված կայտառություն և ուժ եմ զգում: Շնորհավորում եմ կարմիրբանակայիններին Հաղթանակի առթիվ և բոլոր տշխատավորների անունից շնորհակալություն եմ Հայունում նրանց՝ բոլոր զոհողությունների համար»¹:

Գայը աղղային-աղատազրական և Հեղափոխական պայքարի ականավոր հերոս էր: Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին նա որպես Հայ կամավոր, կովել էր Կովկասյան ռազմաճական թուրքական դավթիչների դիմ:

Հոկտեմբերյան Հեղափոխության Հաղթանակից անմիջապես հետո զտնվելով Սամարդանդում, նա կազմակերպում է կարմիրզվարդիական ջոկատ և մասնակցում Բուխարայի Էմիրության դեմ մղվող կոիվներին:

Մերձվոլգյան մի շարք քաղաքների աղատազրումը Գայի անունը դարձնում են լեզենդար, նրա մասին երգեր են Հյուսվում:

1918 թ. վերջին Գայը նշանակվում է առաջին բանակի հրամանատար:

«Քաղաքացիական պատերազմի աջեղ տարիներին,— զրել է Սովետական Միության մարշալ Ս. Մ. Բուգյոնին, — փայլուն աստղի պես բոցերլաց Հայ ժողովրդի փառապանծ զավակ, սովետական ականավոր զորահրամանատար Գայ Դիմիտրեկչ Գայի անունը»:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 28, էջ 102:

Գայը սերտորեն կապված էր Հայաստանի հետ և ապրում էր իր ժողովրդի տղատագրման բաղ-ձանքով: 1920 թ. ապրիլին, երբ կարմիր բանակի զորամասերը օգնության էին գնում անդրկովկաս-յան ժողովուրդներին, նա իր նամակներից մեկում դրում էր. «Վերջապես իրականանում է իմ երա-զանքը... չէ՞ որ ես իզուր շեմ կռվել Վոլգայի ափե-րին՝ ոռւսական հեղափոխության համար, ես գի-տեի, որ ոռւս եղբայրները մեզ օգնության կգան»:

1922—23 թթ. Գայն աշխատում էր որպես Հա-յաստանի ուազմական զործերի ժողկոմ: Նա հրա-մանատարական բարձր պաշտոններ է զրավում սովետական բանակում, դառնում Ռազմական ակադեմիայի պրոֆեսոր, գրում մի շարք արժե-բավոր աշխատություններ՝ ՍՍՀՄ-ում քաղաքա-ցիական կոիվների և ուազմական արվեստի կա-րևորագույն հարցերի մասին:

Վ. Ի. Լենինը ճանաշում և բարձր էր գնահա-տում Հայկ Բժշկյանցին և մի շարք այլ ուազմա-կան զործիչների՝ 25-րդ լեգենդար դիվիզիայի, ապա 4-րդ բանակի հրամանատար Գասպար Ռո-կանյանին, 1917—1918 թթ. Արևմտյան մարզի զինվորական կոմիսար, Բելոռուսիայում ընդհա-տակյա մարզկոմի քարտուղար Հովհաննես Ալի-բեկյանցին, Ղրիմում հանրապետության ուազմա-հեղափոխական խորհրդի լիազոր Սիսակ Բաբա-խանյանին (Բաբախան), Թուրքեստանյան առան-ձին հեծյալ բրիգադի հրամանատար Հակոբ Մել-

բումյանին և բաղարացիական կոփվների այլ հերոսների:

1918 թ. Հունիսին Պէտրոգրադում լինինը բնդունել էր Հին բոլշևիկ նիկոլայ Հովհաննիսյանին (Օգանհոսվ) և լսել նրա Հաղորդումը Արևմտյան ռազմաճակատում զինվորների Հեղափոխական տրամադրությունների մասին:

Նրանցից շատերը բազմաթիվ զեկուցադրեր ու նամակներ էին ուղարկել լինինին՝ ռազմաճակատում գործերի վիճակի մասին:

«ԹԱՆԿԱՂԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ԲՆԻ.
ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻԶ»

Այսպես է սկսում 1919 թ. ապրիլի 6-ի իր նամակը Անինին Մեծ Հոկտեմբերի և քաղաքացիական կռիվների հերոս Ալեքսանդր Վերմիշեր (1879—1919):

Վերմիշեր երկար տարիներ ճեղափոխական աշխատանք է տանում Անդրկովկասում, 1903 թ. մտնում է ՌՍԴԲԿ շարքերը և միաժամանակ զբաղվում զրական աշխատանքով: Դեռևս երիտասարդական տարիներին նա հրատարակում է մի շարք հոդվածներ, բանաստեղծություններ, ֆելիետոններ, պատմվածքներ:

1906 թ. օգոստոսի 27-ին Ա. Վերմիշեր Տերիոկիի ամառային թատրոնի շենքում մասնակցում է ՌՍԴԲԿ Պետրոգրադի կոմիտեի կազմակերպած այն կուսակցական ժողովին, որի նախագահը Անինն էր: Նա լսում է Անինի ելույթները, քվեարկում Անինի առաջարկած բանաձեռի օգտին: Անինը զրուցում է Վերմիշերի հետ, հետաքրքրվում բանվորների մասնակցության մասին անլեզար ժո-

զովներին: Լենինի հետ Հանդիպման տպավորության տակ Ա. Վերմիշելը գրում է իր Հեղափոխական դրաման՝ «Ճշմարտության հետքերով»¹, նվիրված 1905 թ. Հեղափոխական դեպքերին, որը լույս է տեսնում 1908 թ. Պետերբուրգում:

1917 թ. Հոկտեմբերին Վերմիշելը Պետերբուրգում մասնակցում է ձմեռավին պալատի գրոհին: Հեղափոխության փոթորիկներում նա ժամանակ է գտնում գրելու մի շարք պինսներ, դրանցից մեկը՝ «Կարմիր ճշմարտությունը», նա ուղարկում է Լենինին՝ խնդրելով կարծիք հայտնել: «Շատ եմ խնդրում, — գրում էր Վերմիշելը Լենինին, — ճակատամարտի թեժ պահին իմ ժամանակակից թեմայով ստեղծագործական այս փորձի վրա դնեք ձեր մակագրությունը, և ինչպիսին էլ լինի զա, վերադարձնեք ձեռագիրը, որպեսզի ես ուղղություն տվող սկզբունք ունենամ շարունակելու աշխատանքը՝ իմ կարծիքով ներկայումս խիստ կարեոր այդ ասպարհությում»:

Ապրիլի 16-ին Ժողովարքորչի քարտուղարը Լենինի Հանձնարարությամբ Ա. Վերմիշելին հաղորդում է, որ «Կարմիր ճշմարտություն» պինսը ուղարկվել է երեք գրականագետ-խմբագիրների կարծիքի, որոնք նշել են, որ պինսը որպես ագիտացիալի միջոց, պետք է ուժի աղղեցություն թողնի մանավանդ այնտեղ, որտեղ տեղի է ունեցել քաղաքացիական պատերազմը: Որոշ դիտո-

¹ «Պրավդա», 5 նոյեմբերի, 1978:

զություններից հետո նշվում էր, որ սլիհաը լավ է ժողովրդական մասսաների համար:

1919 թ. մայիսին Ա. Վերմիշել կրկին ուղմահակատի առաջավոր դժում էր, Դոնի շոջանում, ուր որպես Հետևակային զումարտակի կոմիսար, 13-րդ բանակի կազմում կռվում էր գեներալ Մամոնտովի սպիտակդվարդիական զորքերի ղեմ: Այնտեղ, ելեցկ քաղաքի մոտ, նա հերոսաբար զոհվում է 1919 թ. օգոստոսին: Մահվանից առաջ Ա. Վերմիշելի վերջին խոսքերն էին. «Կեցցե՛ սովետների իշխանությունը: Կեցցե՛ ընկեր Լենինը»²:

² Александр Вермишев, Избранные, Ереван, 1976, стр. 266.

Ա. Ի. ԼԵՆԻՆԻ ՄՈՏ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

1919 թ. նոյեմբերին բոլշևիկյան կուսակցության Կովկասյան երկրային կոմիտեի հանձնարարականով նույն կոմիտեի բյուրոյի անդամ Անաստաս Միկոյանը Մոսկվայում լինում է վ. ի. Լենինի մոտ և ավելի քան երկու ժամ զրոյում նրա հետ։ Սա Միկոյանի առաջին հանդիպումն ու զրույցն էր կուսակցության առաջնորդի և սովհատական պետության ղեկավարի հետ։

Մինչ այդ Միկոյանը հեղափոխական աշխատանք էր տարել Կովկասում, եղել Բաքվի կոմիտեի ականավոր դործիչներից, աշխատել Ստեփան Շահումյանի անմիջական ղեկավարությամբ։ 1919 թ. մայիսին նա մանրամասն նամակ էր գրել վ. ի. Լենինին՝ Անդրկովկասում տիրող իրազրության և իրենց խնդիրների մասին։ Կտորի վրա տպագրված և հագուստի մեջ կարված այդ նամակը մեծ վտանգներով Բաքվից Դենիկինյան ուղամաճակատի վրայով Մոսկվա էին հասցրել երիտասարդ կոմունիստներ Ա. Ս. Բերյոցինսկայան և Տ. Ս. Ասքենդարյանը։ Նրանց ընդունել էր Լենինը,

ուշադիր կարգացել նամակը և համապատասխան օդնություն ու ցուցումներ տվել։ Սակայն բաղաքացիական պատերազմների այն ժանր ժամանակաշրջանում իրադարձությունները ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում արագ փոփոխվում էին և դնում նոր խնդիրներ կուսակցական կազմակերպությունների առջև։

Միկոյանը Մոսկվա է գնում Աստրախանով, որտեղ հանդիպում է Ս. Մ. Կիրովին, մասնակցում տեղի քաղաքական կյանքին, կուսակցական ժողովներին և հետեղականորեն պաշտպանում լենինյան գիծը։ Կիրովը հայտնում է Լենինին Միկոյանի Աստրախանից Մոսկվա մեկնելու մասին։ Մոսկվա հասնելու առաջին իսկ օրը Լենինը ընդունում է Միկոյանին և գրուցում նրա հետ։

Վ. Ի. Լենինի հետ ունեցած իր այս հանդիպման մասին Միկոյանը հետագայում գրել է. «Երկար ժամանակ իմ ապրումների ու խոհերի առանցքը Լենինի հատ կայացած զրոյցն էր։ Ապշեցնում էր այն, որ Վլադիմիր Իլյիշը ամենահանգամանալից կերպով հետաքրքրվում էր Կովկասի բոլոր հարցերով, այդ թվում՝ նաև մանրամասնություններով։ Բազմաթիվ հարցեր էր տալիս, ճշգրտում, թե ինչ է տեղի ունենում Բաքվում և ամբողջությամբ վերցրած Ադրբեյջանում, Վրաստանում, Հայաստանում, Դաղստանում, Ղեջենիայում և Կովկասի մյուս շրջաններում»¹։

¹ Ա. Ի. Միկոյան, Պայքարի ուղիով, Երևան, 1972, էջ 697։

Միկոյանը լենինին հաղորդում է Անդրկովկասում տիրող վիճակի, Ազրբեջանի բոլշևիկների հաջողությունների մասին, որ ձեռք էր բերվել 1919 թ. դարնանից հետո, լենինյան կուսակցության շուրջը Բաքվի պրոլետարիատի համախմբման, կուսակցական անլեգալ աշխատանքը դործունեության լեզար ձեռքի հետ զուգակցելու մասին։ Պատմում է Հայաստանում և Վրաստանում տիրող դրության ու խնդիրների մասին, հայտնում է, որ ամեն ինչ նախապատրաստված է, որպեսզի Բաքվում և ամբողջ Ազրբեջանում անհապաղ հաստատվի սովետական իշխանություն։

Զնայած իր խիստ ծանրաբեռնվածությանը և Սովետական Ռուսաստանի արտակարգ դժվար վիճակին, լենինը հանգամանորեն կշռադատում է Կովկասում մղվող պայքարի հարցերը և պոազարկում Միկոյանին զեկուց գրել կուսակցության Կենտկոմին, անհրաժեշտ տեղեկություններ և նկատառումներ տալ, որպեսզի դրանք քննարկվեն Քաղբյուրոյի նխտում։

Վ. Ի. Լենինի ցուցումով և անձնական մասնակցությամբ Կովկասի կուսակցական կազմակերպությունների դործունեության հարցերը բազմիցս քննարկվում են Կենտկոմի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի նխտերում, մեծ օգնություն է կազմակերպվում սովետական իշխանության հաղթանակի համար պայքարող Ազրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորությանը։

Այդ պայքարը շուտով պատճեն է լիակատար

Հաղթանակով։ Ա. Ի. Միկոյանը Գ. Կ. Օքոնիկի-ձեի, Ա. Մ. Կիրովի և մյուս լենինյանների հետ միասին ապահովում է Վ. Ի. Լենինի ցուցումների իրականացումը, ակտիվորեն մասնակցում ՍՍՀՄ-ի կազմավորման լենինյան գաղափարի կենսա-դործմանը։

«Սոցիալիստական հեղափոխությունը, որ սկըս-վել էր Հոկտեմբերով, շարունակում էր իր հաղ-թական ուղին, — զրել է Ա. Ի. Միկոյանը։ — Այդ սոցիալիստական ուղու վրա մեկը մյուսի հակից ինքնորոշվեցին մեր բաղմազգ երկրի ժողովուրդ-ները։ Աստիճանաբար ձևավորվեցին սովետական ժողովուրդների սերտ կապերը, որոնք այնուհետեւ հանգեցրին Սովետական Սոցիալիստական Հան-րապետությունների Միության կազմավորմանը։ Ղեկի մոտ կանգնած էր հեռատես նավավարը, մեր հեղափոխական դարաշրջանի կողմից ծնված մարդկանցից մեծագույնը՝ Լենինը»²։

2 «Լենինի հետ. Վավերագրեր և հուշեր», էջ 232,

ԿԻՆՈԿԱՐՈՒԽՄ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԿՈՂՔԻՆ

1920 թ. մայիսի 1-ին Վ. Ի. Լենինը մասնակցում է Մոսկվա գետի առափնյա փողոցում (այժմ՝ Կրոպոտկինի) «Ազատագրված աշխատանք» հուշարձանի հիմնադրմանը և ճառ արտասանում։ Պահպանվել են այս արարողության մի քանի կիսուկադրեր, որոնցում Վ. Ի. Լենինի կողքին կանգնած է Հայ ականավոր քանդակագործ Հակոբ Գյուրջյանը։

Դեռևս 1912 թ. Փարիզում Գյուրջյանը ծանոթացել էր Մաքսիմ Գորկու հետ, քանդակել էր նրա կիսանդրին։ Մի անգամ Գորկու հետ քանդակագործի արհեստանոցն է այցելում Լենինը, ծանոթանում Գյուրջյանին, դիտում նրա գործերը։

Հակոբ Մարգարի Գյուրջյանը ծնվել է 1881 թ. Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում։ 1900 թ. նա գնում է Ֆրանսիա՝ ուսումը շարունակելու։ Հետագայում, երբ արդեն նշանավոր քանդակագործ էր, նա ստեղծում է Լև Տոլստոյի կիսանդրին, որը լայն ճանաչում է գտնում։ 1915 թ. վերադառնալով Ռուսաստան, Գյուրջյանը մասնակցում է մի շարք

ցուցահանդիսների, ծանոթանում ականավոր արվեստագիտների հետ:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Գյուրջյանը սովորական կառավարության և անձամբ Վ. Ի. Լենինի հանձնարարականով մասնակցում է մոնումենտալ պրոպագանդայի մասին լենինյան ցուցումի իրականացմանը:

1918—1920 թթ. Ս. Ալյոշինի և Ս. Մոլցովի հետ միասին նա քանդակում է Կարլ Մարքսի հուշարձանը, որն արժանանում է լենինի հավանությանը. 1920 թ. նա մասնակցում է «Ազատագրոված աշխատաք» հուշարձանի նախագծի մրցանակաբաշխությանը, իսկ մայիսի 1-ին այդ հուշարձանի հիմնադրման արարողությանը, լսում լենինի ելույթները:

1920 թ. Հունիսի 23-ին Վ. Ի. Լենինին ուղղած նամակում Ս. Լունաշարսկին գրում էր.

«Թանկագին Վլադիմիր Իլյիչ.

Դուք ինձ խոստացել եիք մի քանի անգամ կեցվածք ընդունել նկարիչ-քանդակագործ Գյուրջյանի համար: Այդ նկարիչը հայ է, շուտով համապատասխան բոլոր իշխանությունների թույլտվությամբ մեկնելու է Արևմուտք:

Այնտեղ նա կարող է ավելի ամուր նյութից պատրաստել կիսանդրի, որն այստեղ կկերտի Զեղանից:

Այդ քանդակագործը շատ լավն է, և կիսանդրին, հավանորին, հաջող կլինի: Ես շատ կիսնդրեի Զեղ Հրաժարվել ամենամոտ ապագայում նշանա-

կել համեմատաբար կարճ սեանսներ այդ աշխատանքի համար»¹:

Ռեակցիոն ուժերն ամեն կերպ ձգտում էին վրեժ լուծել առաջավոր արվեստագետից, քանի որ նա գտնվում էր Սովետական Առևսաստանում և համակրում էր բոլշևիկներին:

Գյուրջյանը մեծ ցանկություն ուներ զալ Սովետական Հայաստան, կազմակերպել այստեղ իր գործերի ցուցահանդեսը: Բայց այդ չի հաջողվում: Նա ծանր հիվանդանում է և վախճանվում 1948 թ.: 1959 թ. Գյուրջյանի գործերը և արխիվը Փարիզից ուղարկվում է Երևան և ցուցադրվում Հայաստանի պետական պատկերասրահում: Դիտելով Գյուրջյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, Մարտիրոս Սարյանը նրան անվանել է մեր ժամանակի ամենախոշոր քանդակագործներից մեկը. «Ես տեսնում եմ, զգում, որ ստեղծելով իր քանդակինները, նա ապրել է իր Հայաստանի արևով և գործերով»:

1 «Ленин и Луначарский. Переписки, доклады, документы», М., 1971, стр. 196.

ԱՅՍ ԹՌԻԽ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՈՎՔԵՐ ԵՆ

Վ. Ի. Լենինի հետ հանդիպած մի շարք ընկերներ մեծ սիրով էին հիշում սիրելի ուսուցչի և առաջնորդի ջերմ ու հոգատար վերաբերմունքը երկխաների նկատմամբ։ Նա սիրում էր բոլոր ազգերի երկխաներին և սովետական իշխանության առաջին իսկ օրերից ամեն ինչ անում, որպեսզի նրանք անհոգ ապրեն, դաստիարակվեն հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով։

Հին կոմունիստներ Օլգա Հովհաննիսյանն ու Զ. Արզումանովան, որոնք այդ տարիներին զբաղվել են հայ մանուկների դաստիարակության հարցերով, 1919 թ. մայիսին կյան տոնին Մոսկվայում, Կարմիր հրապարակում տևել և լսել են Լենինին, ականատես եղել, թե ինչպես Լենինը տրիբունա բարձրանալիս նկատելով միտինգի եկած հայկական զիշերօթիկ դպրոցի սաներին, ուշադիր նայել է նրանց և հարցրել.

— Այս թուխ երկխաները ովքե՞ր են։

— Հայկական զիշերօթիկ դպրոցն է... ընկեր Լենին, — պատասխանել է Օլգա Հովհաննիսյանը։

Դպրոցն այն ժամանակ տեղավորված էր նախկին Լազարյան ճեմարանի շենքում, որը կենինի կարգադրությամբ վերանվանվել էր Հայկական ինստիտուտի և ծառայում էր Հայ աշխատավորների կուլտուր-լուսավորական կարիքներին:

Հուղիչ է Վ. Ի. Լենինի վերաբերմունքը Հին բոլշևիկ Հովսեփ Կարախանյանի ընտանիքի նկատմամբ:

1918 թ. Հունիսին Բարվի սովետը Կարախանյանին նշանակում է իրանում առաջին սովետական միսիայի ավագ խորհրդական և քարտուղար: 1918 թ. նոյեմբերին անգլիական ինտերվենտների կողմից միսիայի հետապնդումից հետո, նրա մյուս աշխատակիցների հետ Կարախանյանը ևս արսորվում է: Իր ընտանիքով նա բանտարկվում է Համագանում, ապա՝ Բաղդատում: Լենինի միջնորդությամբ Կարախանյանը 1921 թ. ուազագերիների փոխանակման կարգով ազատվում է և ընտանիքով տեղափոխվում Մոսկվա՝ աշխատանքի անցնելով ՌՍՖՍՀ արտաքին գործերի կոմիսարիատում:

Իմանալով Կարախանյանների ընտանիքի՝ շորս փոքր երեխաների կրոծ հալածանքների մասին, Վ. Ի. Լենինը 1922 թ. ընդունում է նրանց կրեմլի իր աշխատասենյակում: Այս մասին Հովսեփի Կարախանյանի գուտարը պատմում է.

«Փոքր-ինչ սպասելով ընդունարանում, մտանք Վ. Ի. Լենինի առանձնասենյակը: Վլադիմիր Իլյիչը ուրախ ժպատակով դիմավորեց մեղ, ձեռք տվեց



Գ. Ինքնար, Յա. Ո. Սկերպով և գ. Ա. Ավանդոսի դիմում և՛ ինքնարին
բախչը ցուցի ժամանուի: 7 նոյեմբերի 1918 թ.:



Հարգիս Կառլյան



Աստվանակ Մոսկվան



Գայլ

Հորս, ապա առաջարկեց նստել: Փոքր քրոջս նա նստեցրեց ծնկներին, իսկ հս կանգնեցի վ. ի. Լենինի կողքին և ոչ մի կերպ չէի հավատում, որ նա Լենինն է, իսկական Լենինը, որը մեծ սիրով ու բնբշությամբ նայում է մեզ և փաղաքշաքով շոյում մեր զլուխները: Վ. ի. Լենինը խոսում էր Հորս Հետ, նայում էր մեզ և ասում. «Խեղճ, խեղճ երեխաներ, այժմ ամեն ինչ լավ կլինի, դուք բոլորդ կառողջանաք և կկազդուրվեք»:

Վլագիմիր Իլյիշը առանց շտապելու, երկար խոսում էր Հորս Հետ: Նա մանրամասնորեն հետաքրքրվում էր մեր ուսման գործով, քանի որ մեզնից երեքը դպրոցահասակ երեխաներ էին: Վլագիմիր Իլյիշը հաճելիորեն զարմացավ, երբ իմացավ, որ թեև մենք դպրոց չեինք հաճախում բայց գրագետ ենք: Մեզ գրագիտություն էին սովորեցրել մայրս ու հայրս բանտում և աքսորում: Մենք կարողանում էինք ազատ կարդալ, գրել, հաշվել»¹:

Հ. Հ. Կարախանյանը (1878—1931) ծնվել էր իրանում, սովորել էջմիածնի Գևորգյան, Մոսկվայի կազարյան ճեմարաններում և Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Դեռևս ուսանողական տարիներին նա ուսումնասիրում է Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները և Ռուսաստանից վերադառնալով իրան, սրբագագանդում մարքս-լենինյան գաղափարները:

¹ «Լենինի Հետ. Վավերագրեր և Հուշեր», էջ 344:

1906 թ., երբ Կաբախանյանը թավրիզում սկաշտոնավարում էր որպես ուսուցիչ, այնտեղից ժնի սղարկած նամակներից մեկում գրում էր. «Թանկագին ընկերներ, խնդրում եմ չզլանալ մի քանի տեղեկություններ գրելու ինձ կենինի մասին։ Որտեղ է նա, ի՞նչ է անում, չի՞ ձերբակալված արդյոք։ Հայկական և ոռոսական թերթերը, որ ես ստանում եմ, մի համառ լոռություն են պահպանում այդ մասին։ Կենինին անձամբ ծանոթ չեմ, բայց նրա անձնափորությունը շատ սիրելի է ինձ։ Նրա ուժեղ անհատականությունը, պայծառ և կորովի միտքը, որ ցայտում է նրա գրվածքների յուրաքանչյուր տողից, նրա անսահման նվիրվածությունն իր դավանած գաղափարներին, այս բոլորը դարձրել են նրան իմ աշբում նախկին գարերի մի դյուցազն և կենինի անունը աշակերտ ժամանակից պաշտած կուռքերիս անունների հետ՝ Բելինսկու, Պիսարեի, Դոբրոլյուբովի—ես խորին պատկառանքով է, որ արտասանում եմ յուրաքանչյուր անգամ»։

Զերմ սերն ու խոր հավատարմությունը կենինի նկատմամբ Հ. Կարախանյանը պահեց իր ողջ պիտակցական կյանքի, գործունեության ընթացքում։ 1910 թ. նա զինվորագրվեց լենինյան կուսակցությանը, ակտիվորեն աշխատակցեց բոլշևիկյան մամուլում՝ հետեղականորեն հանդես գալով մարքսիզմ-լենինիզմի պաշտպանությամբ նրա բոլոր թշնամիներից։ Սովետական իշխանության ա-

ուաշին իսկ տարիներին նա հանդիս է զալիս որպես
լենինյան դպրոցի դիվանագետ:

1922 թ. վերջին Հ. Կարախանյանը կոկին լի-
նում է Վ. Ի. Լենինի մոտ: Այդ նոր տարվա նախ-
օրյակին էր: Հետաքրքրվելով Կարախանյանի երե-
խաներով, որոնք այդ ժամանակ ապրում էին
Խարկովում, Լենինը նրանց համար ուղարկում է
տոնածառի խաղալիքներ, որոնք օգտագործվում
են մանկատան տոնածառը գարդարելու համար:

Հին կոմունիստ, քաղաքացիական կոիվների
մասնակից Լ. Ա. Լենցները պատմում է, որ 1921 թ.
հունիսի 16-ին պարենավորման Համառուսաս-
տանյան III խորհրդակցությունում ունեցած ելույ-
թից հետո Վ. Ի. Լենինը նրա մասնակիցների հետ
զրուցելիս հետաքրքրվել է նաև Դրիմի պարենա-
վորման գրվածքով և այդ մասին իրեն հարցրել.

— Թեոդոսիայի մոտ մտավորականների հա-
մար հին առողջարան կա: Այժմ այնտեղ ապրում
են դոկտոր Վերեսակը, պոետ և նկարիչ Վոլոշինը,
արտիստ Մասալիտինովան... Իսկ Սուդակում՝
կոմպոզիտոր Սպենդիարովը: Ինչպես է նրանց
մատակարարումը:

— Նախկինում նրանք ծառայողների մթերք
էին ստանում, իսկ այժմ Պարենավորման ժողկո-
մատի կոլեգիան որոշել է ակադեմիական մթերա-
բաժնով մատակարարել,— պատասխանեցի ես:

— Այդ լավ է,— ասել է Լենինը²:

² «Курортная газета» (Ялта), 21 апреля, 1968.

Վ. Ի. Լենինը դիտեր հայ մեծ կոմպոզիտոր
Սպենդիարովի մասին: 1921 թ. գեկտեմբերին
նրան տրվում է կառավարական շնորհագիր այն
մասին, որ գտնվում է սովետական իշխանության
հովանավորության տակ, որի օրգաններին առա-
ջարկվում էր ցույց տալ նրան ամեն տեսակ ա-
շակցություն:

ԼԵՆԻՆՑԱՆ ԽՈՍՔՈՎ ՈՂԵՇՆԶՎԱՆ

Շատ հայ գործիչներ լսել են Լենինի զեկուցումները, ճառերը, ելույթները խորհրդակցություններում, կուսակցության ու սովետների համագումարներում, միտինգներում, ոգեշնչվել են Լենինյան մորիլիդացնող խոսքերով, նրա երկաթյա տրամաբանությամբ, ամենաբարդ երևոյթները հստակ վերլուծելու նրա վարպետությամբ:

Դեռևս 1905 թ. վերջին, այն ժամանակ Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Ալեքսանդր Մելիքյանը, Բոգդան Կնունյանցի միջնորդությամբ, մասնակցում է ինստիտուտի շենքում կայացած այն խորհրդակցությանը, որը ելույթներ է ունենում Լենինը: Այդ օրից 55 տարի անց, արդեն Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր Ա. Մելիքյանը մեծ հուզմունքով հիշում է. «Ես երբեք չեմ մոռանում այդ օրը, իլլիչի վառ կերպարը կարծես իմ դիմաց է, ես ահսնում եմ նրա պայծառ դեմքը, ձեռքերի շարժումը, զգում եմ նրա համոզելու և համախմբելու մեծ

կարողությունը, նրա խոսքի անհաղթահարելիութը»¹:

Սովետական իշխանության տարիներին վ. ի. Ենինին բազմիցս լսել են կուսակցական ու սովետական աշխատողներ Ռուբեն Քաթանյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Հովսեփ Լազյանը, Ավետ Նուրիջանյանը, Ստեփան Վարդանյանը, Ռաֆայել Կարապետյանը, Վարդուշ Տարախչյանը, Մարիա Մաթյանը, Աղասի Վարդանյանը, Արամ Շահվերդյանը, Մամիկոն Կոբյամազյանը, Արշալույս Արշարունին և ուրիշներ:

Հին կոմունիստ, ականավոր գիտնական, սովետական իշխանության առաջին տարիներից վերածնված Հայաստանի կառուցողներից մեկը՝ Աշոտ Հովհաննիսյանը (1887—1972) 1918—1922 թթ. բազմիցս տեսնելով ու լսելով կենինին զրել է. «Առաջին Հայացքից զարմանալու և շշմելու ոչինչ շկար ոչ կենինի արտասահմած խոսքի ու խնտոնացիաների, ոչ նրա կեցվածքի ու ձայնի մեջ: Խոսում էր պարզ ու հասկանալի: Թվում էր քեզ, թե նա մտածում է այնպիս, ինչպիս ինքդ, արտահայտում մտքեր, որ ինքդ ևս ունեցել ես: Բայց հենց զրա մեջ էր կենինի մեծությունը, նրա հանճարի ժողովրդայնության բանալին: Իլլիչը զգում էր և գիտեր այն, ինչով ապրում էր բանվորը, զյուղացին, մատավորականը, և զգալով այդ՝ ամենից լավ էր կարողանում նշել այն, ինչ ամենից

1 «Կենինի հետո Վավերագրեր և հուշեր», էջ 324:

անհրաժեշտ էր և կարենը՝ առաջ շարժվելու համար։ Նա ընկալում էր երեսոյթներն իրենց կոնկրետ վիճակով, տեսնում նրանց խորքն ու երանգավորամները և ամենից լավ տարբերում կարելուրը երկրորդականից։ Նա չէր վարանում ներկայացնել փաստերն ինչպես որ նրանք կան, չէր թաքցնում ոչինչ ոչ իրենից, ոչ ժողովրդական մասսաներից, չէր երկնշում նշել ու նշավակել սխալները, ում կողմից էլ կատարված լինեին դրանք։

Միշտ հավատարիմ մարքսիզմի սպոն, միշտ սկզբունքային ու աներեր, նրա խոսքը կենտրոնացած էր կոնկրետ երեսոյթների և ընթացիկ իրողությունների հատկապես վերլուծության վրա։ Երբեք նա չէր կրկնում իրեն։ Նրա ամեն մի ելութի մեջ կար նոր ու այժմնական բան։ Տեսնում էր նորը իրադրության մեջ և հիմնականը անելիքների մեջ»²։

1917 թ. լինինյան կուսակցության անդամ Վարդուշ Տարախչյանը լսել է Վ. Ի. Լինինին երեք անգամ։ 1921 թ. Հունիս-Հուլիսին՝ Կոմինտերնի III կոնգրեսում, «իմ կյանքի ամենաերջանիկ ու անմոռանալի այդ օրերին, — Հիշում է Վ. Տարախչյանը, — ևս հավաշտակված դիտում էի թանկադին, հարազատ Լինինին, լսում նրա բոցաշունչ ելութները, որոնք միշտադային պրոլետարիատին կոչ-

2 Աղոստ Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 13։

էին անում հետեւելու նուսաստանի բանվոր դասակարգի օրինակին, թոթափելու կապիտալի լուծը, պայքարի ելնելու հանուն ամբողջ մարդկության ազատ, երջանիկ կյանքի, հանուն կոմունիզմի:

Այդ օրերին ևս ապրում էի իլլիշով։ Նրա պատգամները՝ ուղղված սովետական երկրի բանվորութիներին ու գեղջկութիներին և ամբողջ աշխարհի կանանց, ինձ համար դարձան ուղեցույց աստղ՝ Սովետական Հայաստանում կանանց մեջ իմ կատարած ողջ աշխատանքի ընթացքում»³։

1918 թ. ՍՄԿԿ անդամ Մարիա Սաթյանը խնամքով պահում է 1919 թ. հոկտեմբերի 28-ի արտագրուցական կրթության գծով հրահանգիշկազմակերպիչների դասընթացների ուսանողների, այդ թվում նաև իր լուսանկարը Վ. Ի. Լենինի և Ն. Կ. Կրուպսկայայի հետ։ Պատմելով այդ լուսանկարի և Լենինի ելույթի իր վրա թողած անչընչելի տպավորության մասին, Սաթյանը գրում է, «Եմին անգամ այդ լուսանկարին նայելիս ջերմագին հուշեր են արթնանում իմ մեջ... իլլիշը մեղ պատմեց միջազգային դրության, Անտանտի նենդ և ազրեսիվ գործողությունների, ռազմաճակատում տիրող դրության մասին։ Իր ելույթում նա հավանություն տվեց մեր մտադրությանը՝ մեկնել ուղմաճակատ։ Մեծ նշանակություն տալով բանակում տարվող քաղաքական աշխատանքին,

³ «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք երկրորդ, էջ 70։

նա մեր առջև խնդիր դրեց կարմիր մարտիկներին
զինել քաղզրագիտությամբ, պարզաբանել նրանց,
թե ինչի համար են նրանք մարտնչում, անձնվի-
րության և խիզախության օրինակ ծառայելու⁴:

⁴ Նույն տեղում, էջ 71, 72.

Ա. Ե. ԼԵՆԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՈՒԾԲՆ

1920 թ. մարտից, ավելի քան երեք տարի, Կրեմլում որպես Վ. Ի. Լենինի գրադարանավարուծի է աշխատել Շուշանիկա Մանուչարյանը:

Մանուչարյանցը ծնվել է 1889 թ. Ստավրովուլում, ավարտել դիմնավիան և ապա սովորել Պետերբուրգի իդական (Բեստովեցան) բարձրագույն դասընթացում:

1912—1914 թթ. նա սովորել է Կապրի կղզում, ուսումնասիրել արվեստը, գրականությունը, իտալական լեզուն: Իտալիայում նա անձամբ ծանոթացել է Ա. Մ. Գորկու, Պ. Ի. Շալյապինի, Ի. Ա. Բունինի և գրականության ու ազվեստի այլ ականավոր գործիչների հետ: 1917 թ. Մանուչարյանցը Հեղափոխական Պետրոգրադում է, իսկ մեկ տարի անց տեղափոխվում է Մոսկվա և աշխատում Համառուսաստանյան Կենտգործկոմի Հրատարակությունում, ապա՝ Պետրատում: Այստեղից էլ արդեն կամունխատական կուսակցության անդամ Մանուչարյանցին երաշխավորում են աշխատանքի անցնել Վ. Ի. Լենինի գրադարանում, որը տե-

դափոխված էր Կրեմլի նրա աշխատասենյակը։ Այդ տարիներին Մանուչարյանցը ամեն օր շրփվում էր Լենինի հետ, օգնում նրան աշխատանքում՝ ապահովելով անհրաժեշտ գրքերով։

Լենինի գրադարանում կային մոտ 2 հազար գիրք, բազմաթիվ թերթեր, հանդեսներ, որոնք ընտրվում, դասավորվում, լրացվում կամ ուրիշներով փոխարինվում էին միայն Լենինի ցուցումով կամ նրա հանձնարարությամբ։ Այնաեղ մինչև այժմ էլ խնամքով պահպանվում են նաև հայ հեղափոխական ու գրական գործիչների մի շարք գործեր, գրքեր Հայաստանի մասին։ Դրանցից են՝ «Հայաստանի պոեզիան Հին ժամանակներից մինչև մեր օրերը», որ նվիրել էր Լենինին Հայկական գործերի կոմիսար Ավանեսովը, Բ. Կունյանցի «Բանվորական դեպուտատների առաջին սովետը»՝ հրատարակված Պետերբուրգում 1906 թ., Ա. Մյասնիկյանի «Սոցիալիստ-հեղափոխականները» (Մինսկ, 1919 թ.), Ա. Տ. Արկումեղի (Գ. Ղարաջյան) «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում», Հակոբ Հակոբյանի բանաստեղծությունների ժողովածուն՝ հայերեն (1922), Հովսեփ Օրբելու «Սասունի հնությունների ժամանակավոր ցուցահանդես» (1922), Մարիետա Շահհինյանի «Գրական օրագիր» հոդվածների ժողովածուն (1923) և այլն։

Փահպանվել են Լենինի բազմաթիվ գրավոր հանձնարարությունները Շ. Մանուչարյանցին, որոնք կատարվում էին բարեխղճությամբ։ Լենինը

շատ զոհ էր իր զրադաշանավարություց, որի մասին ասել է. «Դեռ ոչ ոք ինձ այդքան լավ չի սպասարկել»:

Մանուչարյանցը միշտ հիացմունքով է հիշել իր աշխատանքի մասին լենինի զրադարանում: «Լենինի, մեծ ու իմաստուն մարդու ղեկավարության ներքո աշխատելը հեշտ էր ու հաճելի, — զրել է Մանուչարյանցը, — նրա առաջադրանքներն աչքի էին ընկնում իրենց պարզությամբ ու լակոնիկությամբ: Նա երբեմն հարցնում էր, թե արդյոք կարիք չկա ինձ օգնել իրեն հարկավոր գիրքը որոնելու գործում: Ինձ հետ միասին ուրախանում էր, երբ հաջողվում էր արագորեն ստանալու նրան հետաքրքրող նոր զրականությունը»¹:

Վ. Ի. Լենինի մահվանից հետո Մանուչարյանցը շարունակում է աշխատել Կրեմլում որպես Ն. Կ. Կրուպսկայայի զրադարանավարութի, ապա դիտական աշխատանքի է անցնում ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում:

¹ Շուշանիկա Մանուչարյանց, Վլադիմիր Իլյիչի զրադարանում, Երևան, 1966, էջ 131:

ՊՈՌԾ ՊՈՌՇՅԱՆԻՆ ՏՐՎԱՌ ԼԵՆԻՆՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Պոռշ Պոռշյանը (1883—1918) ծախս էսեռների լիդերներից էր։ Բազմիցս ենթարկվելով ցարական կառավարության հետապնդումներին, տարագրվել էր արտասահման։ Փետրվարյան հեղափոխությունից հետո վերադառնալով Ռուսաստան, Հանդիս է դալիս էսէռական կենտրոնի Համաձայնողական դիրքերի դեմ, երկու անդամ հեռացվում էսէռական կուսակցությունից, իսկ 1917 թ. Հուլիսին ժամանակավոր կառավարության կողմից բանտարկվում է։ 1917 թ. դեկտեմբերին Պոռշյանը մտնում է Լենինի կառավարության մեջ որպես Փոստ-Հեռագրի ժողկում։ 1918 թ. մարտին Բրեստի Հաշտության պայմանագրի դեմ ծախս էսէռների առարկության կապակցությամբ նա դուրս է գալիս Ժողկումխորհի կազմից, սակայն Լենինի առաջարկությամբ շուտով նշանակվում է Հանրապետության Բարձրագույն ուսումնական խորհրդի անդամ և պայքարում սովետական իշխանության

ամբապնդման համար¹: 1918 թ. Հուլիսին Պոռշյանը Մոսկվայում մասնակցում է ձախ էսէոների խոռվությանը, որից հետո հեռանում է քաղաքական գործունեությունից և շուտով վախճանվում:

1918 թ. դեկտեմբերի 20-ին Վ. Ի. Լենինը «Պրավդայում» հատուկ հոդված է հրապարակում «Ծնկ. Պոռշյանի հիշատակին», որում բարձր զնահատական է տալիս Պոռշյանի հեղափոխական հետեղականությանն ու համոզվածությանը: «Ես ծանոթացել եմ րնկ. Պոռշյանին և զնահատել նրան,—գրում է Վ. Ի. Լենինը,—անցյալ տարվա վերջին ե ընթացիկ տարվա սկզբին ժողկոմիսորչում համատեղ աշխատանքի ընթացքում, երբ ձախ էսէոները մեզ հետ գաշնակից եին: Պոռշյանը իսկույն աշքի բնկավ հեղափոխության և սոցիալիզմի նկատմամբ խոր նվիրվածությամբ»: Այսուհետեւ նշելով, որ էսէոների մեծամասնությունը սոցիալիստներ չեն, Լենինը կրկին ընդգծում է Պոռշյանի խորապես համոզված սոցիալիստ լինելը: Ոչ թե մարքսիզմի, այլ ուրիշ, ուրույն ճանապարհով դառնալով սոցիալիստ, Պոռշյանը վճռականորեն կանգնում է բոլշեվիկ-կոմունիստների կողմը՝ ընդդեմ ձախ էսէոների, որոնք արտահայտելով մանր տնտեսատերերի տեսակետը, բացասաբար էին վերաբերվում գյուղատնտեսության բնագավառում անցկացվող կոմունիստական միջոցառումներին: Քննադատելով Պոռշ-

¹ «Известия», № 75, 1918.

յանի վերաբերմունքը Բրհստի հաշտության հարցում և ապա սովետական իշխանության դեմ խռովություն կազմակերպելու համար, Անդինը ավելացնում է. «Բայց, այնուամենայնիվ, Պոռշյանին վիճակվեց մինչև 1918 թվականի հուլիսը ավելի շատ քան անել սովետական իշխանության ամրապնդման համար, քան 1918 թվականի հուլիսից՝ նրա քայլայման համար: Եվ գերմանական հեղափոխությունից հետո ստեղծված միջազգային իրադրության մեջ Պոռշյանի նորառուաջվանից ավելի հաստատուն, — մերձեցումը կոմունիզմին անխուսափելի կլիներ, եթե այդ մերձեցմանը շխանգարեր վաղաժամ մահը»²:

2 Վ. Ի. Անդին, Երկեր, Հատ. 36, էջ 580:

ԱՊՀԱՒՅՑՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

1920 թ. Հայաստանի աշխատավոր մասսաները, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ, սպեշնչված Սովետական Ռուսաստանի պատմական հաղթանակներով, հերոսական պայքար էին մղում դաշնակների լուծը թոթափելու և իրենց երկրում ևս սովետական կարգեր հաստատելու համար։ Այդ պայքարի փայլուն էջերից է Մայիսյան համաժողովրդական ապստամբությունը, որի ղեկավարները Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտներն էին։

Կարմիր մայիսը ուղի հարթեց նոյեմբերի համար։ Ժողովրդի կամքով, նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատելով սովետական կարգեր, Հայաստանի նորաստեղծ Հեղկոմը իր ողջույնի առաջին խոսքն ուղղեց Վ. Ի. Լենինին. «Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին, — ասված էր Հեղկոմի ողջույնի հեռագրում, — որ Դիլիջանի ու Քարվանսարայի շրջանների գյուղացիները, զայրացած դաշնակցական կառավարության հանցավոր քաղաքականությու-


Ալեքսանդր Ալեքսիշե



Արմենակ Խալաբով



Ալեքսեյ Զիվելեզով



Վահան Տերյանի Համառուսաստանյան Սովետների
Կենտրոնականի անդամության տոմսը: 1918 թ. նոյեմբեր:

նից և երկրում խորացող անարխիալից, բարձրացրին տպատամբության զրոշը: Հայաստանի կռմունիստական կուսակցությունն իսկույն ևեթ ստանձնեց այդ տարհրային շարժման դեկավարությունը և ստեղծեց Հայաստանի Հեղկոմ, Հայաստանը հայտարարելով՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետություն»: Հեղկոմը օգնություն էր խնդրում Ռուսաստանի կռուավարությունից՝ իմաստերիալիզմի դեմ Հայաստանի աշխատավորության պայքարը հաջողությամբ պատկելու համար: Վ. Ի. Լենինն անմիջապես պատասխանում է Հեղկոմի հեռագրին և բազմակողմանի օգնություն կազմակերպում նորաստեղծ Խովետական Հայաստանին:

1920 թ. գեկտեմբերի 2-ին, Երևան, Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ ընկ. Կայանին ուղարկած նամակում լենինը նշում էր. «Հանձին ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»¹:

Սարգիս Կայանը (1876—1938) լենինյան դպրողիայի հին գինվորներից էր: Պահպանվել են նրա նամակները՝ ուղարկված 1913 թ. Թիֆլիսից բոլշևիկյան կուսակցության արտասահմանյան կենտրոնին՝ անդրկովկայան գործերի մասին: Այդ նամակներից մեկում, հայտնելով Կովկասի բոլշևիկ-լենինյանների մտադրությունը հայերեն

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 31, էջ 550:

Григорий
Председатель
~~Революционного комитета~~
Временного правительства
Москвы
Принимаю Ваше письмо
о возвращении отца
Ильи Ильинского Тихонова сына
Ильи Афанасьевича Тихонова не
сомневаюсь, что Ваше письмо -
шаг вперед к тому, что я хотела
доказать вражеский санкционный
план подрывания временного правительства,
Всеобщую избирательную реформу
~~Председатель Государственной Думы~~
Москва 2/VI 1917

Վ. Ե. Անդրեասյանի հուշագիրը Հայաստանի
ռազմականագովական կոմիտեի նախագահ
Ս. Կասյանին: 1920 թ. 2 դեկտեմբերի:

հանդես հրատարակելու մասին, նա զրում էր. «Մենք խնդրում ենք ընկ. իլյիշին, որը մեծ հարգանք ու հեղինակություն է վայելում մեր մեջ. աջակցել իր հոդվածներով. ուժեղացնել ու ամրապնդել մեր ազգեցությունն ու պայքարը»:

1920 թ. դեկտեմբերին Լևինին ընդունում է Սովետական Հայաստանի Հեղկումի անդամներ Սահակ Տեր-Գաբրիելյանին և Ասքանազ Մուսլյանին, զրուցում նրանց հետ, ցուցումներ տալիս և խոստանում կոնկրետ օգնություն: Հիշելով այդ մասին, Ա. Մուսլյանը հետագայում գրել է. «Ուշադիր հայացքով իլյիշը վեր կացավ տեղից, առաջ եկավ մինչև սենյակի կեսը, աշխույժ սեղմեց մեր ձեռքը. «Բարե, ընկերներ» ասելով և առաջարկեց նստել, աթուաներ առաջ քաշելով մեզ համար:

Վլադիմիր իլյիշի այդքան նրբազգաց սիրավերությունն ինձ ճնշեց, բայց և այնպիսի վստահություն ներշնչեց, որ նստեցի նրա զրասեղանի առաջ՝ իբրև Հին մտերիմ բարեկամի մոտ, որից ոչինչ չունես թաքցնելու»²:

Դեկտեմբերի 14-ին, Ա. Տեր-Գաբրիելյանին և Ա. Մուսլյանին ընդունելու հաջորդ օրը, Վ. Ի. Լևինը Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Վ. Զիշերինին զրում էր. «Ընկ. Զիշերին; Երեկ ինձ մոտ էր Տեր-Գաբրիելյանը, որը նույնպես պատմում էր ջարդի ահավոր վտանգի մասին:

2 «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք երկրորդ, էջ 60—61:

(1) Թե 600000 Հայ գաղթականներ կորստի ևն մատնվում:

(2) Թե առանց Կարսի Բաքուն վտանգի մեջ է: Պետք է, իմ կարծիքով, անշատել Ն (1)-ը Ն (2)-ից և ամեն կերպ օգնել Ն (1)-ին:

Չեր կարծի՞քը, և Դուք ի՞նչ եք անում Ն (1)-ի կապակցությամբ»³:

Այդ այն ժամանակ էր, երբ Հայաստանը զըտնը վում էր շատ ծանր վիճակում: Քեմալական զորքերը զավթել էին Ալեքսանդրապոլը (այժմ՝ Լենինական) և Հայաստանի միակ երկաթուղին: Հանրապետությունը պարենային ծանր ճգնաժամի մեջ էր: Քաղաքներում ու գյուղերում տասնյակ հազարավոր սոված զավթականներ կային: Իմանալով այդ մասին, Լենինը խստանում է ամեն կերպ օգնել Հայ ընկերներին. «Մենք ինքներս զըժվարին դրության մեջ ենք, բայց Սովետական Հայաստանին կօգնենք ամեն կերպ», — ասում է Լենինը: Նա բազմիցս նախազգուշացնում էր Հայաստանի նկատմամբ քեմալական թուրքերի ազրեսիվ պլանների մասին: Լենինի կարգադրությամբ Հայաստանին տրվում է մոտ 600 հազար սուրբի՝ ոսկով. Հաց, մանուֆակտուրա և այլ մթերքներ. սովետական կառավարության պահանջով 1921 թ. ապրիլին թուրքական զորքերը հետ են բաշվում Ալեքսանդրապոլից և երկաթուղուց:

³ Վ. Ե. Լենին, Երկեր, Հատ. 45, էջ 18—19:

«ՊԵՏՔ Է ԴՐԵՒ ՇՏԱՓ ԿԵՐՊՈՎ, ՈՐՓԵՍԳԻ ՈՒՂԱՐԿԵՒ ԲՆԿ, ՄՅԱՍՆԻՌՈՎԻ ՀԵՏ»

Սովետական իշխանության առաջին տարիններին Լենինի կարգադրությամբ Հայաստանում աշխատելու ևն ուղարկվում հեղափոխության բոցներում կովկած շատ հայ գործիչներ, որոնց մեջ առաջնության պատիվը պատկանում է Ա. Ֆ. Մյասնիկյանին, որին այն ժամանակ հայկական Լենին էին անվանում:

Մինչ այդ Ա. Մյասնիկյանը բազմիցս հանդիպել ու զրուցել էր Վ. Ի. Լենինի հետ, Մոսկվայում աշխատել նրա անմիջական ղեկավարությամբ:

1918 թ. հունվարին Սահմանադիր ժողովի նիստում, իսկ ապա Սովետների Համառուսաստանյան III համագումարում Մյասնիկյանը պաշտպանում է Լենինի առաջարկությունը սովետական իշխանության դեմ տրամադրված Սահմանադիր ժողովը ցրելու մասին: Մարտի 13-ին, նա, որպես Արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, մասնակցում է Լենինի նախագահությամբ Մոսկվայում՝ Կրեմլում տեղի ունեցած ռազմական

զեկավար աշխատողների երկու կարևոր խորհրդակցությունների, որտեղ քննարկվում են կարմիր բանակի կազմակերպման ու շինարարության հարցերը։ Լենինը լսում է Մյասնիկյանի և մյուսների ելույթները, հարցեր տալիս նրանց և խնդիրներ առաջադրում։

1918 թ. գարնանը, երբ չեխական կորպուսի խոռվության պատճառով խիստ վտանգավոր դրություն էր ստեղծվել Պովոլժիեում, Մյասնիկյանը կուսակցական այլ փորձված աշխատողների հետ միասին լննինի առաջարկությամբ ուղարկվում է Արենլյան ռազմաճակատ։ Վ. Ի. Լենինը մայիսի 31-ին Պենզայի նահանգական խորհրդի պործկոմի նախագահ Վ. Վ. Կուրակին հեռագրում է Մյասնիկյանի Արենլյան ռազմաճակատ մնելու մասին և առաջարկում նրան Ռուզանկա (Պենզայի մոտ, որն արդեն զրավվել էր թշնամիների կողմից) հասնելուն պես հրավիրել հեռախոսի մոտ իր հետ խոսակցության համար¹։ Ծանօթանալով Արենլյան ռազմաճակատի դրությանը, Մյասնիկյանը մի շարք միջոցառումներ է իրականացնում այն բարեկավելու համար, այդ մասին համապատասխան զեկուցագիր ներկայացնում Վ. Ի. Լենինին։ Հունիսին Մյասնիկյանը զեկավարում է սպիտակ շեխերի դեմ կարմիր բանակի զորամասերի մարտական զործողությունները։ Ամսի վերջին նա վերադառնում է Արենլյան ռազմա-

ճակտություն, զորքերի գլխավոր հրամանաւորի իր պաշտոնին:

1918 թ. նոյեմբերին, Սովետաների VI համագումարի բացումից հետո, Վ. Ի. Լենինը լնդունում է Ա. Ֆ. Մյասնիկյանին և Յա. Մ. Սվերդլովի հետ միասին զրուցում Արևմտյան ռազմաճակատի զրության մասին: «Բնկեր Լենինն ու Սվերդլովը վճռում են, — հիշում է Մյասնիկյանը, — որ ես հենց այսօր երեկոյան ետ վերադառնամ Սմոլենսկ, այնտեղից գործերի զրության մասին տեղեկություններ հաղորդեմ Մոսկվա և տեղական աշխատողների հետ միասին միջոցներ ձեռք առնեմ որևէ բարդությունների գեպքում, որ կարող են աեղի ունենալ արևմտյան սահմանի վրա: Բնկեր Լենինը տալիս է ամենամանրամասն, մանրակերկիւ խորհուրդներ: Նա առաջարկում է լինել զգուշ, զգոն, չզրգոել գերմանական զորքերին, չիջոցներ ձեռք առնել, որ մեր զույքը չկողոսպատեն: մինչև իսկ այսպիսի մանրամասնություններ, — այնպիս անել, որ հնուազրական տպարատները և կայարանների զանգերը մեր ձեռքում մնան: Դրանք այնպիսի մի իսկական տիրոջ խորհուրդներ էին, որը հիանալի կերպով հասկանում էր, թե ամենափոքր անզգուշությունն ու մեր գույքի չնշին կորուստը կանդրագառնա ավերված Սովորական Ռուսաստանի օրգանիզմի վրա»²:

² Ա. Ֆ. Մյասնիկյան, Բնափառ երկեր, Երևան, 1957, էջ 463:

Ա. Մյասնիկյանը ջանք չի խնայում Վ. Ի. Լենինի այս խորհուրդները մինչև վերջ կատարելու համար։ Բարձր գնահատելով Մյասնիկյանի ուղմական դործունեությունը բաղաքացիական պատերազմի տարիներին, Ա. Մ. Կիրովը գրել է. «Որքանով, որ այս կամ այն ուղմաճակատում ուժեղանում էր ուղմական վտանգը, մենք տեսնում ենք, թե ինչպես կուսակցությունը և Հեղափոխական իշխանությունը նրան երկրի մի ծայրից դցում էր մյուս ծայրը։ Եվ ամենուրեք Մյասնիկյանը պատվով էր կատարում Հեղափոխականի իր պարտքը»։ Կիրովը Մյասնիկյանին անվանել է «Հեղափոխությունից ծնված գեներալ»։

Վ. Ի. Լենինը ուշադիր հետեւում էր Մյասնիկյանի դործունեությանը, ուղղություն և խորհուրդներ էր տալիս նրան, օգնում հաղթահարելու դժվարությունները։ 1918 թ. դեկտեմբերի 29-ին կուսակցության Կենտկոմի և Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Աղջությունների գործերի ժողովը ի. Վ. Ստալինը հեռազրում է Սմոլենսկ ՌԿ(բ)Կ Հյուսիս-արևմտյան մարզային կոմիտեի քարտուղար Ա. Ֆ. Մյասնիկյանին և Սմոլենսկի նահանգային կոմիտեի անդամ Մ. Ա. Կալմանովիչին։ Նր նույն օրը Սմոլենսկ են գնում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Բելոռուսական սեկցիայի ներկայացուցիչներ Դ. Ֆ. Ժիլանովիչը և ուրիշներ՝ Բելոռուսիայի բանվորազյուղացիական ժամանակավոր կառավարության մանիֆեստով։ «Կուսակցության կենտկոմը և Լենինը խնդրում են,— ասված էր հեռա-

պրում, — ընդունել նրանց որպիս կրտսեր հղբայրներ, զուցել թերեւ, անփորձ, բայց պատրաստ իրենց սղջ կյանքը տալու կուսակցական, սովետական աշխատանքին»³:

Վ. Է. Լենինը հեռագրում է Բելոռուսիայի բանվորագյուղացիական ժամանակավոր կառավարության անդամ Ա. Ֆ. Մյասնիկյանին, Հայտնելով, որ Մինսկ է զործուղվում հատուկ ներկայացուցիչ՝ ՌՍՖՍՀ և Բելոռուսիայի սովետական կառավարության միջն կառի ու փոխադարձ ինֆորմացիայի համար⁴:

1918 թ. երկրորդ կեսին Մյասնիկյանը Ա. Չերվյակովի և ուրիշների հետ միասին մեծ աշխատանք է կատարում Բելոռուսիան օտարերեցաինակի ներկայական մարդկու, Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն ստեղծելու, Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության առաջին հիմնադիր համար: 1918 թ. վերջին Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության առաջին հիմնադիր համագումարում, որտեղ էլուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշմամբ հիմնվեց Բելոռուսիայի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը, Սովետական Միության կոմունիստական կուսակցության հավատարիմ ջոկատներից մեկը, Մյասնիկյանն ըն-

³ «Очерки истории Коммунистической партии Белоруссии», ч. 1, М., 1968, стр. 431.

⁴ Տե՛ս «Советская Белоруссия» (Минск); № 95, 22 апреля, 1964.

աղրվում է ԲԿ(բ)կ Կենտկրմի բյուրոյի նախագահ՝ 1919 թ. սկզբին Հաստատվում է Բելոռուսական ՍՍՀ Կենտգործկոմի նախագահ։

1919 թ. մարտին Մյասնիկյանը Մոսկվայում մասնակցում է կուսակցության VIII համագումարի աշխատանքներին, լսում Վ. Ի. Լենինի զեկուցումները, Հանդիպում նրա հետ և ակտիվորեն պաշտպանում լինինյան Հարցադրումները։

1919 թ. դարնանից մինչև 1921 թ. սկիզբը Մյասնիկյանն աշխատում է Մոսկվայում, որպես կուսակցության Մոսկվայի կոմիտեի քարտուղար և դինվորական կազմակերպիչ, Մոսկվայի Սովետի նախագահության անդամ։ Այդ դժվարին ժամանակաշրջանում աշխատելով սովետական Հայքինիքի սրտում, Վ. Ի. Լենինին անմիջականորեն մոտիկ, Մյասնիկյանը, կուսակցության Կենտրոնական կոմիտեի զեկավարությամբ, անողոք պայքար է կազմակերպում սովետական իշխանության թշնամիների գեմ, ակտիվորեն մասնակցում Մոսկվայի սղաշտպանությանը, Հակակուսակցական, օպոզիցիոն խմբերի մերկացմանը, լայն աշխատանք է ծավալում կուսակցական, սովետական կազմակերպությունների ամրապնդման ուղղությամբ։

Մոսկվայում աշխատելու ժամանակ Մյասնիկյանը Հաճախ լինում էր Լենինի մոտ։ Նրանք միասին այցելում էին քաղաքի կուսակցական, սովետական և արդյունաբերական ձեռնարկությունները, Հանդիպումներ ունենում բանվորների հետ,

մասնակցում էին կոնֆերանսներին և համագումարներին: 1919 թ. Հուլիսի 12-ին ՌԿ(Բ)Կ Մոսկվայի քաղաքային կոնֆերանսում Վ. Ի. Լենինը զեկուցում է Ռուսաստանի ներքին և արտաքին գրության մասին, նոր խնդիրներ դնելով կուսակցության և կարմիր բանակի առջև: Նույն կոնֆերանսում «Հատուկ նշանակության ջոկատների մասին» զեկուցումով հանդես է գալիս Մյասնիկյանը: Նա առաջ է քաշում Մոսկվայի կուսակցական կազմակերպության ուազմավաշտպանական աշխատանքների հետ կապված մի շարք կարեոր խնդիրներ:

Մյասնիկյանն ամենաակտիվ մասնակցությունն է ունենալու Մոսկվայի պաշտպանության կազմակերպման գործին: Նա նշանակվում է Մոսկվայի պաշտպանության օպերատիվ շտաբի պետ, իր ուազմական ու քաղաքական մճճ փորձն ու գիտելիքները նվիրելով սովետական մայրաքաղաքի պաշտպանության խնդիրների կատարմանը:

Մյասնիկյանը միշտ սիրով ու հպարտությամբ է նշել Մոսկվայում Լենինի անմիջական զեկավարությամբ իր աշխատանքի մասին: Բնորոշելով դեպի ապագան Լենինի հատուկ լավատեսությունը, բոլոր տեսակի գժվարությունները հաղթահարելու նրա անհողող կամքը, բանվոր դասակարգի, ժողովրդական մասսաների նկատմամբ Լենինի ունեցած խոր հավատը, Մյասնիկյանը գրել է, որ Լենինը «իր հոգու բոլոր թերերով, իր բոլոր մտքերով, իր ողջ էությամբ օրդանապես կապված

էր բանվոր գասակարգի հետ, որի կարողությանը և ուժին նա անսահմանորեն հավատում էր... Հենվելով դրա վրա, տեսնում էր շատ հեռուն և հենց դրանով էլ կարող էր համարձակ կերպով նախագուշակել սովետական իշխանության բախտը...»⁵:

Վ. Ի. Լենինը մեծ վստահությամբ ու ջերմորեն էր վերաբերվում Մյասնիկյանին, բարձր էր զնահատում նրա նվիրվածությունը կուսակցությանն ու ժողովրդին, սրտառուշ հոգատարություն էր ցուցաբերում նրա նկատմամբ: Պատմելով ընկերների նկատմամբ Լենինի ջերմ հոգատարության մասին, Մյասնիկյանը դրել է. «Լենինի բնավորության այս գիծը շեշտել են շատ ընկերներ—զարմանալի ուշադրություն դեպի ընկերները, նույնիսկ դեպի քիչ ծանոթները, հոգատարություն այն ընկերների նկատմամբ, որոնց կարիքների մասին լուրեր էին հասնում նրան: Ես դեպքեր գիտեմ, երբ նա, իմանալով, որ այսինչ ընկերը հիվանդացել է, երբեմն առանց որևէ նախազգուշացման դուրս էր գալիս կրեմլից, ուզերվում դեպի հիվանդ ընկերը, անսպասելի կերպով ներս է մտնում, հարցնում՝ ստանում է արդյոք նա բժշկական օգնություն, միջոցներ ունի՞ արդյոք դեղորայք զնելու, ինչպես է նրա սնունդը և հետո, վերադառնալով տուն, անում համապատասխան կարգադրություններ: Հաճախ էին պատահում դեպքեր, երբ Մոսկվայի Սովետը ընկեր լենինից ստանում էր տոմսակներ կամ պար-

5 Ա. Ֆ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 466:

զապես մակագրություններ այն դիմումների վրա, որոնցով օգնություն էին խնդրում բանվորները, դերասանները, գրողները, մինչև իսկ կարգադրություն անում սրան կամ նրան կոշիկներ, սպիտակեղեն և այլն տալու մասին»⁶:

1919 թ. սեպտեմբերի 25-ին էսէռները տեսար են կազմակերպում Մոսկվայի կոմիտեի անդամների դեմ: Ռումբի պայմանից զոհվում են Զագորսկին, Սաֆոնովը և ուրիշներ, բայց Մյասնիկյանը, որը նույնպես նրանց հետ էր, կենդանի է մնում: Իր ընկերների թաղման սղո միտինգում արտասանած ճառում նա էրդվում է անողոք լինել թշնամիների նկատմամբ և հաստատակամորեն գնալ դեպի Հաղթանակ: «Մոսկվայի պրոլետարիատը,—ասում է Մյասնիկյանը,—ուստական ամբողջ պրոլետարիատի հետ միասին, զոհված մարտիկների թարմ շիրմների առջե կարող է համարձակ երդվել, որ ինքը վերջնականապես կճզմի թշնամուն և հաղթող կհանգիսանա ու երկիրը կտանի դեպի լուսաճանշանց ապագան»:

Անվանի բոլշևիկ Զագորսկու հիշատակը հավերժացնելու համար Մոսկվայի պալատներից մեկը կոչվում է նրա անվամբ: Մյասնիկյանը վ. ի. Լենինի հետ միասին գնում է Զագորսկու անվան պալատի բացմանը: Տեղի է ունենում բանվորական միտինգ, որտեղ Լենինը ճառ է արտասանում, կոչ անելով բարձրացնել զգաստությունը, անողոք

⁶ Նույն տեղում, էջ 469:

կերպով կովել արտաքին ու ներքին թշնամիների դեմ:

1920 թ. (մարտի 29-ից մինչև ապրիլի 5-ը) Մյասնիկյանը, որպես Մոսկվայի կուսակցական կազմակերպության պատգամավոր, մասնակցում է կուսակցության IX համագումարի աշխատանքներին: Համագումարից հետո նա եռանդուն աշխատանք է կատարում կուսակցության որոշումների մասսայականացման ու կենսագործման համար: Մյասնիկյանը հետեւղականորեն պաշտպանում է լինինյան դրույթները, միշտ զեկավարվում կենինի ցուցումներով: Տրոցկիստների, «բանվորական օպոզիցիայի», «ձախ կոմունիստների», «զեմոկրատական ցենտրալիստների» և մյուս հակակուսակցական խմբերի դեմ մղված սուր պայքարի ժամանակ Մյասնիկյանը միշտ կանգնած էր կենինի կողմը, հանդես էր գալիս որպես նրա հավատարիմ հետեւրդը:

1920 թ. ապրիլին կուսակցության Մոսկվայի կոմիտեն նշում է Վ. Ի. Լինինի ծննդյան 50-ամյակը: Այդ կապակցությամբ ապրիլի 23-ին կազմակերպվում է երեկոյցի: Երեկույթում նախագահում էր Մոսկվայի կոմիտեի քարտուղար Մյասնիկյանը: Նա բացման խոսք է ասում, Յրապարակում ստացված հեռագրերը: Լինինի ծննդյան 50-ամյակի կապակցությամբ Մյասնիկյանը «Կոմունիստիչների արուղ» թերթում Յրապարակում է «Լինինը որպես տեսաբան» հոդվածը, որի մեջ նշում է Վ. Ի. Լինինի աշխատությունների վիթխարի նշա-

նակությունը մարքսիզմի դարձացման գործում։ «Համարձակ կարելի է ասել, — զրում է Մյասնիկյանը, — որ կոմունիստների կուսակցությունն ու Լենինը անբաժանելի են միմյանցից»։ «Լենինը, — շարունակում է նա, — մեր առջև կանգնեց որպես պետական կազմակերպիչ, որպես սովետական իշխանության կազմակերպման տեսաբան։ Ավելորդ է խոսել նրա զործունեության այդ կողմի մասին, դա տեղի է ունենում մեր աշբերի առջև, ամբողջ աշխարհի առջև։ Սովետական Ռուսաստանի հաղթանակները ամենից ավելի պարզ կերպով են ցուց տալիս մեր պրոլետարիատի կազմակերպական հզորությունը, պրոլետարիատ, որին ուղղություն է տալիս մեծ կազմակերպչի, հանճարեղ առկտիկի հմուտ ձեռքը»⁷։

1920 թ. կիսերին, սովետական երկրի գեմ Անտանտի կազմակերպած երրորդ արշավանքի ժամանակ, Մյասնիկյանը կուսակցության Կենտկոմի որոշմամբ նշանակվում է Արևմտյան ռազմաճակատի քաղաքական վարչության պետ, միաժամանակ մնալով Մոսկվայի կոմիտեի քարտուղարի պոստում։ Նա հաստատվում է նաև Մոսկվայի Սովետի և ՌԿ(Բ)Կ Մոսկվայի կոմիտեի հատուկ լիազոր՝ ռազմաճակատին օդնություն ցուց տալու գործը կազմակերպելու համար։ Այս պաշտոններում Մյասնիկյանը կարևոր դեր է խաղում Անտանտի նոր

7 Նույն տեղում, էջ 268, 269։

արշավանքը ջախջախելու և թշնամու դեմ սովհատական երկրի հաղթանակն ապահովելու զործում:

1920 թ. Հուլիս-օգոստոսին Ա. Մյասնիկյանը մասնակցում է Կոմունիստական ինտերնացիոնալի Ռ կոնգրեսի, իսկ 1921 թ. մարտին ՌԿ(բ)Կ Խ համագումարի աշխատանքներին, լսում է Վ. Ի. Լինինի դեկուցումներն ու ելույթները միջադպային զրության, Կոմունիստական ինտերնացիոնալի և կոմունիստական կուսակցությունների ու սովհատական երկրի առջև կանգնած հրատապ խնդիրների մասին:

1921 թ. ապրիլին Լենինն ընդունում է Ալեքսանդր Մյասնիկյանին, երկար զրույց ունենում նրա հետ և առաջարկում աշխատանքի մեկնել Կովկասում Մենք մանրամասն զրուցեցինք այն մասին, թե ինչպես պիտի աշխատել Կովկասում,—զրել է Մյասնիկյանը,—ինչ ձևով պետք է հաջվի առնել սուսական հեղափոխության փորձը, ինչ քաղաքականություն վարել Թուրքիայի նկատմամբ: Լինինը խորհուրդ էր տալիս, զգույշ և նրբանկատ լինել Արեելքի ժողովուրդների նկատմամբ, որոնք արդեն արթնունում են, որոնք լուսավորության կարիք ունեն, և որոնք լուսավորվելով, իրենց մոտ կկտարեն ավելի վիթխարի հեղաշրջում...»:

Հաջորդ օրը Մյասնիկյանը ստանում է Վ. Ի. Լենինի նամակը՝ «Աղբբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» խորագրով: Այս նամակը ծրագրային նշանակություն ունեցավ Կով-

կասի բոլշևիկների համար: Նամակում չերժագին ողջունելով Կովկասի հանրապետություններին, Լենինը խնդիր էր զնում ամրապնդել սովետական իշխանությունը, երկրամասի բազմազգ ժողովուրդների միջև կոփել ինտերնացիոնալ եղբայրությունն ու զաշինքը, ստեղծել տնտեսական, կուլտուրական ու քաղաքական համագործակցություն: Վերջում վ. ի. Լենինը նշում էր. «Պետք է գրեի շտապ կերպով, որպեսզի ուղարկեի ընկ. Մյասնիկովի հետ»⁸, Մյասնիկյանին տրվում է Լենինի ստորագրությամբ՝ մանդատ, որի մեջ տեղական կուսակցական ու սովետական օրգաններին առաջարկվում է ամեն տեսակի աջակցություն ցույց տալ նրան: Մյասնիկյանի հետ Հայաստան են ուղարկվում 20 վագոն հացատիկ և այլ կենսամթերքներ:

1921 թ. Մյասնիկյանը նշանակվում է ՀՍՍՀ ժողկոմսովետի նախագահ, 1922—1925 թթ. նա աշխատել է՝ որպես Անդրկովկասյան Ֆեդերացիայի միութենական խորհրդի նախագահ, Անդրերկորկոմի քարտուղար և այլ պատասխանատու պաշտոններում:

Մյասնիկյանը Լենինի հավատարիմ աշակերտն ու զինակիցն էր: Նա միշտ մեծագույն զոհունակությամբ է նշել, որ ինքը եղել է հանձարեղ Լենինի ժամանակակիցը և բախտ է ունեցել աշխատելու նրա հետ, նրա ղեկավարությամբ: «Ես անշափ երշանիկ եմ և մինչև կյանքիս վերջը կհպարտա-

8 Վ. ի. Լենին, Երկեր, Հատ. 32, էջ 405:

նամ,— զրել է Մյասնիկյանը,— որ եղել եմ
վ., ի. Լենինի ժամանակակիցը, անձամբ ժանոթ եմ
եղել, խոսել եմ հետք, սեղմել եմ նրա ձեռքը, ման
եմ եկել, շրջապայման նրա հետ, եղել եմ այդ հոկտե-
մբ, մեր ժամանակի հանճարի հետևողն ու փոքր
աշակերտը»⁹:

Մյասնիկյանի գլխավորած Հայաստանի սովե-
տական կառավարության կազմում մտնում էին
Լենինի հետ անձամբ ժանոթ կամ նրան տեսած
ու լսած այնպիսի ականավոր հայ գործիչներ, ինչ-
պիսիք էին Ալեքսանդր Բեկպաղյանը, Սարգիս Սրա-
պիսնյանը (Ղուկաչին), Ասրանազ Մուավյանը,
Սարգիս Բաղդատյանը, Արամայիս Երզնկյանը,
Արտաշեր Կարինյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Պո-
ղոս Մակինցյանը և ուրիշներ։ Ունենալով տեսա-
կան խոր գիտելիքներ և պրակտիկ աշխատանքի
մեծ փորձ, նրանք հաջողությամբ իրականացնում
էին Լենինի ցուցումները Հայաստանում։

⁹ Ա. Յ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 471։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՐԲՈՒԹՅԱՄԲ Է ՊԱՀՈՒՄ
Վ. Ե. ԼԵՆԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ

1924 թ. Հունվարի 21-ին վախճանվեց Վ. Ե.
Լենինը: Այդ բոլոր ցնցեց աշխարհը: Լենինի մահը
շատ ծանր վիշտ պատճառեց պատմական հան-
դամանքների բերումով աշխարհով մեկ ցրված հայ
աշխառավորությանը:

Հայ ժողովրդի հանճորել բանաստեղծ Ավետիք
Իսահակյանը գրել է, որ այդ մեծ գույժի լուրը նրան
է հասել 1924 թ. Հունվարի 23-ին, Վենետիկի «Ֆե-
նիչե» թատրոնում, չեխ աշխարհահռչակ ջութա-
կահար Յան Կուրելիիկի համերդի ժամանակ: «Մի
շշուկ, մի սարսաւ անցավ բոլոր ներկաների մեջ,—
չիշում է Ա. Խաչակյանը,— ապա իջավ մի ծանր,
հանդիսավոր լոռություն...

Գլուխները հակվեցին կրծքների վրա—ամեն ոք
խորհում էր, ամեն ոք խոսում էր իր արտի հետ:

Այսքան ներշնչող է, խորազգու մեծագույն մար-
դու մահը...

Տաղավորությունն աննկարագրելի էր. ամբողջ

թատրոնը քարացել էր... Քիչ անց, զաւերելից եղանական կետերից լսվեցին հառաջանքներ, արտասվախառն ձայներ...

Երբ ես դուրս եկա փողոց և անցնում էի Հոծ բաղմությամբ լցված փողոցների միջով, այնպես ոգացի, թե աշխարհը դատարկված է, այլևս մարդ չկա երկրիս վրա...»¹:

Յնցված Լենինի մահվամբ, շատ ականավոր հայ գրողներ, նկարիչներ, բանդակագործներ, երաժիշտներ հիանալի դործեր են ստեղծում մեծ ուսուցչի մասին:

Հայ մեծ գրող և բաղարացի Եղիշե Զարեհնցը, որը դեռևս 1921 թ. տեսել և լսել էր Լենինին, դրում է նրան նվիրված պոհմների մի ամբողջ շաբր:

Դեռևս 1921 թ. սկզբին Ալեքսանդրապոլում (Լենինական) թուրքական օկուպացիայի ժանր ժամանակաշրջանում «Ն. Լենին» վերնագրով պոեմ է հրատարակում հին բոլղիիկ Արշալույս Արշարունին: Պոեմը թարգմանվում է ուսուերեն և տարածվում Կովկասում: Կովկասում: Կովկասում ականավոր դործի: Ա. Արշարունին հետագայում բագմիցս տեսնում և լսում է Լենինին, սիրով դրում և դասախոսություններ կարդում Վ. Ի. Լենինի մասին: Ինձ համար բացառիկ երջանկություն է, զրել է Ա. Արշարունին, որ Լենինի դործունեության «վերջին երեր

1 Ավ. Խանակյան, Երկեր, հատ, 4, Երևան, 1959, էջ 398—399:

տարիներին առիթ ևմ ունեցել մեծ առաջնորդին տեսնելու, լսելու, հետեւելու և զգալու նրա պետական արտակարգ կարողությունը, մտածողությունը, բազմակողմանի բնողորդումը»:

20-ական թվականներից Ուլյանովների ընտանիքի և Վ. Ի. Լենինի մասին մի շարք փայլուն գործերով հանդես եկավ սովետական ականավոր գրող Մարիետա Շահինյանը: «Իմ սերնդին մեծ բախտ է վիճակվել, — գրել է Մարիետա Շահինյանը, — դիտել Լենինի խոսքի անմիջապես գործ դառնալու ակրն-թարթային կենսագործումը: Ես նկատի ունեմ նրա առաջին գեկրեաները հեղափոխության առաջին օրերին և ամիսներին... ինձ համար այդ գեկրեաները գարձան կենինին ճանաշելու առաջին աստիւանը, առաջին սերը Լենինի նկատմամբ: Ես կարդացի դրանք, ինչպես կարդում են բանաստեղծությունը: Եվ Հինգ նբանք ինձ բերեցին լենինյան թեմատիկային»²: Հինգ այդ թեմատիկայով լավագույն գործեր ստեղծելու համար Մ. Շահինյանն արժանացավ Լենինյան մրցանակի դափնեկրի բարձր կոչմանը:

Լենինը գիտեր Մ. Շահինյանին, կարդացել էր նրա գործերը և նշել, որ դրանք իրեն շատ են դուր դալիս:

Անհուն հավատով լցված դեպի կոմունիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում, Զարենցը գրում էր.

² Мариятта Шагинян, Четыре урока у Ленина, М., 1970, стр. 5.

Դեռ կզա իլյիչը,
Որ մտնի համաշխարհային Սովետարկում:

Եթ արժեքավոր լենինապատումն է ստեղծել
ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Դմիտրի Նալբանդյա-
նը, որի «Լենինը Գորկու մոտ, 1920 թ.», «Լենինի
ելույթը Մոսովվետի պատշգամբից, 1919 թ.»,
«Լենինն ու ժողովուրդը» և այլ նկարներ լայն
ճանաչում են դաել:

Հայ բեմում Լենինի կերպարը Հիտնալի կերտեց
ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշ-
յանը: Դեռևս Լենինի կննդանության ժամանակ,
լենինյան մոնումենտալ պրոդագանդայի ականա-
փոր մասնակից Հակոբ Գյուրջյանը լենինյան թե-
մատիկայի մարմնացման մեջ մտահղացումներ
ուներ:

Դարի սկզբից Հայ ընթերցողներն իրենց մայ-
րենի լիդվով ուսումնասիրում են վ. ի. Լենինի եր-
կերը, որոնց տուածին թարգմանիչները, Հայերեն
թարգմանության խմբագիրներն ու Հրատարակիչ-
ներն են եղել Ստեփան Շահումյանը, Բողոքան
Կնունյանցր, Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս
Կասյանը, Վառլամ Ավանեսովը, Վահան Տերյանը,
Աշոտ Հովհաննիսյանը, Պողոս Մակինցյանը, Հայկ
Գյուլիքիսվյանը, Աղասի Խանջյանը և այլ հավա-
տարիմ լենինյաններ:

Հայ ժողովրդի ցանկությամբ Լենինի անունով
Էն կոչվել մեր Հանրապետության երկրորդ քաղաք
Լենինականը և բաղմաթիվ այլ օբյեկտներ, քաղա-

բամայր Երեանի կհնտրոնական՝ վ. ի. Անդրեաս Անդրապարակում վեր է խոյանում մեծ առաջնորդի հոյակապ հուշարձանը:

Վ. ի. Անդրեասի ամենամեծ հուշարձանը մեր ժողովրդի աննախրնթաց նվաճումներն են, համայն հայոթյան հայրենիք, փյունիկ թոշունի պես մոխիքներից վերածնված Սովետական Հայաստանը, ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամությունը, լենինյան կուսակցության զեկավարությամբ կոմունիզմի կառուցման և ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման գործում ձեռք բերված համաշխարհային-սրատմական հաղթանակները:

ՀԱՎԵԼՎԱԾ

Վ. Ի. ԼԵՅԻՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՅՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՆՄԻԶԱԿԱՆ
ԱՌԽՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԵՏ*

1893

Մարտի սկիզբը: Լենինը Սամարյում նարողնիկ Ն. Ս. Դոլցի բնակարանում հանդիպում է ի. թ. Ք. Լալայանցի հետ:

Դարձն: Վ. Ի. Լենինը Ա. Պ. Սկլյարենկոյի և ի. թ. Ք. Լալայանցի հետ միասին կազմակերպում է Սամարյի մարտիստաների առաջին խմբակը: Կովկասյան և անգրքիովկասյան իրականությանը հիանալի ծանոթ ի. թ. Ք. Լալայանը օգնում է Վ. Ի. Լենինին Ռուսաստանում կազմակերպմի զարգացման պրոբլեմների մասին կովկասի վերաբերյալ նյութեր հավաքելու գործում:

* Կազմված է Վ. Ի. Լենինի երկերի լիակատար ժողովածուի, լենինյան ժողովածուների, «Վլադիմիր Իլյիչ Լենին. Биографическая хроника» գրքի 1—10 հատորների, ինչպես նաև Վ. Ի. Լենինի հայ զինակիցների ու աշակերտների երկերի, հիշողությունների, ՍՄԿԿ կենտրոնին կից ՄՀԻ Վ. Ի. Լենինի երկերի սեկտորի գիտատեղեկատու կարինետի և զրական ու արխիվային այլ նյութերի հիման վրա:

Թվականները մինչեւ նոր տոմարին անցնելը՝ 1918 թ. փետրվարի 14-ը, արվում են հին տոմարով, հետո՝ նորով:

Հոնիսի վերը: Լալայանցը բազմիցս այցելում է Ենինին,
Ալականեկա գյուղի մոտ գտնվող խուտորում:

Օգոստոս: Լալայանցը Մամարայից Հոսպրում է Պետերբուրգ
Ենինին իր մի վեճի մասին Ա. Պ. Մկյարենեոյի հետ:

Օգոստոսի 31-ից ուշ: Ենինին Պետերբուրգից Մամարա՝ Շե-
սագրով պատասխանում է Լալայանցին՝ «Ես Զեր
կողմն եմ»:

1895

Ապրիլի 24: Ենինին Պետերբուրգում հանդիպում է Լալայան-
ցին և երեկոյան նրա հետ մեկնում Մոսկվա:

Սեպտեմբերի 7-ից ուշ: Ենինին Մոսկվայից նամակ է գրում
Պետական Լալայանցին և նրա կնոջը՝ Պ. Ի. Կուլյարկո-
յին, հայտնում արտասահմանից իր վերապարձի մասին:

1897

Մայիսի 18: Ենինին մորք՝ Մ. Ա. Ռուբանովային զրած նամա-
կում հետարրբում է նաև Լալայանցի մասին:

Հոկտեմբերի 12: Վ. Ի. Ենինին նամակ է գրում մորք՝ Մ. Ա.
Ռուբանովային, սրում հայտնում է նաև Ի. Ք. Լալա-
յանցի հետ իր կանոնավոր նամակագրության մասին:

1898

Հունվարի 24: Ենինին նամակ է գրում Լալայանցին:

Նոյեմբերի 15: Ենինին Պողոլսկ՝ Ա. Ի. Ռուբանովա-Ելիզարո-
վային զրած նամակում խնդրում է իր «Տնտեսագի-
տական էտյուդներ և հողվածներ» ժողովածուից ու-
ղարկել նաև վորոնեժ՝ Լալայանցին:

Տարվա ընթացքում: Ենինին շարունակում է նամակագրությունը
Վորոնեժում ապրող Լալայանցի հետ, նրանից ստանում
է վիճակագրական նյութեր «Կապիտալիզմի զարգացու-
մը Ռուսաստանում» գրքի համար:

1900

Փետրվար: Արսորից վերապանակիս Վ. Ի. Լենինն անդեգալ կերպով զալիս է Մոսկվա, որտեղ հանդիպում է ի. թ. Ք. Լալայանցին, զրուցում նրա հետ ՌՍԴԲԿ և Համագումարի նախապատրաստման, «Խոկրայի» հրատարակության պլանի և այլ հարցերի մասին, Լալայանցի հետ միասին զեղարքեսաւական թատրոնում դիմում է Գ. Հառովտամանի «Կառապան Հենշելը» պիեսը:

1901

Փետրվարի 7: Լենինը Մյունիստնից Մոսկվա՝ Մ. Ա. Ռուզանովային գրած նամակում կամաց համակում հետարրբում է Լալայանցով:

1902

Օգոստոսի 6: Լոնդոնից Ֆյուրիս Պ. Բ. Արսելրոդին գրած նամակում վ. ի. Լենինը ողջույններ է հաղորդում ի. թ. Ք. Լալայանցին և հրաժիրում իր մոտ: Կցում է նամակ ի. թ. Ք. Լալայանցի համար:

Աւգոստի 10: Լենինը ն. Կ. Կրտսելկայայի Սամարա՝ Գ. Մ. և Զ. Պ. Կրտմանովսկիներին գրած նամակին ավելացնում է, հարցնելով, թե Մ. Ի. Ռուզանովան ստացե՞լ է արդյոք Լալայանցի նամակը, հազորդում է, որ Լալայանցը զնացել է Ժնև:

1903

Հունվարի 15: Վ. Ի. Լենինը նամակ է գրում Լոնդոնից Ժնև Պ. Լիխանովին և խնդրում, որ ի. թ. Ք. Լալայանցի կամ այնտեղ դանուզ ուրիշ ընկերների միջոցով կազմակերպի «Պրոլետարիատ»-ի թարգմանությունը և ուղարկի իրեն նյութեր նացիստակազմի և ֆեդերալիզմի մասին «Խոկրայի» №№ 22 և 33-ի համար:

Հունիս—նոյնիս: Վ. Ի. Լենինը Ժնևում հանդիպում է ունենում ՌՍԴԲԿ և Համագումարի կովկասյան պատգամավորներ Բ. Կունյանցի և Ա. Զուրաբովի հետ:

Օգոստոսի 1: ՌՍԴԲԿ և Համագումարի նիստերի օրակարգում

Լենինը Հիշատակում է նաև Բաթումի պատգամավոր ժաշիդ-Բեկին (Ա. Զուրաբով):

Օգոստոս: Նիստերի օրագրում Լենինը Հիշատակում է Բարձեցու (Բ. Կնոնյանցի) զեկուցումը:

Օգոստոսի 7: Լենինը համագումարի 31-րդ նիստում ելույթ է ունենում կուսակցության Կենտկոմի քնարությունների առթիվ: Պաշտպանում է Կնոնյանցի ելույթը:

Լենինը գրանցում է ՌՍԴԲԿ Ա համագումարում Կենտրոնական օրգանում երեր անձ քնարելու մասին Բ. Մ. Կնոնյանցի առաջարկած բանաձեկի քվեարկության արդյունքները: Պաշտպանում է Կնոնյանցի առաջարկությունը այն մասին, որ Կենտկոմի քնարության քվեարկության արդյունքները որոշում է նախագահը և գաղտնապահության նպատակներով համագումարում հայտնում է Կենտկոմի միայն մեկ անդամի անունը:

Լենինը ՌՍԴԲԿ Ա համագումարի ծախսերի գրանցումներում նշում է նաև Ա համագումարի պատգամավոր Ա. Գ. Զուրաբովի մասին:

Օգոստոսի 11-ից ուշ: Լենինը գրություն է ուղարկում Լալայանցին՝ Հաղորդելով, որ կայցելի նրան հաշորդ օրն առավոտայան, զործերի մասին մանրամասն խոսելու համար:

Օգոստոս: Լենինը ժնեում հանդիսում և հանձնարարականներ է տալիս Լալայանցին:

ՌՍԴԲԿ Ա համագումարի նիստերի իր օրագրում Լենինը Հիշատակում է Խորենին (Բ. Կնոնյանց):

Լենինը համագումարի մյուս պատգամավորների՝ բոլշևիկների հետ այցելում է Կարլ Մարքսի գերեզմանը Լոնդոնի Հայդեր գերեզմանոցում: Այցելուների թվում էին նաև Բ. Կնոնյանցն ու Ա. Զուրաբովը:

Աշուն: Շահումյանը ժնեում անձամբ ծանոթանում է Վ. Ի. Լենինի հետ:

Սեպտեմբերի 22: Վ. Ի. Լենինը ժնեից Կիև նամակ է գրում

Դ. Մ. Կրժիմանովսկուն և Վ. Ա. Նոսկովին՝ Հաղորդելով Բ. Կնունյանցի ժննում գտնվելու մասին:

Հոկտեմբերի 7-ից շուտ: Լենինը նամակ է ստանում Ա. Գ.

Զորարովից (Ռաշիդ-Բեկ)՝ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի գործերի մասին:

Հոկտեմբերի 21: Լենինը ծանոթանում է Հայկական եկեղեցական զույրի բռնագրավման կապակցությամբ Անդրբակովիառում հուզումների մասին նամակին, նրա վրա մակագրում է. «Յ. XI. 03 Ռուբենից ժննում»:

Հոկտեմբերի 22: Լենինը լայացանցին ուղարկում է Ռուսաստան՝ կուսակցության պատասխանատու Հանձնարարականներով:

Հոկտեմբերի 24: Գ. Վ. Պլեխանովին գրած նամակում Վ. Ի. Լենինը Հայտնում է «Խսկրայի» խմբագրության որոշ նյութեր Բ. Մ. Կնունյանցին (Ռուբեն) և ուրիշներին Հանձնելու մասին: Վ. Ի. Լենինի «Խսկրայի» խմբագրությունից զուրս զայռու կապակցությամբ այդ նյութերը նրանք պետք է Հանձնեին Գ. Վ. Պլեխանովին:

1904

Փետրվար-պետեմբեր: Վ. Ի. Լենինի Հանձնարարությամբ Ա. Շահումյանը ժննում մասնակցում է ՌՍԴԲԿ Կհնտեկոմի վրացերեն և Հայերեն լեզուներով մարքսիստական պրականություն Հրատարակող Հանձնաժողովի աշխատանքներին: Հայերեն թարգմանում և ժննեի կուսակցական տպարանում Հրատարակում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ», Վ. Ի. Լենինի աշխատությունները, Ա Համագումարում բնդունված ՌՍԴԲԿ ծրագիրը և այլ գործեր:

Մայիս: Լույս է տեսնում Վ. Ի. Լենինի «Մի քայլ տուած, երկու քայլ ետ» աշխատությունը, որտեղ վերլուծվում են նաև ՌՍԴԲԿ Ա Համագումարի կովկասյան պատգամավորների ելույթներն ու քվեարկության արդյունք-

ները: Անինք բարձր դնահատական է, տալիս Բ. Կունյանցի ելույթներին:

Հոկտեմբեր: Վ. Ի. Ա. Անինք ստանում է կուսակցության Մոսկվայի կոմիտեի ՌՍԴԲԿ 19 անդամների կոչք, որտեղ նրանք պաշտպանում էին Վ. Ի. Անինքի առաջարկությունը Համագումար Հրավիրելու մասին: Կոչի հեղինակներից մեկը Կունյանցն էր:

Նոյեմբերի 28: Վ. Ի. Անինք Շվեյցարիայում ստանում է Ա. Շահումյանի՝ Բեռլինից իրեն ուղարկած նամակը, որում Շահումյանը խնդրում էր Անինին՝ աշխատակցել Հայերեն լեզվով ստեղծվելիք մարքսիստական ժողովածուին:

1905

Հունվարի 6: Անինք Ի. Դ. Մատասվային և Մոսկվայի բանառում գտնվող բնկերներին ուղղած նամակում ցուցում է տալիս զատարանում սոցիալ-գեմոկրատների մարքարձի մասին: Նամակում Անինքը ողջուն է Հունվարի Ա. Ա. Կունյանցին (Ռուբենին) և բոլոր բարեկառներին:

Հունվարի վերջ, փետրվարի 8-ից շուտ: Անինք ստանում է Ա. Դ. Շահումյանի նամակը և անհրաժեշտ նյութեր Հայկական մանրբուժության, նացիոնալիստական հնչակյան կուսակցության բուլղարական սեկցիայի նոր օրգան «Ապագայի» մասին: Նյութերը Հրապարակվում են «Վայերյոդ» թերթի № 7-ում, 1905 թ. փետրվարի 8-ին:

Ապրիլի 27: Անինք ՌՍԴԲԿ Համագումարում կազմում է ազիտառորների, պրոպագանդիստների կազմակերպիչների ցուցակը, ազիտառորների թվումն է Ռուբենը (Բ. Կունյանց):

Հունիսի 29: Անինք ՌՍԴԲԿ Կենտրոնին դրում է նամակ, որով բողոքում է Պ. Դ. Մմիդովիչին Կենտրոնի գոր-

ծակալ նշանակելու դեմ, երաշխավորում է նրա փոխառն ի. Ք. Լալայանցին:

Հովիսի 23: Լենինի հանձնարարությամբ Ն. Ա. Կրուպսկայան ՌՍԴԲԿ Կենտրոնին առնելեր պատասխանատու պրոպագանդիստ Ինսարովին (ի. Ք. Լալայանց) զրած նամակում խնդրում է նրան իր աշխատանքի մասին զրել «Պրոլետարիա Մերթում և նույն այդ խնդիրը հաղորդել կուսակցության ծայրագալաների կազմակերպություններին:

Մեզանքեմբերի 1: Լենինը Պետերբուրգ՝ Պ. Ա. Կրասիկովին զրած նամակում խնդրում է կապ հաստատել իր, Կնույանցի և ի. Ք. Լալայանցի միջև:

Մեզանքեմբերի 17: Լենինը նամակ է գրում ՌՍԴԲԿ Կենտրոնին: Նամակին ն. Ա. Կրուպսկայան ավելացնում է Հետքրություն, որով հազորգում է, թե Լենինը համաձայն է ՌՍԴԲԿ Կենտրոնի կազմում ի. Ք. Լալայանցին կռոպտացիայի հնիքարկել:

Նոյեմբեր-դեկտեմբերի 3-ից շուա: Լենինը զեկավարում է մի խումբ բոլշևիկների, այդ թվում նաև Բ. Մ. Կնույանցի աշխատանքը բանվորների գհուտատաների Պետերբուրգի սովետում:

1906

Մարտի Երեսուդ կիս: Կուռկալայում (այժմ՝ Ռեսպինո) տեղի է ունենում Լենինի առաջին հանդիպումը Ս. Ա. Տեր-Պետրոսյանի (Կամոյի) հետ:

Մարտի 10—25: Լենինը ՌՍԴԲԿ IV (Միավորիչ) համագումարի աշխատանքի ժամանակ հանդիպում և զրոյցում է Կովկասի բոլշևիկ-պատգամավորներ Ս. Գ. Շահումյանի և որիշների հետ, որոնք պաշտպանում են Լենինյան դիրքորոշումները:

Օգոստոսի 27: Լենինը նախագահում և ելույթ է ունենում Տերիոկի ամառային թատրոնի շենքում կազմակերպ-

ված կուսակցական ժողովում, որին մասնակցում էր նաև Ալեքսանդր Վերմիշևը, զրուցում է նրա հետ:

Նոյեմբերի 16-ից շուտ: Լենինը զրուցում է իր մոտ Կուտկալա և կած ի. թ. Հալայանցի հետ, որը մասնակցել էր ՌՍԴԲԿ ռազմական և մարտական կազմակերպությունների Ի բոլշևիկյան կոնֆերանսի նախապատրաստմանը:

1907

Հունվարի 20-ի և փետրվարի 15-ի միջև: Լենինը Կուտկալայի «Վազա» ամառանոցում հանդիպում է ունինում Կովկասից ճամանած Ս. Ա. Տեր-Գևարոսյանի (Կամոյի) հետ:

Սպրիիի երկրորդ կես: Լենինը Կովկասինում, որտեղ հնրագրվում էր ՌՍԴԲԿ Վ համագումարի բացումը, հանդիպում է Կովկասից համագումարի բոլշևիկ պատգամավորների, որոնց թվում Մ. Գ. Շահումյանի և Ա. Ռ Կախովյանի հետ:

Օգոստոսի 7: Լենինը Ա. Վ. Լունաչարսկու հետ ունեցած զրուցում հաջորդում է, որ արտասահմանում Կենտկոմի պաշտոնական ներկայացուցիչը է նշանակվում Բ. Մ. Կոնոնյանը (Ռուբենը):

Օգոստոսի 5—11: Լենինը մասնակցում է Շտուտգարդի միջազգային սոցիալիստական կոնգրեսին: Հանդիպումներ է ունինում Բ. Կոնոնյանցի հետ, որը մտնում էր կոնգրեսի բոլշևիկյան պատվիրակության կազմում:

Հոկտեմբերի 31: Փարիզի արտասահմանյան դործակալության վարիչը զեկուցում է ոստիկանության զեսպարտամենտին, որ Ֆինլանդիայում՝ «Վազա» ամառանոցում հունիսին և օգոստոսին Լենինի մոտ ապրել է Կամոն:

Աշուն: Տերիոկիում կովկասցի բոլշևիկ ուսանողների (Ա. Քավիարաձե, Ա. Լուկաշին, Շ. Էլիավա, Դ. Շահվերդյան, Տ. Տեր-Գևոնյան, Գ. Մելիք-Բաղդասարյան, Ա. Կա-

րինյան և ուրիշներ) առցե Լենինը հանդես է գալիս զեկուցումով՝ բնթացիկ մոմենտի մասին:

1908

Մայիսի առաջին ինս: Լենինը զրում է գերմանական սոցիալիստ փաստաբան Բերնհեմին, հաստատելով, որ Մյունխենում՝ 1907 թ. Հունիսի 13-ին Բիֆլիսում Կամոյի զեկավարությամբ էրապրոպրիացիայի հնաբարկած զրամք մանրելու կազակցությամբ ձերբակալված Ա. Ն. Ռավիչը, Մ. Խ. Խոչամիրյանը և Տ. Բաղդասարյանը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության անդամներ են: Մայիսի 16-ից շուտ: Լենինը կոնգոնից Բրյուսել՝ Միջազգային սոցիալիստական բյուրոյի բարտուղար Կ. Հյուիսմանսին զրած նամակում (Փրանսերեն) հաղորդում է Մյունխենում ՌԱԴԲԿ անդամներ Ռավիչի, Խոչամիրյանի և Բաղդասարյանի ձերբակալման մասին և խնդրում ՄՍԲ-ի անունից հաստատել նրանց պատկանելիությունը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությանը:

Դոյնեմբերի սկիզբը: Ա. Գ. Շահումյանը հայտնում է Մ. Գ. Ցիակայային, «Մենք ամբողջապես Լենինի կողմն էինք», «բոլշևիկյան կոնֆերանսում մենք որոշել ենք (ոչ պաշտոնապես) մանդատը հանձնել Խլիչին»:

1909

Հուլիսի 17: Լենինը Բրյուսել Կ. Հյուիսմանսին ուղղած նամակում երաշխավորում է բանտից ազատված բոլշևիկ Տ. Բաղդասարյանին և խնդրում նրա համար աշխատանք որոնել:

1911

Պետքեմբերի 13—15: Լենինը Գ. Լ. Շկովսկուն զրած նամակում խնդրում է զրականություն ընտրել «Ստոլի-

պինը և Հեղափոխությունը» թեմայով սեֆերատի համար, այդ թվում՝ Ա. Տ. Արկումեղի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գիրը ըստ, մ. 1, Դ. Վ. Պլիստանովի առաջարանով, Ժնե, 1910։ Անպահեմքերի 15-ից ոչ շատ: Լենինը աշխատում է Ա. Տ. Արկումեղի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» (մ. 1, 1910) գրքի վրա՝ Գ. Վ. Պլիստանովի առաջարանով, նշումներ, բնդդումներ է անում գրքի XI—XIII և XV էջերի վրա։

Գեկտեմբերի 16: *Փարիզում տեղի ունեցած արտասահմանյան բոլշևիկան խմբերի խորհրդակցությունում Լենինը զիտողություն է անում Ա. Ա. Բեկդաղյանի (Յուրիի) ելույթների վերաբերյալ։*

1912

Մարտի 15: Լենինը նամակ է գրում Թիֆլիս՝ ՌՍԴԲԿ Կենտկոմի սուսական բյուրոյի անդամներ Գ. Կ. Օրջոնիկիձեին, Ս. Ա. Սպանդարյանին և ե. Գ. Ստասովային նամակում մատնանշում է, որ անհրաժեշտ է ուժեղացնել տեղական կուսակցական կազմակերպությունների կազմը արտասահմանյան կենտրոնի հետ, պընդում է, թե պեսար է ամենաարագ կերպով շրջադաշտ կազմակերպությունները, զեկուցել կոնֆերանսի մասին, հարցում է անում կոնֆերանսի մասին «Մանուցումը» և Ռուսաստանում «ՌՍԴԲԿ ընտրական պրաֆորմը» հրատարակելու վերաբերյալ, հաղորդում է զրամական գործերի, արտասահմանում կոնֆերանսի առիթի պայքարի մասին և այլն։

Ապրիլի սկիզբ: Լենինը Թիֆլիս՝ Կենտկոմի սուսական բյուրոյի անդամներ Գ. Կ. Օրջոնիկիձեին, Ս. Ա. Սպանդարյանին, ե. Գ. Ստասովային զրած նամակում մատնանշում է, որ անհրաժեշտ է համառ և սիստեմատիկ պայքար մղել արտասահմանյան լիկվիդատորների դեմ, խորհուրդ է տալիս շրջադաշտ տեղական կազմակեր-

սուբյեկտները և մերկացնել լիկվիդատորներին, հանձնաբարում է թերթիկներով վերահատարակել ՌՍԴԲԿ Պրազմայի գոնֆերանսի բոլոր կարևոր բանաձևերը, ընդգծում է, որ «Եղվեստիա» թերթի հրատարակմանը պետք է ձեռնարկել շափականց զգույշ:

Եպրիլի 22-ից շուտ: Լենինը, Ն. Կ. Կրոպսկայայի հետ միասին, պարիզում այցելում է Ա. Օ. Սպանգարյանի հորը, շատաքրքրվում էաքվում նրա որդու ձերբակալության մանրամասնություններով:

Մարտի 22: Լենինը Բեռլին՝ Ա. Ա. Տեր-Հովհաննիսյանին գրում է նամակ, հազորդում Բաքվում Սուրեն Սպանգարյանի ձերբակալության և նյութական ծանր զրույժան մասին ու խնդրում կազմակերպել նրան և սարիզում ապրով հորը օգնություն ցույց տալու, խնամելու գործը:

Խոյեմբերի 4-ի և 10-ի միջև: Լենինը Վիեննա՝ Վ. Վ. Տրոյանովսկուն՝ Բաքելի կոնգրեսում ՌՍԴԲԿ բոլշևիկյան կազմակերպության խնդիրների մասին նամակում խնդրում է այն ուղարկել Յուրիի Բաքելի կոնգրեսում ՌՍԴԲԿ բոլշևիկյան պատվիրակության անդամ Ա. Ա. Բեկզադյանին:

1913

Մայիսի 28: Լենինի հանձնաբարությամբ Ն. Կ. Կրոպսկայայն Բեռլին՝ Վ. Ա. Կասպարովին ուղղված նամակում գրում է, որ Վ. Ի. Լենինը համաձայն է նայել հասցեատիրոջ հոգվածը ազգային հարցի վերաբերյալ, խնդրում է ուղարկել նոր հասցեներ՝ Բաքու և Գոնի Ռոստով նամակներ գրելու համար, շնորհակալություն է հայտնում Ա. Գ. Շահումյանի, Ա. Ա. Ենուկիձեի հասցեներն ուղարկելու համար:

Մայիսի 28-ի և հունիսի 2-ի միջև: Լենինը ստանում է Բաքվի և Գոնի Ռոստովի հասցեներ պարունակող Վ. Ա. Կասպարովի նամակը:

Հանիսի 1: Լենինը նամակ է գրում Բեռլին՝ Վ. Մ. Կառավարովին: Ստանում է փաթեթ՝ ազգային հարցի վերաբերյալ Կասպարովի հոգվածով և նամակ, որով նա խնդրում էր այն խմբագրել: Լենինի հանձնարարությամբ ն. Կ. Կրուպսկայան Բեռլին՝ Կասպարովին գրած նամակում հաղորդում է, որ ստացվել է նրա հոգվածը, խնդրում է ուղարկել քաղաքական աքսորյալների հասցեները՝ քաղբանարկալներին և աքսորյալներին օգնություն ցույց տվող Կրակովյան միության կողմից նրանց օգնելու համար, և Գ. Կ. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Սպանդարյանի, Ա. Ա. Բեկկադյանի հասցեները: Նամակում Կրուպսկայան խնդրում է իրեն տեղիկացնել «Էռլշ» թերթի մասին և հաղորդում, որ Բարդից ու Գոնի Խոստովից ստացված հասցեներով արգեն ուղարկված են:

Հանիսի 5-ի և 9-ի միջև: Լենինը Վ. Մ. Կառավարովին գրած նամակում հաղորդում է, թե ստացել է ազգային հարցի վերաբերյալ հոգվածը, ցուցում է տալիս, թե այն ինչպես փոփոխել, խնդրում է դանել և վրացերենից ռուսերեն թարգմանել ն. Ե. Փորզանիայի (Կոստրով) հոգվածները Ս. Տ. Արկումեգի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքի Գ. Վ. Պլեխանովի նախարարի, Հեղեմոնիայի պլեխանովյան պաշտպանության դեմ:

Հանիսի 7: Լենինի հանձնարարությամբ ն. Կ. Կրուպսկայայան Բեռլին՝ Վ. Մ. Կառավարովին նամակ է գրում, շնորհակալություն հայտնելով Պետերբուրգի մասին տեղեկություններ ուղարկելու համար, խնդրում է նամակ դրել Գ. Կ. Օրջոնիկիձեին և օգնություն ցույց տալ սոստովցի ընկերներին:

Հանիսի 10-ից շուտ: Լենինը նամակ է գրում Աստրախան՝ Ս. Գ. Շահումյանին:

Օգոստոսի 2: Լենինը հոռագիր է ուղարկում Ա. Ա. Բեկկադյանին՝ Ա. Բերելի մահվան առթիվ ցավակցությամբ:

Օգոստոսի 5-ից ուշ: Լենինը ստանում է Ա. Ա. Բեկրադյանի
Գրելլենից ուղարկված նամակը:

Օգոստոսի 11: Լենինը Աստրախանից ստանում է Ս. Գ. Շա-
հումյանի 1913 թ. հունիսի 10-ի նամակը, որում Շա-
հումյանը հայտնում էր Լենինից ու Կրուպսկայայից
ստացած նամակի մասին: Նամակը պարունակում է
տեղեկություններ «Պրավդա» թերթում և Աստրախա-
նում տիրող դրության մասին:

Լենինը Աստրախան՝ Շահումյանին գրած նամակում
հայտնում է, որ ստացել է նրա 1913 թ. հունիսի 10-ի
նամակը, խնդրում է նյութեր ուղարկել ազգային հար-
ցի և Անդրկովկասի ազգությունների վիճակագրության
մասին:

Օգոստոսի 12: Լենինը Վ. Մ. Կասպարովին ուղղած նամա-
կում խնդրում է Պետերբուրգից ուղարկել «Սևերնայա
պրավդա», «Նովայա ռարոշայա գաղետա», «Նալ պուտ»
թերթերը:

Օգոստոսի 14: Լենինի հանձնարարությամբ Ն. Կ. Կրուպսկա-
յան Բելյին Կասպարովին գրած նամակում հաջորդում
է, թե Մոսկվայում արհեստակցական միությունների
մեծամասնությունը բոլշևիկյան են, և խնդրում է իմա-
նալ, թե որտեղ է Գ. Կ. Օքսոնիկիձեն:

Օգոստոսի 29: Լենինը Բելյին Վ. Մ. Կասպարովին ուղղված
Ն. Կ. Կրուպսկայայի նամակին արած հավելման մեջ
խնդրում է Պետերբուրգ՝ Ա. Ս. Ենուկիձեին գրել, որ-
պեսզի իրեն ամեն օր ուղարկեն «Նովայա միսլ» և
«Նովայա ռարոշայա գաղետա» թերթերը:

Օգոստոսի 30: Լենինը Կրակով՝ Յա. Ս. Գանեցկուն ուղարկած
նամակում խորհուրդ է տալիս, եթե հասցեատերը լինի
Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության
ենայի համագումարում, Հանդիսի ԲՍԴԲԿ ներկայա-
ցուցիլ Ա. Ա. Բեկրադյանի հետ և վերջինիս ծանո-
թացնի Ա. Պանեկուկի, Ֆ. Մերինգի ու մյուս ձախերի
հետ:

Ըղոստովի 31: Լենինը զրում է նամակ (գերմաներեն) Բեռլին՝ Գերմանական ս.-դ. կուսակցության արխիվարիուս Մաքս Գրունվալդին, խնդրելով թույլ տալ վ. Մ. Կասպարովին՝ աշխատել իշխան Ի. Գ. Բենբութովի հրմանը սուսական սոցիալ-գեմոկրատիայի արխիվում:

Սեպտեմբերի 2: Լենինի անունով ենայից ստացվում է Ա. Ա. Բեկլազյանի 1913 թ. սեպտեմբերի 2-ի նամակը, որով վերջինս հազորդում էր, թե իրեն՝ որպես ՌՍԴԲԿ ներկայացուցչի, ողջույնի խոսք չեն տվել Գերմանական սոցիալ-գեմոկրատական կուսակցության ենայի համագումարում, խոզում է հետագա անելիքի մասին խորհուրդ տալ:

Սեպտեմբերի 3: Բեկլազյանը ենայից՝ Լենինին ուղարկած նամակում հազորդում է իր զրույցի մասին Գերմանական ս.-դ. կուսակցության համագումարի նախագահության նախագահ։ Ֆ. Էրերտի հետ, որը Բեկլազյանին ձայն էր տվել ողջույնի խոսք ասելու։ Բեկլազյանին մեկ այլ նամակում հազորդվում է Ա. Լյուբանմբուրգի և Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-գեմոկրատիայի զինավոր վարչության ելույթների կապակցությամբ ՌՍԴԲԿ Կենտկոմի հայտարարությունը ֆրանսերեն լիզվով թարգմանելու մասին։

Սեպտեմբերի 7-ից ոչ: Լենինի անունով Աստրախանից ստացվում է Ա. Գ. Շահումյանի 1913 թ. սեպտեմբերի 7-ի պատասխան նամակը։

Հոկտեմբերի 7-ից ոչ շուտ: Լենինը նամակ է զրում Վ. Մ. Կասպարովին։

Նոյեմբերի 15-ի և 23-ի միջև: Լենինը ստանում է Ա. Գ. Շահումյանի նոյեմբերի 15-ի նամակը, որում շարադրված էին նրա հայացքները ազգային հարցի մասին։

Նոյեմբերի 23: Լենինը Ա. Գ. Շահումյանին նամակ է զրում՝ նվիրված ազգային հարցին։

Դեկտեմբերի 24: Լենինը Վ. Մ. Կասպարովին գրած նամա-

կում Հազորդում է առաջիկայում թեոլին ժամանելու
մասին, պայմանավորվում է հանդիպման համար:
Տարվա վերջ՝ Լենինը գերմաներեն գրում է Վ. Մ. Կասպարո-
վի բեռլինյան հասցեն:

1914

Հունվարի 29-ից ոչ: Լենինը Վ. Մ. Կասպարովին ուղած
նոմակում խնդրում է պարզել իրեն «Յորվերտո» թեր-
թի ստարումը դադարեցնելու պատճառը:
Փետրվարի 19-ից ոչ: Լենինը ստանում է Վ. Մ. Կասպարովի
պատասխան նամակը:

Մարտի 15-ից ոչ: Լենինը Ենիսեյի նահանգից ստանում է
Ա. Ա. Սպանգարյանի նամակը, որով նա հազորդում է
արսորավայրի կյանքի մասին, խնդրում տեղեկու-
թյուններ հայտնել կուսակցության գործերի, լիկի-
դատորների գեմ մզվող պայքարի բնթացքի մասին:
Մարտի 29-ից շուտ: Լենինը նամակ է ուղարկում Ցյուրիխ՝
Ա. Ա. Բեկկապյանին:

Մարտի 29-ից ոչ: Լենինը Ցյուրիխից ստանում է Ա. Ա. Բեկ-
կապյանի նամակը:

Ապրիլի 17-ից շուտ: Լենինը նամակ է գրում Ա. Գ. Շահում-
յանին՝ ի պատասխան ազգային հարցի մասին բա-
նաձևի նրա քննադատության:

Ապրիլ: Լենինը Բարվից՝ Շահումյանից ստանում է նամակ
նավթահանքերում բանվարների տրամադրության մա-
սնի, ազգային հարցի շուրջը զրբույկի վրա աշխատան-
քի և ազգային կուտուրական ավտոնոմիայի մասին
հայերեն զրբույկին ավարտելու վերաբերյալ:

Մայիսի 6: Լենինը Բաքու՝ Ա. Գ. Շահումյանին գրած նամա-
կում առաջարկում է «Պրոսվեչենին» հանդեսում տալ
հեղինակային հազորդում կամ նրա «Ազգային-կու-
տուրական ավտոնոմիայի մասին» զրբույկի շա-
րադրանքը, ներկայացնում է «կուտուրա-ազգային ավ-
տոնոմիայի» կողմնակիցների գեմ պայքարի պլանը և

աղգերի իրավահավասարության ու ազգային փոքրամասնությունների իրավունքի պաշտպանության մասին օրենքի իր մշակած նախագծի բովանդակությունը:

Մայիսի 30-ից ոչ: Լենինը Բարվից ստանում է Ա. Գ. Շահումյանի նամակը:

Հունիսի 20-ից ոչ ոչ: Լենինը ԽՍԴԲԿ Կենտկոմի հանձնարարությամբ նամակ է ուղարկում Ի. Յ. Պոպովին, Մ. Յ. Վլադիմիրսկուն և Ա. Ա. Բեկգազյանին, առաջարկելով մանել Միջազգային սոցիալիստական բյուրոյի բրյուսելյան «միավորից» խորհրդակցության ԽՍԴԲԿ Կենտկոմի պատվիրակության կազմի մեջ:

Հունիսի վերջը: Լենինը Յյուրիից ստանում է Ա. Ա. Բեկգազյանի նամակը, որում հայտնում է Բրյուսելի խորհրդակցության մեկնելուց իր հրաժարվելու պատճառների մասին:

